

ԲԱԳԻՆ

ԺԳ. ՏԱՐԻ-1975 ՄԱՐՏ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Թ. ԴԱՌՅԵԱՆ	Սարգս
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Նիւ Եսրֆ Եւ դարձ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տարակոյսի Ակուբից
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Երկու սուրի միջեւ
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Abortion
Յ. ՕՇԱԿԱՆ	Մաքիկ Մելիքիսանեան
* * *	Թարգմանչական չարչարանք
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ	Բարոյագիտական շեշտը փիլիսոփայութեան մէջ
ՌԻՆՍԻ ԷԼ-ՀԱՃ	«Բագին»ի գրոյցը Ռոնտի Էլ-Հաճի հետ
Լ. ԼԱՊԷՅ	Գրողներու ճակատագիրը յեղափոխութիւններու ընթացքին (Խայացուց՝ Ք. Ճինպաշեան)
Պ. Ս.	Ռ. Դաւոյեանի «Մեղրաճաց»ը
Բ. Փ.	Ա. Միլլըրի «Վաճառորդի մը մահը» Քատերակին բեմադրութեան առիթով
Ս. Կ.	Ռ. Սարոյեանի «Ձեր կեանքին ժամա- նակը» Քատերակութեան բեմադրութիւնը
* * *	Մ. Աւետիսեանի մահը
* * *	Անփոխարինելի (Բ.)
* * *	«Ալեք Մանուկեան» գրական մրցանակին կոչը
* * *	«Գ. Մելիտինցի» գրական մրցանակին կոչը



Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Փ. Գ. ՊԱՐԻ, ՔԻՒ Ց

Մ Ո Ւ Ց 1 9 7 5

ԳԼՅՐՈՒԹ

ՍԱՐԴԸ

Իր շորհորչ հատորին հոգ, Ռազմիկ Դաւոյան հայրենի մամուլին մէջ հանդէս եկաւ բանաստեղծութիւններու նոր շարքերով, որոնց իրենց հետ թերին նորանոր ապրիք՝ ի մասին երիտասարդ բանաստեղծին «Շուշ տարանդին եւ հեղուկէսէն զգուշալուստը արուեստին»
 Ստորեւ մէկը իր նոր բանաստեղծութիւններէն, ու աւելի սեզին զբախտական ժը՝ իր վերջին հատորին մասին:

Մեր անձում բարեկամները
 ոստայն են հիւսում մեզ համար.
 անձում
 եւ անտրտունը,
 նոյնիսկ ձայն չեն հանում,
 որ չխախտուի իրենց անդուլ սեւեռումը:
 Մեր անձում բարեկամները,
 Սեւեռում բարեկամները,
 ամէն օր եւ ամէն ժամ
 ոստայններ են հիւսում մեր մտքերի համար:
 Իրենց բարակ, փխրուն ոտքերին օրորուելով,
 փափուկ, ինչպէս մութը՝ բռան մէջ նզմուած,
 եւ բռան մէջ նզմուած մութի նման տձու,
 նրանք Լոյսի միջով քայլում են լուս, անձայն,
 եւ մեր շուրջը
 փափուկ
 ոստայն են յօրհնում՝
 իրենց մաղձը երկրին հոլովելով՝
 իրրու փափուկ մետաքս:
 Իրրու մի բան,
 որի աւերման մէջ անգամ
 ձայնի նշոյլ չկայ:
 Եւ այդ սարդիկ տեսայ քարերի մէջ:
 Լուսնի լոյսը, այդ պաղ ջերմութիւնը,
 այդ մտերմիկ, փափուկ հայեացքը կէսգիշերին,
 որ եւ



digitised by ARARAT

սկսել եմ սիրել՝
 իբրև միակ մահուր ժառանգութիւն
 իմ խեղճ
 ապ ու պապից,
 Լուսնի լոյսը ահա, որ կարող է մերուել
 հողին, քարին, քփին,
 մութին անգամ,
 լրիւ անջատուած էր այդ սեւ անիրաւից-
 նա մտել էր Լուսնի սահմանները՝ ասես
 միայն նրա համար,
 որ ինձ ցոյց տայ՝ ինչպէս
 կարելի է անցնել ուղիղ Լոյսի միջով
 եւ չկպչել Լոյսին:
 Կարող է եւ փոքր-ինչ զաւելտական հնչել, —
 սակայն այդ սարդուկի սուգանալը անձայն
 իջել էր յատակը Լուսնի ներմակ ծովի
 եւ սահում էր ինչ-որ տարօրինակ, անդէմ
 տարածութեան խորքում. —
 Այս խօսքերով, ահա, ես չեմ ուզում ասել
 թէ ՍԱՐԴ ԶԿԱՅ,
 նրա գոյութիւնը
 ես չեմ հերքում,
 ոչ էլ ուզում եմ ես,
 որ դուք այդ սարդուկին նմանեցնէք
 ձեր շուրջն ապրող մարդկանց,
 ոչ էլ ուզում եմ ես,
 որ անէծքով բանաք
 օրհնակների համար
 կարօտների անդուլ սպասումից
 ձեր շուրքերը նախձ,
 ոչ էլ ուզում եմ, որ այս բոլորը յանկարծ
 համարէք խենթ կատակ,
 ոչ էլ ուզում եմ, որ
 ինձ հաւատաք:

Բայց սարդը կայ
 եւ դեռ իր պատեանում
 անծայր ու անսահման սարդոստայն է մանում:
 Նա մեր շուրջը
 փափուկ
 ոստայն է յօրինում
 սեւեռումով ագահ
 իրեն մազձը երկրին հոյովելով,
 իբրև փափուկ մետաքս,
 իբրև մի բան,
 որի աւերման մէջ անգամ
 ձայնի նշոյլ չկայ:

ԲԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՆԻԻ ԵՈՐՔ ԵՒ ԴԱՐՁ

— Ջո՛րջ, անցնենք դործի, — ասաց gunmanը։
 Քահանան տեղում անհանդիսա շարժում կատարեց։
 Կամուֆե՛ն այդ նկատեց եւ հարցրեց։
 — What happened, father?
 — Ես հայր չեմ, — ասաց քահանան։
 — Հապա ո՞վ էք, — հետաքրքրուեց կամուֆե՛ը։
 — Reverent,
 — Տարբերութիւն կո՞յ։
 — Կայ, — պատասխանեց քահանան։
 — Լաւ, — նրան ծաղրեց կամուֆե՛ը եւ նայեց զեղեցկուհու ամուսնու կողմը, — հէ՛յ, կարծիր տարատաւոր, այստե՛ղ արի։
 Կարծիր տարատաւորը թղթի պէս ճերմակեց եւ առանց այն էլ նրա գորչ աչքերը էլ աւելի գորչացան ու պողեցին։ Նա նայեց իր կնոջ կողմն այնպէս, որ կարծես նրանից օգնութիւն խնդրեց։
 — Ե՞ս, — հարցրեց նա։
 — Այո, գուշ, էլ ո՞վ կայ այստեղ կարծիր տարատաւոր։
 Կարծիր տարատաւորը կամ Դիկը, ինչպէս որ նրա կինը կանչեց նրան, նա նորից նստեց տեղում։
 — Ելի՛ր ու արի, — ատրճանակի փողը նրա վրայ պարզեց կամուֆե՛ը։
 — Դիկ, օ՛, Դիկ, — անմխիթար մրմնջաց նրա կինը։
 — Հէ՛յ, կարծիր տարատաւոր, ինչքա՞ն պէտք է քեզ սպասեմ, — շատ բարկացաւ կամուֆե՛ը։
 Կարծիր տարատաւորը կամ Դիկը, ինչպէ՛ որ նրա կինը կանչեց նրան, ձեռքը տարաւ դէմքին, աջորեց ճակատն ու քթի վերեւի մասն ու մի քիչ մտածեց։ Մենք, ամէնքս նրան էինք նայում ցաւակցութեամբ, որովհետեւ չգիտէինք, թէ կամուֆե՛ը, որի ձեռքում էր գտնուում մեր բոլորի կամ մեզ-նից ոեւէ մէկի լինել-չլինելու որոշումը, ինչ է անելու նրա հետ։
 Ինձ նստարանակից, երկար ժողերով տղան ինձ ասաց կամացուկ։
 — Մեծ ճանապարհների վրայ, պէտք չէ ուրիշներից տարբեր հա-պուստ հագնել, եւ ոչ էլ զեղեցիկ ու երիտասարդ կնոջը հետը քարշ տալ...
 — Դուք կարծո՞ւմ էք, — ուզեցի հարցնել։
 Բայց այն ժամանակ, Դիկը երկու ձեռքով բռնելով իր աթոռի բազ-րիկներէրից ոտքի ելաւ։ Ուրի՛ ելաւ նա, չկերաւ, չխմեց ու իմ կողմը նայեց։ Եւ ես նրա հայեացքում, ինչպէս բաց պրքում, մեծ դրպարտութիւն կարդա-ցի իմ հասցէին։
 — Hey, buddy-buddy, — ինձ թուաց, թէ իր հայեացքով ասաց նա ինձ, — վերջապէս դու քո նպատակին հասար։ Այս banditը ինձ կան-

չուժ է սպանելու համար եւ ես գիտեմ, որ ես հազիւ այս հանրակառքի յա-
տակին թաւալած դու պիտի գնաս նստես իմ կնոջ կողքին, որին ես իր ծը-
նողներէն գնեցի եւ հարիւր հազար դոլարի մի ձեռնէրով: Բայց դու ձրիա-
բար պիտի շոյես նրա թեւերը, լեցուն ծնկածալքերը, աննման սրունքները,
ծանր դիտերը եւ երբ նիւ Եորթ հասնէք, նա քեզ մեր բնակարանը պիտի
տանի, ուր դու պիտի խմես Փրանսական իր թանկանոց խմիչքները, բազ-
մոցի վրայ ըով ըով նստած՝ դուք պիտի լսէք շաւկայնն երաժշտութիւն
եւ... եւ յետոյ...:

Այդտեղ նա ինձից հեռացրեց իր հայեացքը: Սակայն եզածն էլ շատ-
շատ էր ինձ անհունօրէն վիրաւորելու համար: Իմ վերաբերեալ նրա հայ-
եացքում դրոշմուած մեղադրական կէտերից ոչ մէկը ճիշդ չէր: Ո՛չ մէկը:
Ես չէի ուզում, որ նրան սպանէր այդ յելուզակը, եւ եթէ սպանելու
լինէր անգամ, ես նրա կնոջ կողքին չպիտի նստէի, եւ չպիտի շոյէի նրա թե-
ւերը, սրունքները եւ լաւ դիտերը... Եւ երբ նիւ Եորթ հասնէինք, ես նը-
րանց բնակարանը չպիտի գնայի (եւ այդ հաստատ էր) եւ չպիտի խմէի նը-
րանց Փրանսական թանկանոց խմիչքները եւ չպիտի լսէի շաւկայնն երա-
ժշտութիւն... Հետեւապէս բանսարկութիւն էր կարմիր տաքատաւորի տոյն
կնթադրութիւնը, թէ ես պիտի անէի նաեւ այն, որի մասին նա շատաց...:

Գի՞ժ էր այդ մարդը, ինչ էր:

Մինչ ես ճգնում էի սթափուել կարմիր տաքատաւորի ինձ հոսքրած
մտովի վիրաւորանքից, իսկ նա նեղ միջանցքի երկու կողմերի նստարաննե-
րի բարձր յենակներից բռնելով դէպի յելուզակն էր քայլում յամբօրէն, երբ
կանգնեց եւ կանգնած տեղից օղնութիւն աղերսեց.

— Վարորդ, օգնի՛ր ինձ, — լացակումած խնդրեց գեղեցկուհու ա-
մուտինը:

Վարորդը ձայն չհանց:
— Reverent, օգնեցէ՛ք ինձ, — վարորդից քահանային անցու նա:
Քահանան աչք չթարթեց:

— Տղամարդիկ այս հանրակառքի, օգնեցէ՛ք ինձ, — մեզ, մօտ քսան
հոգի, տղամարդկանցս դիմեց երիտասարդը:

Մենք ցոյց տուեցինք, թէ մեր ականջները ծանր են լուսւմ եւ ոչինչ
չլսեցինք նրա ասածից: Այն ժամանակ, նա սկսեց հեկեկալ:

Ծելուզակը կանգնել էր ոտքերը լայն բացած եւ այնքան հաստատուն,
որ թուժ էր, թէ ոտքերի թաթերը խրել էր հանրակառքի յատակում: Նրա
դէմքում արհամարհական ժպիտ կար, կացութեան տիրող ինքնահաւան
փայլ եւ թատրոնախաղից ստացուած բաւականութիւն: Այդ այն ժամանակ,
երբ մենք ամէնքս, հաստացած էինք, որ նա կարմիր տաքատաւորին կան-
չում է սպանելու համար:

Սակայն, ես կարծում եմ, սպանութեան մասին աւելի շատ հաւա-
տացած էր կարմիր տաքատաւորի կինը, որը շարունակում էր լաց լինել եւ
կնոջից էլ աւելի հենց ինքը՝ կարմիր տաքատաւորը, որը հասնելով կան-
մէնին, ձեռքերը տարաւ գրպանները, դուրս հանեց բոլոր դրամները եւ
պարզեց նրան՝ ասելով.

— Ա՛ռ, ամբողջ ունեցածս այս է...
— Հանի՛ր գլխարկդ, — առանց դրամների վրայ ուշադրութիւն դար-
ձընելու հրամայեց կանմէնը:
— Ինչո՞ւ:
— Հանի՛ր գլխարկդ...

— Ես գիտեմ, թէ ինչու: Դու ուզում ես իմ դանկին կրակել եւ կարծում ես, որ գլխարկս կը դանդաղեցնի գնդակի թափը:

— Հանի՛ր գլխարկդ...

— Եթէ դու չես հասցէն տաս, ես Նիւ Սորթ հասնելու պէս նոր դրամ կ'ուղարկեմ: Ասա՛, ասա՛, ուր ասես ես այնտեղ էլ կը դնեմ դրամը... Ինչքան ես ուզում...

— Հանի՛ր գլխարկդ...

— Ո՛չ. — թեւնոցով քիթը սրբեց կարմիր տաբատաւորը:

— Զորջ, վերցրու սրա գլխարկը, — հեզը պատանուն հրամայեց կանմէնը:

Զորջը, որ անգործութեան ծանծրանում էր, ձեռքը տարաւ դէպի կարմիր տաբատաւորի գլխարկը: Բայց վերջինը գլուխն այս ու այն կողմն շարժեց.

— Ո՛չ, ո՛չ...

Նա շատ էր հաւատացած, որ գլխարկը հանում են՝ գանկին կրակելու համար:

Զորջը շուարեց եւ իր մեծաւորին նայեց: Յելուզակը ծիծաղեց.

— Ա՛հ, Զո՛րջ, Զո՛րջ...

Զորջը հասկացաւ եւ դանակը դէմ աւելով կարմիր տաբատաւորի կողքին, վերցրեց նրա գլխարկը:

— Ի՞նչ անեմ այս, Վիլի՛, — հարցրեց նա յելուզակին:

Այստեղ մենք իմացանք, որ կանմէնի անունը Վիլի էր:

— Գլխարկը յետ տուր իրեն եւ հրամայիր, որ իր բոլոր դրամները դնի գլխարկի մէջ, — ասաց Վիլին:

Կարմիր տաբատաւորը կամ Դիկը, ինչպէս որ նրան կանչեց նրա կինը, վերցրեց գլխարկը, գազաթը վար կպցրեց կրծքին եւ իր ձեռքի պէրամեններն իր ձեռքով դրեց իր գլխարկի մէջ: Զորջն օգնեց նրան եւ խուզարկելով նրա բոլոր գրպանները, թաքնուած տեղերից նոր դրամներ գտաւ եւ լեցրեց գլխարկի մէջ:

— Սեղմիր, որ դրամները քիչ տեղ բռնեն, — Դիկին կարգադրեց Վիլին:

Դիկը սեղմեց եւ գլխարկը շաքարազլխի ձեւ ստացաւ:

— Եթէ չես ուզածը գլխարկս էր եւ դրամս, ինչո՞ւ նախապէս շատացիր, — այլեւս հին ծանօթի պէս յելուզակին ասաց Դիկը:

— Մի կանմէն չի ասում, այլ միայն հրամայում է, — պատասխանեց Վիլին, եւ իմ նստարանակցի կոծող նայելով ասաց, — Հէ՛յ, կարմիր մազաւոր, այստե՛ղ արի:

Նստարանակիցս ելաւ եւ ուղտի պէս լռք-լռք տալով դնաց:

Վիլին վերցրեց մեր շարքի առաջին նստարանի վրայ իր կնոջ հետ նստած մի ծերունու գլխարկը, տուեց երկար մազերով տղային եւ ասաց, — դու ինձ հետ կը գաս, — ապա դառնալով Զորջին բացատրեց, — աջ շարքը քոնն է, ձախը՝ իմը: Դու արդէն չես օգնականն ունեւ: Ակսի՛ր...

Զորջն անմիջապէս դործի անցաւ եւ դիմեց իր շարքի առաջին նստարանի վրայ նստած երկու կանանց.

— Հանեցէ՛ք ձեր դրամները:

Կանայք շտապով բացին իրենց դրամապանակները եւ դրամները տուէցին Զորջին: Վերջինը վերցրեց եւ լեցրեց կարմիր տաբատաւորի գլխարկի մէջ եւ անցաւ երկրորդ նստարանին: Դիկը կամ կամ իր տաբատաւորը հետեւեց նրան:

Վիլին մինչեւ մեր շարքի դրամները հաւաքելը, դարձաւ եւ վարորդին բարձր-բարձր ազդարարեց, որ առանց թոյլտուութեամբ հանրակառքը կանգնեցնելու դէպքում մէկ կամ երկու գնդակ կը ստանայ իր գանկին: Նա վերջում հարցրեց, թէ արդեօք հասկացա՞ւ իր ասածը:

— Yes, Sir! — Հնազանդօրէն պատասխանեց վարորդը, առանց գլուխը դարձնելու:

— O.K. — ասաց Վիլին եւ դառնալով այն ծերունուն, որի գլուխարկն արդէն բռնագրաւել էր, կարգադրեց, որ դրամները հանի ու լիցնի իր իսկ ղլխարկի մէջ:

Ծերունին կնոջը նայեց, իսկ նրա պատուը քաջ ու կտրուկ ասաց Վիլին.

— Մենք դրամ չունենք: Ամենեւին չունենք: Փաստ է, որ ամուսինս ծեր է եւ չի աշխատում:

— Կառավարութիւնը հարկ հաւաքում է ձեզնից, — հարցրեց Վիլին:

— Կառավարութիւնը կարող է միայն ամուսնուն եւ իմ սփրացաւերը հաւաքել, — ասաց ծեր կինը:

Ծերունին ծիծաղեց դառնօրէն: Ծիծաղեց նաեւ Վիլին, եւ անցաւ երկրորդ նստարանին:

— Հանեցէք ձեր դրամները...

Ես նկատեցի, որ ո՛չ Զորջը եւ ո՛չ էլ Վիլին իրենց գոհերին չէին խուզարկում, հաւատում էին նրանց, միայն պահանջում էին, որ նրանք իրենց ոտքերը մէկ ակնթարթ կարեն յատակից:

«Եթէ ես սենեակիս վարձը դատած եւ առանձին պահած լինէի, կարող էի փրկել կողոպտարից», — դառնօրէն մտածեցի ես:

Այդ ժամանակ, Վիլին հասաւ քահանայի նստարանին.

— Զեր դրամները...

— Հոգեւորականներին էլ էք կողոպտում, — հարցրեց քահանան:

— Տարբերութիւն չկայ: Ես հաւատացեալ չեմ:

— Այդ գէշ է ձեզ համար: Սակայն այդ մասին չխօսենք: Ես ունեմ միայն քառասունվեց զոյար, — ասաց քահանան եւ ձեռքը տարտի գրպանը տարաւ ու հանեց գրամը, — բայց խնդրում եմ հաւատաք, որ ես, կինս եւ փոքրիկ երեխոս սխալմամբ ենք այս հանրակառքը մտել, մենք պէտք է Ֆիլադելֆիա գնայինք, բայց Նիւ Եորք ենք գնում, ինձ պէտք է այնտեղից Ֆիլադելֆիա տոմս առնել...

— Պահեցէք ձեր դրամը, — ասաց յերուզակը եւ մօտեցաւ իմ նստարանին:

— Վիլի, այս տիկինն իր դարդարանքները չի ուզում յանձնել, — իր շարքից գանգատուեց Զորջը:

Վիլին ինձ թողած, գնաց Զորջի մօտ.

— Ա՛հ, տիկին, ինչո՞ւ էք մեզ նեղութիւն պատճառում, — գանգատուեց նա:

— Այս մարգարիտները կեղծ են, — լուեց կնոջ ձայնը: Ես նայեցի այն կողմը եւ տեսայ, որ մարգարիտներ չյանձնողը գեղեցկուհին էր, կարծիք տարատուորի կինը:

— Արձակեցէք եւ սուէք ինձ, — հրամայեց Վիլին: Գեղեցկուհին արձակեց մարգարիտների շարանը եւ սուեց յելուզակին:

Վիլին վերցրեց եւ մէկ հատիկ մարգարիտ գրեց ատամի տակն ու ծը-

նօսները սեղմեց իրար: Նրա այդ սեղմումից այնպիսի ձայն լսուեց, որ թուաց, թէ նա ապակի ծածեց:

— Ա՛հ, — բարկացաւ նա եւ սկսեց սպիտակ ապակու վրանքներ թքել, — թո՛ւհ, թո՛ւհ... վերցրէ՛ք, վերցրէ՛ք...

Նա ուզում էր իմ կողմը դալ, բայց յետ դարձաւ:

— Ոտքի՛ ելէք:

Գեղեցկուհին ոտքի ելաւ:

— Ի՞նչ պատահեց:

Յելուզակն անմիջապէս շարժուեց, այլ սկսեց դեղեցկուհուն դիտել տարփանքով:

— Ձեր աժուխներ ձեզ հե՞տ է...

— Այո:

— Ո՞վ է:

Գեղեցկուհին գլխով ցոյց տուեց կարմիր տաբատաւորին, որ Ջորջի հետ մի քիչ յետ էր կանգնած: Վիլին չըջուեց եւ կարմիր տաբատաւորին հարցրեց հեզնանքով:

— Դո՛ւ ես այս գեղեցկուհուն աժուխներ:

— Այո:

— Դու վախկոտ մէկն ես: Դու արժանի չես նրան:

— Ես քեզ վախկոտ եմ թւում, որովհետեւ քեզ նման զինուած չեմ, — ասաց կարմիր տաբատաւորը:

— Բայց դու ձեռքեր ունեւ, եւ ուժ՝ քո բազուկներում, — ասաց յելուզակը եւ չըջուեց դէպի գեղեցկուհին, — Ի՞նչ է ձեր անունը:

— Ֆէննի...

— Ֆէննի, թողէք ձեր ամուսնուն, որը ձեզ կեղծ մարգարիտներով է զարդարում, եւ ինձ հետ եկէք, ես ձեզ ոսկու մէջ կը պահեմ...

— Ո՛հ, — ասաց Ֆէննին եւ դուրսն օրորեց բացասական:

— Ինչո՞ւ ոչ:

— Որովհետեւ ես չեմ կարող ամէն մարդու հետ ապրել...

— Oh, ya!, — ծաղրեց ուլազակը:

— Yes, — լուրջ ու հաստատ պատասխանեց Ֆէննին:

— Ես ճանաչում եմ կանանց: Դուք սուտ էք խօսում, — կատաղած դարձաւ ուլազակը:

— Դուք ճանաչում էք միայն ձեր կողմից ճանչցուած կանանց, — ասաց Ֆէննին եւ նստեց:

— Ջորջ, շարունակիր հաւաքել դրամները, — օգնականին կարգադրեց յելուզակը եւ կարմիր տաբատաւորին, առանց պատճառի, շատ կոպտակերպով մի կողմ հրելով ինձ մօտ եկաւ:

Գեղեցկուհուն հասցրած վերաւորանքից ես ինձ տեղ չէի կարողանում գտնել եւ ցանկանում էի հարուածել ստահակին, հաստատ գիտնալով, որ նա պիտի կրակի վրաս:

— Ձեր դրամները, — ասաց նա:

Ես տարատիւ գրպանից հանեցի բոլոր թղթադրամները եւ նետեցի գլխարկի մէջ:

— Ինչքա՞ն էր:

— Հարիւրութուսն դուրսը, — ասացի եւ դէմքս չըջեցի:

— Դուք բարկանում էք, որ ձեր դրամը վերցնում եմ, — հարցրեց նա:

— Ո՛չ:

- Հապա ինչո՞ւ այդպիսի վերաբերմունք:
- Դուք իրաւունք չունէիք մի անպաշտպան կնոջ պատուին դիպչելու,
- ասացի:
- Իսկ պատիւը ձեր դրամների՞, որ ես խլում եմ ձեզից:
- Դրամը պատիւ չունի:
- Նոյնիսկ ա՛յս երկրում:
- Նոյնիսկ ա՛յս երկրում:
- Հա՛, Հա՛, Հա՛, — արհեստական ծիծաղեց նա եւ ատրճանակի փողի ծայրով փայփայելով ուսս, անցաւ յաջորդ նստարանին, — ձեր դըրամները:
- Վիլի, — կանչեց Ջորջը:
- Ի՞նչ է, — բարկացաւ յելուզակը եւ դնաց նրա կողմը:
- Այս կանայք մերժում են իրենց դրամները յանձնել, — դանդաղաւեց Ջորջը:
- Ես յետ նայեցի եւ տեսայ, որ Ջորջի վէճն այն տարատաւոր կանանց հետ էր, որոնք նախազահի նկարն էին կրում իրենց սրտերի վրայ:
- Տիկիններ, ինչո՞ւ էք Ջորջին նեղութիւն պատճառում իր պարտականութիւնների կիրառման մէջ: Չէ՞ որ ես ձեզ ինզրեցի համազործակցութիւն ցուցարհերէ, — ասաց յելուզակը հասնելով ըմբոստներին:
- Տարբոս կանանցից մէկը, երեւի խմբի առաջնորդը, ելաւ տեղից եւ յայտարարեց.
- Մենք first ladyի ստեղծած ամերիկեան քաղաքացիների իրաւունքների պաշտպանութեան կազմակերպութեան անդամներ ենք...
- You don't say! — ծաղրեց Վիլի յելուզակը եւ հարցրեց, — օրինակ ի՞նչ էք անում այդ իրաւունքները պաշտպանելու համար եւ ումի՞ց...
- Օրինակ, ձեր այդ կողոպուտից, — ասաց առաջնորդ պառուրը:
- Դուք ստտիկանութիւն էք:
- Ոչ:
- Բանա՞կ:
- Ոչ:
- Աղդային պահակախո՞ւմք:
- Ոչ:
- Հապա ինչպէ՞ս:
- Ֆրըսք լէյտի անունից խօսելով եւ ընդդիմութեամբ:
- Ընդդիմութեամբ ո՞ւմ դէմ:
- Ձեզ պէս աւազակների:
- Դուք ինձ աւազա՞կ էք անուանում:
- Դժբախտաբար ես չեմ կարող ձեզ անապատական անուանել...
- Այդ ի՞նչ դազան է:
- Գազան չէ, սուրբ մարդ է:
- Սուրբ... Ը... սուրբ, — տնքաց Վիլին եւ ատրճանակի ծայրը տարաւ դէպի քունքը:
- Ասա՛, — ճշացին մի քանի կանայք:
- Սակայն այդ աւելորդ էր, որովհետեւ Վիլին ատրճանակի ծայրով իր քունքը քորեց միայն:
- Այդ մի լաւ trick էր, boss, — ծիծաղեց թարգմանիչ պատանին:
- Հաւատա՛ ինձ, որ trick չէր, լեզուազէտ, — արդարացաւ Վիլին եւ շարունակեց վէճը տարատաւոր տիկնոջ հետ:

Զարմանալի էր այդ յեղուզակի վիճասիրութիւնը: Եթէ նրա օգնական Ջորջը չլինէր, թերեւս նա մոռանար կողոպուտը եւ կանգնէր ու վիճէր ու վիճէր: Տարատ հազած կանանց առաջնորդի հետ նրանք շարունակ մէկ նիւթից միւսն էին անցնում: Տարատաւոր տիկինը Վիլիին վերաւորում էր, իսկ վերջինը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում այդ բանին:

Ջորջն ակներեւ կերպով ձանձրանում էր:

Վիլին նկատեց այդ եւ յանկարծ ձայնի խիստ երանդով հրամայեց.
 — Յանձնեցէ՛ք ձեր դրամները եւ դարդարանքները: Հաւաքի՛ր, Ջորջ: Ապստամբ կանայք վախեցան եւ սկսեցին իրենց ունեցածներն արագ-արագ կարճիք տարատաւորի գլխարկի մէջ լեցնել: Ամէնից առաջ իր դրամներն ու դարդարանքները յանձնեց առաջնորդ տիկինը, աշխատելով շատ սիրալիր լինել աւազակապետի հետ:

Երբ տարատաւոր ու աղաւթին դործիչ այդ կանայք այլևս ոչինչ չունէին յանձնելու, դրանցից մէկը, որը դեռ կարող էր սիրալին նեղ պայմաններում գոնուող մի տղամարդու կողմից նշմարուել, հարցրեց վիճասէր աւազակին.

— Դուք կանանց հողերանութիւն գիտէ՞ք...

Աւազակը մի քիչ մտածեց եւ ապա պատասխանեց տիրութեամբ.

— Ո՛չ: Ես ոչ մի հողերանութիւն չգիտեմ:

— Հենց մեր՝ կանանցս, դժբախտութիւնն էլ դրա մէջ է կայանում, — ասաց տիկինը եւ սկսեց լաց լինել:

— Դուք լաց էք լինում, որ ես հողերանութիւն չգիտեմ, թէ ձեր դրամները համար... Եթէ վերջինն է, ապա, — հարցրեց Վիլին:

— Ո՛չ այս, ոչ էլ այն, — Հեկեկաց տիկինը, — ես լաց եմ լինում ինձ համար, իմ կորցրած երիտասարդութեան համար եւ ներկայիս իմ անհրապոյր ու ձանձրոյթով լեցուն կեանքի համար... Չկայ... Գնա՛ց... Գնա՛ց...

Այդ տարիքոտ կնոջ լացը սովորական լաց չէր, այլ ողբ էր՝ կորցրած երիտասարդութեան համար, եւ բողբոջ՝ ծերութեան դէմ:

Թէև մարդն ապրում է օրից օր ծերանալով, բայց մարդն իր կեանքի առաջին շրջանում այնքան չի դժուար ծերութեան հետեւանքներն, ինչքան իր կեանքի երկրորդ կիսում:

Ծերանալ չի նշանակում միայն ծերանալ, այլ եւ հնանալ, մաշուել: Մարմնապէս կէս արժէք կամ էլ ամբողջովին անարժէք դառնալ կեանքի դժուարութիւնների պայքարում: Հնում, երբ ապրուստի արտադրական միջոցները այնքան ցածր էին, որ ամէն մարդ ինքը պիտի հողար իր եւ շատ-շատ իր երեխաների կարիքները, ծերերին սպանում էին որպէս աւելորդ սպառողներ:

Հին Ճապոնիայում, երբ մի ծեր չէր կարողանում այլևս իր ձեռքով իր ապրուստը հոգալ, այսինքն՝ սպառող թեւ էր դառնում առանց այն էլ կիսաքաղց ընտանիքի համար, ձմրան մի օր նրա որդիներից աւագը շաւղուում էր նրան ու տանում թողնում մի լերան ամալի գաղաթին: Այդտեղ ծերերը պառկում էին եւ դանդաղօրէն մեռնում սովից, ծարաւից, ցրտից եւ միջոցորտային տեղումներից:

Ճապոնիայում ծերերին այդ ձևով սպանելը կենցաղ էր եւ ծերերը չէին վշտանում:

Դեռ այսօր էլ Լսկիմոններն սպանում են իրենց ծերերին, որովհետեւ նրանք ապրում են բնական այնպիսի ժլատ պայմաններում, որ ամէն ոք պարտաւոր է ինքը հողալ իր ապրուստը:

Իայց յանուն ճշմարտութեան, պէտք է ասել, որ այսօրուայ ո՛չ էս-

կիմոյական եւ ոչ «մարդասիրական» երկրներում ծերերին այլեւս չեն սպանում, այլ այդ երկրների բարեգութ կառավարութիւնները նոյնիսկ իրենց պատերազմական ծախսերից կրճատում են եւ ծերերին այնքան խոշակ են տալիս, որ նրանք մէկ օրից միւսը չմեռնեն, այլ աստիճանաբար մեռնեն եւ որքան որ Հնարաւոր է շուտ մեռնեն :

Սակայն լացող կնոջ եւ նրա ընկերուհիների Հագուստ-կապուստից երևում էր, որ նրանք նիւթական կարիքի մէջ չէին գտնուում, այլ ընդհակառակն, որ նրանք ունեւորներ էին, այլ կերպ, ինչպէս իրենք ասացին Ֆըրսթ լէյտի Համաձերիկեան յանձնախմբի անդամներ չէին նշանակուի :

Այս երկրում, եթէ դրամ չունենաս կամ էլ ինչպէս իրենք են իրենց յորջորջում՝ «high society»ի անդամ չլինես, նախազանգական կամ first ladyական յանձնախմբերի անդամ չես նշանակուի : Այդ յանձնախմբերը էութեան մէջ ոչինչ բան են, ջուր են, բայց «պատիւ» են բերում իրանց անդամներին :

Մեր Հանրակառքի այդ տարատաւոր տարիքոտ կանանց խումբը դժբախտաբար ունէր, «պատիւ» ունէր, բայց պուրկ էր ունէրից :

Քանի կինը լաց էր լինում, Վիլին կանգնել էր եւ տխրութեամբ մի անորոշ կէտի էր նայում : Յետոյ նա կարծես քնից արթնացաւ, պոկուեց տեղից եւ շարունակեց կողոպուտը : Հերթը այդ երեք պորտօ-բիկացի աղջիկներին էր հասել : Նրանք էլ իրենց շնչին դուրսերը եւ կեղծ ոսկուց պատրաստուած խոշոր օղերն իրենց փոքրիկ ձեռքերում բռնած՝ Վիլին էին ըստպատմում : Վիլին Հասաւ նրանց, ժպտաց, փայփայեց առաջին աղջկայ կանացի դէմքը եւ դարձաւ դէպի ամենափերջին բնդհանուր նստարանը, դէպի այն պատանին, որն սպաներէն էր սովորել միջնակարգ դպրոցում :

— Հէ՛յ, լեզուադէտ, — ասաց Վիլին պատանուն, — այս երանկ լէյտիներին ասա, որ մեր երկրում անդրերէն լիմացողները շատ դժուարութեամբ են դուրս գալիս բերում, ուստի՝ ես նրանց դրամները չեմ ուզում...

Պատանին ոտքի կանգնեց եւ մեծ դժուարութեամբ թարգմանեց Վիլին ասածները : Բայց պարզուեց, որ լեզուադէտը միանգամայն սխալ էր թարգմանել, որովհետեւ, երբ նա մերթաջրեց իր թարգմանութիւնը, պորտօ-բիկացի աղջիկները գունատուեցին, սկսեցին լաց լինել, դողդոջուն մատներով բացել իրենց ձեռքի պայուսակները եւ ցոյց տալ նրանց պարտնակութիւնները, կրկնելով.

— Como vera, no tenemos mas...!

Մենք բոլորս զարմացել էինք աղջիկների այդ տարօրինակ անդրադարձի վրայ, երբ թարգմանել տղան ելաւ տեղից եւ գիմեց Վիլին :

— Հէ՛յ, բո՛ւ...

— Ատա, լեզուադէտ :

— Ես կարծում եմ, ես սխալ եմ թարգմանել...

— Նորից թարգմանիր, լեզուադէտ :

Տղան հազաց եւ ձայն բացեց :

Աղջիկները այս անգամ նրան լսեցին ուշադրութեամբ եւ իրենց Հերթին հարցեր տուին տղային : Յետոյ նրանք իրենց լացը կտրեցին եւ երեքով միասին վեր թռան իրենց տեղերից, զրկեցին Վիլին եւ սկսեցին Համբուրել նրան, աւելով.

— Bandidos, es usted un hombre luno. Gracias...! Gracias...! Gracias...!

Իրովի այդ գուրգուրանքներից պաճտիքը հպարտացաւ, թեւեւ առաւ եւ հրամայեց պատանուն :

— Հէ՛յ, լեզուազէտ:

— Այո՛, բո՛ւ... — Այս աղջիկներին ասա, որ նրանց վերաբերմունքից ես դաջուած եմ մինչեւ իմ հոգու յատուկը...
 Պատանին սկսեց ծիծաղել:
 — Ինչո՞ւ ես ծիծաղում, — վերաւորուեց Վիլին:
 — Ձեր այդ արտայայտութիւնը շատ պատկերաւոր էր, բո՛ւ...
 — Կարծո՞ւմ ես, — հարցրեց Վիլին:
 — Այո, այո, բո՛ւ: Դուք պէտք է բանաստեղծութիւններ գրէիք, այլ ոչ կամմէնութիւն անէիք:
 — Դու ինձ ծաղրում ես, լեզուազէտ, — թուաց, թէ շոյուեց Վիլիի ինքնասիրութիւնը:
 — Հաստատ, բո՛ւ, Հաստատ: Մեր բանաստեղծական գրականութիւնը մեծ կորուստ է կրում յանձին ձեր վատնած տաղանդին...
 — Get out of here!, — ասաց Վիլին եւ նրանք իրար նայելով ծիծաղեցին:
 Ջորջը նորից սկսեց ձանձուցիլ ցուցաբերել, եւ Վիլին նկատելով այդ, ծօտեցաւ եւ հանրակառքի պատուհանից դուրս նայեց:
 — Նիւ Եորքը դեռ շատ հեռու է, բայց եւ այնպէս շարունակենք, — ասաց նա իր օգնականին:
 Նրանք շարունակեցին իրենց դրամաշաւաքը եւ իրար հանդիպեցին լեզուազէտ պատանու ծօտ:
 — Well!, ինչքա՞ն գրած ունես, լեզուազէտ, — հարցրեց Վիլին:
 — Եստ, բո՛ւ, շտտ, — ասաց պատանին:
 — Դե՛հ, հանիւր եւ լեցրու գլխարկներում:
 — Ինձ մօտ, հիմա մէկ օճնթ չունեմ, բո՛ւ:
 — Իսկ ո՞ւր ունես, — հարցրեց Վիլին:
 — Չպիտի ասեմ:
 — Ինչո՞ւ ոչ:
 — Քո վրայ վատաշուքիւն չունեմ, — ասաց պատանին եւ նորից շրթունքները ցցեց ու բաղի ձագի պէս բերանը բացելով սկսեց ծիծաղել վարակիչ:
 Վիլին էլ ծիծաղեց: Նա գլխարկներից մէկից վերցրեց տասը դոլարնոց մի թղթագրում եւ մեկնեց պատանուն:
 — Ես քեզ խոտացել եմ տասը դոլար քո թարգմանութիւնների համար, ահա՛, վերցրու:
 Պատանին դուրսն օրօրեց մերժողական:
 — Ո՛չ, բո՛ւ, չեմ ուզում:
 — Ինչո՞ւ:
 — Որովհետեւ վերցրել, նշանակում է մատնակցած լինել քո կողմ պուտի՛ն:
 Վիլին ծռայուեց, դրամը նետեց գլխարկի մէջ եւ դիմեց իր օգնականին:
 — Գնանք, Ջորջ:
 Նրանք վերադարձան վարորդի մօտիկ փոքրիկ հրապարակը, ուր Ջորջն իր վերնաշապիկի տակից հանեց մի բաւական մեծ ու սպիտակ տուգրակ, մէկը նրանցից, որոնց մէջ տանտիրուհիները լուացքի սպիտակեղէն են հաւաքում: Ջորջը տուգրակի բերանը բացեց ու ցնցեց: Կարմիր տարա-տաւարն ու իմ նստարանակիցը հասկացան եւ իրենց ձեռքերի գլխարկները

մէջ կուտակուած դրամները դատարկեցին այդ տոպրակի մէջ: Զորջը տոպրակի բերանը կապեց, տոպրակը նետեց ուսին եւ Վիլիին նայեց պատրաստակամ: Նա երեւի վախ ունէր, որ իր մեծաւորը նորից խօսակցութեան կը բռնուի:

Վիլին պատուհանից դուրս նայեց եւ ապա ատրճանակի ծայրը դէմ տուեց վարորդի ուսին:

— Stop the bus!

— Yes, Sir!, — ուրախացաւ վարորդը:

Հանրակառքը կանգնեց, եւ բացուեց դուռը: Նախ իջաւ Զորջը իր հետ տանելով իմ դրամը:

Վիլին, դեռ ատրճանակը ձեռքին մեզ հրաժեշտի երկու խօսք ասաց, որի կարիքը մենք չէինք զգում:

— Ladies and gentlemen!, — ասաց նա, — հաճելի էր ձեզ հետ լինել: Հաստատուէ՛ք: Մենք, պանսիօններս, շատ ենք առանձնացած եւ կարօտում ենք ձեզ պէս խաղաղ մարդկանց հետ կապ ունենալուց: Որպէսզի մի կերպ այդ կարօտ պակասը լեցնեն, ես հիմա ստիպուած եմ հակառակ ուղղութեամբ գնացող մի հանրակառք գրաւել եւ սկսել նոյնը:

Նա նայեց դեղեցկուհի Թէնիին եւ խնդրեց.

— Գնանք ինձ հետ... Եթէ համաձայնես, շէն զղջայ... Քո ամուսինը ոչնչութիւն է...

Թէնիին գլուխը օրօրեց բացասաբար:

Յիշուզակը հառաչեց, եւ ձգուելով մեզ գինուորական բարել տուեց, ալ ձեռքը տանելով քունքին: Յետոյ, նորից նոյն ձեռքը ատրճանակով միասին պահեց վրից կախուած սեւ թաշկինակի մէջ եւ արագ իջաւ աստիճաններից:

Երբ մեր հանրակառքը նորից շարժուեց, աղմուկ բարձրացաւ: Մարդիկ սկսեցին իրենց թաքնուած տեղերից դրամներ հանել եւ հաշուել: Պարզրեց, որ շատերն թաքնուած դրամներ էին ունեցել: Մենակ ես էի, որ ինչ ունէի յանձնել էի այդ աւազակին: Նոյնիսկ քահանան իր յայտարարած քառասունվեց դոլարից բացի, հարիւր դոլար էլ տասնմին էր ունեցել: Եւ նա ծիծաղում էր, ծիծաղում երջանիկ: Այդ առաջին անգամ էր, որ նրա գէմքին ծիծաղ ու ժպիտ էր երեւում:

Ես քրքրեցի բոլոր գրպաններս եւ հաւաքեցի 63 սենթ: Լաւ էր, որ վերադարձի տոմս ունէի, իսկ այդ վաթսուներեք սենթով ես կա՛մ մէկ պինակ ապուր պիտի դնէի կամ էլ մի տուփ ծխախոտ: Իմ ապրած քաղաքում ես կարող էի երկուսն էլ ունենալ, բայց Նիւ Եորքում ամէն ինչ կրկնակի գին ունէր: Եւ ես վճռեցի տեղ հասնելու պէս անմիջապէս վերադառնալ:

Դրամների հաշուումներից յետոյ, ուղեւորները սկսեցին միմեանց պատմել կողոպուտից իրենց ստացած տպաւորութիւնների մասին: Պարզրեց, որ ոչ ոք չի վախեցել: Մի քանի հոգի էլ այնքան առաջ գնացին, որ յայտնեցին, թէ իրենք մտադիր են եղել բռունցքով խփել Վիլիի գլխին, ատրճանակն առնել նրա ձեռքից եւ յետոյ գինաթափ անել Զորջին: Անշուշտ, նման վտանգաւոր ծրագրեր լսելուց յետոյ, ես ամաչում էի, որ ոչ մի նշման ծրագիր չեմ ունեցել, բայց նաեւ ուրախանում էի, որ այդքան շատ անձնուրաց մարդիկ կան աշխարհում, որոնք պատրաստ են իրենց կեանքը վրայ տալ, ուրիշներին փրկելու համար կողոպուտից:

Սակայն, պէտք է ասել, որ ամէնից արտաճմլիկ ծրագիրն էր ունեցել տարատաւոր կանանց խմբի առաջնորդը:

— Ես դիտմամբ էի Վիլիի հետ այդքան երկար վիճում, — ասաց նա,

— որովհետեւ յարմար վայրկեանի էի սպասում, ձեռքիս պայուսակով խփել նրա գլխին եւ շնորհակց կամ էլ աջացի տալ նրա փորին այնքան ուժգին, որ նա ցաւից ատրճանակը նետէր եւ փորի ցաւից կծկուէր: Ես մեծ փորձ ունեմ այդպիսի հարուածների մէջ:

Թէեւ առաջնորդ տիկինը շատաց, թէ որտեղ էր նա ձեռք բերել իր այդ փորձը, բայց մենք հասկացանք, որ նա այդ ձեռով էր վերելի աշխարհն ուղարկել իր երկու ամուսիններին: Սակայն, մեր շարքից, երբ մի տիկին հարցրեց, թէ արդեօք հնարաւոր է պայուսակով մի տղամարդի գլխին խփել, կոմ աջացի տալով փորին՝ շնորհակց նրան, առաջնորդ տիկինը բացատրեց.

— Ապացուցուած է, որ հարուածից մի տղամարդու մարմնի այն անօթներն են աւելի շատ ցաւ պատճառում նրան, որոնք միշտ կա՛մ դատարկ են կամ միշտ լեցուն: Արդ՝ տղամարդկանց մարմինների այդ անօթներն են՝ նրանց դատարկ գանկերը եւ միշտ լեցուն փորերը...

Տարատաւոր կանանց առաջնորդի այդ յոյժ դիտական-մարզարանական բացատրութիւնը միահամուռ ծիծաղ առաջացրեց հանրակառքում:

Երբ մի քիչ էլ գնացինք, վարորդն, որ մինչ այդ լուռ էր, առաջին անգամ լինելով շրջուեց դէպի մեզ եւ ասաց.

— Ինչ ուզում էք ասէք, բայց այդ աւագակները վտանգաւոր գործ կատարեցին եւ անփաստ հեռացան:

Այդտեղ գեղեցկուհի Տէննիի ամուսինը՝ Դիկը, որ լաւ կ'անէր, որ լռէր եւ աչքի չերեւար, ապուշաբար յոխորտաց.

— Եթէ ես ատրճանակ ունենայի, նրանց ցոյց կը տայի մաքուր գործ կատարելը...

— Look who is talking?, — ասաց վարորդը:

— Why?, — է՛լ աւելի յոխորտաց Դիկը:

— Որովհետեւ ես հայելու միջով տեսայ, թէ ինչպէս պահեցիք մեզ: Եւ ես մտած եմ, որ դուք ատրճանակ չէ, թնդանձձ էլ ունենայիք, նորից ոչինչ չպիտի անէիք, — ասաց վարորդը:

Հանրակառքում բարձր ծիծաղ բարձրացաւ: Ամէն ոք ծիծաղում էր: Ծիծաղում էր նաեւ գեղեցիկ Տէննին, կարմիր տարատաւորի կինը:

Ինքը, կարմիր տարատաւորը, բարկութիւնից կարմրած, ինչպէս որ էր իր անդրափարտիքը, շրջուեց կնոջ կողմը եւ ինչոր բաներ ասաց նրա ականջին, բայց Տէննին շարունակեց ծիծաղել այնքան երկար, մինչեւ նրա շաղանակազոյն աչքերից արցունքներ վաղեցին եւ նա հանգստացաւ:

Ուղեւորների եւ հենց իր կնոջ ծիծաղից նուստացած՝ կարմիր տարատաւորը կամ Դիկն այնպիսի՝ դառնագին վիճակում էր գտնուում, որ թըլուում էր, թէ հիմա ո՛ւր որ էր պիտի լաց լինէր: Ես խղճացի նրան: Ինչպէս երեւում է անուշի բան է մի տղամարդի համար, երբ նոյնիսկ նրա կինը չի հաւատում նրա տարրական արիութեանն անգամ: Տէննին չպիտի ծիծաղէր:

Ես ելայ տեղիցս, գնացի նրա մօտ, թեքուեցի վրան եւ ձեռքս դրի նրա ուսին:

Նա նայեց ինձ եւ խոսովածի պէս ուսը հանեց ափիս տակից:

— Ի՞նչ էք ուզում, — հարցրեց անհաշտ:

— Վարորդը ցիւնիկ մէկն է, ուշադրութիւն մի դարձրէք նրա ասածի վրայ, — ասացի:

— Բայց դուք ծիծաղեցիք, — ասաց նա:

— Մարդը միշտ այդպէս է: Մարդը միշտ էլ սիրում է ծիծաղել մէկի վրայ, միայն թէ՛ այդ մէկն ինքը չլինի: Մա՛նաւանդ՝ որ մենք դեռ չգի-

տենք, որ եթէ դուք ատրճանակ ունենայիք ինչ պիտի անէիք...
Գեղեցկուհի Յէննին, որ իր չքնաղ դէմքը ժօտ բերած, լսում էր մեզ,
իր փոքրիկ գլուխը շարժեց դրական.

— Այո, այո...

— Դու մի խօսի՛ր, — կնոջ վրայ յարձակեցաւ Դիկը, — ամէնից շատ
ծիծաղողը դու էիր:

— Ես ծիծաղում էի վարորդի սրամտութեան վրայ, — բացատրեց
Յէննին:

— Ես էլ, — ասացի:

Սակայն, կարծիր տարատաւորը շատ անհաշտ դիրք էր ընդունել իմ
նկատմամբ, որովհետեւ բաներ ասաց իմ հասցէին, որ ես երբեք չէի մտածել:

— Դուք, — ասաց նա, — ես զիտեմ, թէ դուք ինչու էք եկել ինձ
ժօտ: Դուք եկել էք աւելի ժօտիկ գտնուելու իմ կնոջ հետ: Ես տեսնում եմ,
որ դուք սիրահարուել էք իրար վրայ եւ սիրային հայեացքներ էք փոխա-
նակում իրար հետ...

— Swine, — ասաց Յէննին արգահատանքով եւ դէմքը շրջեց:

Կնոջ ածականից Դիկը չվիրաւորուեց:

— Օ. Կ. ես աւալյո եմ, — ասաց նա կնոջը եւ դարձաւ ինձ, —
դուք կարծում էք կարո՞ղ էք իմ կնոջը պահել: Ո՛չ, չէք կարող, որովհետեւ
իմ կնոջը պահելու համար դրամ է պէտք, շատ դրամ: Բնակարան Փարք պո-
ղոտայի վրայ... Գեղեցիկ կանայք ձեզ համար չեն...

— Ո՛չ, — ասացի, — ես չեմ կարծում, որ ձեր չքնաղ կինը ձեզ հետ
ամուսնացել է ձեր դրամի համար: Տիկինն այդպիսի մէկը չի երեւում...

— Հապա ինչի՞ համար, իմ դորը աչքերի՞, — հարցրեց նա:

— Քերեւ, — ասացի:

Նա ծիծաղեց դառնօրէն.

— Բայց եւ այնպէս դորը աչքերի հետ, պէտք է նաեւ շատ կանաչ
թուղթ ունենալ, որը դուք չունէք...

Յանկարծ կատաղութիւն եկաւ վրաս, որն ինձ պատահում է, հրք փոր-
ձում են ինձ վիրաւորել անհիմն կերպով:

— Ո՛չ, պարոն, — ասացի, — գեղեցիկ եւ կամ ոչ գեղեցիկ կին պա-
հելու համար պէտք չէ շատ դրամ ունենալ, այլ պատուի տարրական զգա-
ցում:

— Օրինա՞կ, — աչքերն արագ-արագ թարթեց նա:

— Օրինակ, ժօտ մէկուկէս ժամ առաջ, աւազակ Վիլին հենց ձեր ներ-
կայութեամբ արագութեամբ էր ձեր կնոջը, բոնի կերպով համբուրում էր նրան,
բայց դուք ծերացած մի եզան պէս կանգնել ու որոճում էիք այնպէս, որ թը-
ւում էր, թէ այդ բոլոր անպատուութիւնը ձեզ չէր վերաբերում...

— Եթէ ես ատրճանակ ունենայի...

— Ձեզ ատրճանակ պէտք չէր, այլ միայն մի քիչ արիութիւն, — ասա-
ցի եւ հեռացայ:

Երբ ես արդէն իմ տեղումն էի, նկատեցի, որ Յէննին լաց էր լինում:

— Պատրաստուեցէք, մի քանի բոպէից յետոյ, մենք հանրակառքերի
Նիւ Եորքի կենտրոնական կայանում կը լինենք, — ազդարարեց վարորդը:

Ուղեւորները հառաչեցին եւ հանրակառքում իրարանցում սկսուեց:

Ես պատուհանից դուրս նայեցի: Մենք արդէն Նիւ Եորքի երախումն
էինք, ինչպէս մի վիշապի դարչահոտ բերանում...

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

ՏԱՐԱԿՈՅՍԻ ԱԿՈՒԹԻՆ

Կը քարճրանայ
 Ծխանն ի վեր օրերու
 Տարակուսանքն իրբու բոց,
 Ճարակելով՝
 Անհունութեան մերկութիւնը ստորագոծ :
 Իր երթին մէջ՝
 Կ'ողջագուրուին
 Լինելութեան ծարախ
 Ներաշխարհներն ակամայ
 Եւ նգնութեան զգայարանքն անհանդարտ՝
 Ճշմարտութեան անբացայտ տառերու
 Յզացումին ի խնդիր :
 Կը համրանան տենչ ու տեսիլք ,
 Կ'ամլանան կիրք ու աւանդ ,
 Մինչեւ ձգտումն անհոլովոյթ ժամանակի :
 Իր երթին մէջ՝
 Կ'ընթեռնու երկն անհունին ,
 Կը վերծանէ գայն խոռ առ խոռ ,
 Պահ առ պահ ,
 Բանադրելով
 Աւանդալէպ զերթ սնշահ ,
 Շնչաւորուած՝
 Վիճակներով անարիւն
 Եւ կը զօղէ
 Ունայնութեան տրափներուն մոմիացալ . . . :

Քառասյին գոյսվիճակ
 Եւ իրերու անէակից միասնութիւն :

Կը լուսագրէ
 Տարերազօր տփնութեամբ ,
 Խմացութեան անլուսարձակ պաստառներուն՝
 Իրբու նորագ նախաստեղծ՝
 Մննդոցն իր արարչութեան :
 Կը մեղանչէ
 Իրբու կերպար հոգեզէն ,
 Բարձած սրտին՝

Նախամարդու մեզի տրոփն առաջիմ,
 Երկունքը նախամոր
 Եւ արգասիքն անծապարտ
 Վրիժախանն իր բնութեան,
 Վիմագրուած՝
 Խղճմտանքի անձաներուն... :

Կը բարձրանաս
 Ծխանն ի վեր օրերուս
 Վաղրկեաններու ստեղծերով անվերադարձ .
 Մինչ երախէզ երաշունչ՝
 Կ'այլանդակուիմ
 Տագնապներն իմ հետախոյզ՝
 Մատիկլիանիի նկարներու դիմաշայտնութեամբ :
 Լեզուիս անշեղ կանոններէն բացառուած՝
 Բառ ծածկագիր,
 Կը քափանցես
 Պատնէշներէն ըմբռնումիս՝
 Անցագրերով բազմադէմ :
 Մերք կը բացուիս դուն իմ մէջ
 Հիւզարձակուած՝
 Բարբառներով թիրաքմատ՝
 Կ'ըլլաս իմաստ հակասական,
 Կանչ ու կոհնչ եւ խաժամուծ,
 Վերածեցով
 Էութիւնն իմ աշտարակուզ
 Տեղը մտքիս՝
 Բարեւոյնեան անպողարքեր երկունքի :
 Կեդրոնախոյս ո՞վ տարերքն իմ բնութեան,
 Դուն,
 Սեւեռումը տարանջատ
 Մտածումիս ներգոյշակ,
 Կը բարձրանաս
 Ծխանն ի վեր օրերուս,
 Այգեկութէն իմ էութեան
 Քաղած աւիշն իբր աւիւն :

Անյուշ դարերու ունիս խօյ ճանճբախտ,
 Անյուշ դարերու բոքք արեամարհանք .
 Կը երահօսիս
 Անհունութեան հանդերունն,
 Դատազուրբեան հոսանքներուն ներհակուող՝
 Իբրեւ ըմբոստ,
 Ընդդիմահոս Որոնդէս... :

Ինչպէ՞ս ամբիլ , , ,
 Փարատել մարմնքն անխոյն խոսերու,
 Երբ ամէն մարմնք
 Կը վերլննիւզուի

Ներանձնութեան թէժ աւազներուն... :
 Ամէն բապէ
 Կը յառնէ հեզմով
 Ինչ որ երէկ էր, ամոգարձ,
 Ինչ որ երազ էր, անմիտ,
 Ու կ'ըլլայ պոռթկում,
 Յեղաշրջութեան հրաքիւ Յարզգազ,
 Դրօշ յառաջընթաց :

Ամէն բապէ
 Կը սուսայտի տննչ մը հեզմով,
 Զերթ միջնադար ծնուցիչ,
 Կ'ըլլայ զարթնում արեգակնան,
 Հիւսկոնտեան յարիզաչուի սեւեռում,
 Ռումանագեղ կաթողիկէ :

Ներաշխարհիս գաւիթներուն՝
 Ո՛վ Տարակոյս,
 Կը քննարկես
 Տամարները հանգանակիս
 Ու կը մզես՝
 Բիզանդական անեզրափակ բանավէն :

Ամէն բապէ
 Կ'արեւանայ քառ մը հեզմով,
 Կ'ըլլայ անում ոգու արութեան,
 Կ'ըլլայ ապրում յոսեական վարժի
 Եւ օքերու շուրթիմ քառած՝
 Ցուրտ սոսքանագիր... :

Ամէն բապէ
 Գազափար մը աշխարհակալ
 Լինելութեան
 Իր ուսպիկանը կ'անցնի... :

ՅԱԿՈՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Ն. Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

ԵՐԿՈՒ ՍՈՒՐԻ ՄԻՋԵԻ

— Ի՞նչ պիտի ընես դալ տարի, —
Հարցուց ուսուցչուհին:

— Չեմ գիտեր:

Ուսուցչուհին կրկնեց Հարցումը:

— Անկեղծօրէն չեմ գիտեր, — ըսաւ
տղան ու աւելցուց, — նոյնիսկ չեմ գի-
տեր, թէ վա՞ղը ինչ պիտի պատահի,
այնպէս որ՝ այդ մասին չեմ մտածած:

Տղան դարձեալ ուրախ չէր, նոյնիսկ
որ մը ուրախ չէր եղած, միշտ տխրու-
թիւն մը, ծանրութիւն մը զգացած էր
Հոգիին մէջ. եկած էր Ամերիկա, տե-
սակ մը պարտուածի Հոյեբանութեամբ,
բայց որոշած էր փոխուել ու բուրոյզի
նոր կեանք մը սկսել, բայց չէր կրցած,
մնացած էր նոյնը:

Երբ Հասած էր Նիւ Եորքի Ազատու-
թեան արձանին առջեւ՝ որոշած էր ա-
զատ ապրիլ. չէ՞ որ ազատութեան եր-
կիր էր, բայց գիշերը, երբ պանզակին
մէջ կը քնանար, կրազին մէջ սիրած աղ-
ջիկը ուրիշի մը հետ ամուսնացած էր,
ու վախով արթնցած, ապա մտածած,
որ ասիկա կրնայ Աստուծոյ պատիժը
ըլլալ. Աստուած պատժած էր գինք՝ քա-
նի որ գիշեր մը առաջ, Հոսմի մէջ,
Ուայթ Էլլայ գացած էր. օ՛, ինչ զէշ
բան: Տղան կեանքին մէջ մէկ անգամ
նայթ քլապ դացած էր, ու ա՛հ Աստուած
երազով պատժած էր գինք: Չգաստացաւ,
պէտք էր լռէր, Աստուծոյ սպասէր ա-
ղօթելով: Նորէն պատեանը քաշուեցաւ:
Աստուած թ՛նչ չէր կրնար ընել: Ան ծո-
վերը կրնար ցամքեցնել, կրնար պատժել
մինչև չորրորդ ազգը:

Ու մնաց առաջուան տղան, բարի,
աստուածաժախ, ամչկուս:

Երկու տարի է նոյն դասարանն էր:
Եկած էր անգլերէն սորվելու. լաւ էր
պատերուն մէջ, իսկ ուսուցչուհին աշա-
կերտներուն մէջ ամէնէն աւելի իրեն
համակրած էր: Օր մը, երբ բացակա-
յած էր.

— Կարօտցայ քեզի, — ըսած էր ու-
սուցչուհին:

Տղուն ուզածը այդ չէր սակայն,
Կ'ուզէր մէկը ունենալ, խօսիլ Հետը,
խնդա՛լ:

Ամէն օր դասի կու գար. շուշուրով
կը նստէր աթոռին. շուշուրինները՝ մեքսի-
կացիներ կամ Հարաւային ամերիկացի-
ներ. թ՛նչ ընէր անոնց հետ: Կը կենար
հետուն, պաղ՝ անոնց Հանդէպ: Դասէն
ետք, գիրքը թեւին տակ՝ կը քալէր մի-
նակ. կը տեսնէր ուրիշներ, որոնք զօյգ-
զօյգ կը քալէին: Իրարու փաթթուած
կամ ինքնաշարժներու մէջ:

Սիրտը կը ճմուէր. չէր կրնար մէ-
կու մը պատմել տառապանքը: Ինչպէ՞ս
ուրիշները կը յաջողէին ու ինք չէր կրը-
նար. ինչո՞ւ նիւթ կ'ընէր պարելը, ծը-
խելը. ինչո՞ւ իր ծնողքը իրեն սորվեցու-
ցած էին, որ ատոնք մեղք էին: Ինչո՞ւ
այդպէս դաստիարակած էին զինք:

Փնտասձը մաքուր աղջիկ մըն էր:
Մեկու մը երկար եղունգները պատճառ
եղած էին, որ չմօտենայ անոր. ուրիշի
մը շարժումը զգունաք արթնցուցած էր
մէջը. երբորդի մը ծխելը տեսնելով՝ ա-
ռաջին վայրկեանէն իսկ դայն մտքէն

Հանած էր. ան հազիւ դասարանէն դուրս ելած՝ անմիջապէս կը սկսէր ծիծել. ինք չէր մօտենար անոր, բայց երեք տըրդայ արդէն շրջապատած կ'ըլային զինք ու անոնցմէ զատ՝ աշխիզը իրեն սպասող մը ունէր ինքնաշարժին մէջ:

Իր սեփական ողբերգութեան լուռ ականատեսն էր միայն ինք:

Մանկութենէն մինչեւ պատանութեան վախճանը, մօրը շուքին տակ կիրակնօրեայ դպրոց դացած էր. մայրը զինք կ'արթնցնէր Կիրակի առտու.

— Հայտէ, տղա՛ս, կիրակնօրեայ դպրոցէն շուշանաս:

Տղան կը հազուէր, կը շտապէր կիրակնօրեայ դպրոց. վերադարձին մեծ մայրը զիմացը կ'ելլէր.

— Ուրկէ՞ կու գաս, ձազո՛ւկս:

— Կիրակնօրեայ դպրոցէն. տե՛ս, օրիորդը պատկեր տուաւ:

— Նայի՛մ ի՞նչ պատկեր է:

— Աղքատ Ղազարտօսին պատկերը, տե՛ս:

Մեծ մաման կը գրկէր ձագուկը, կը համբուրէր ու կ'ըսէր.

— Վաղը երեսներուդ վարդեր պիտի բուսնին:

Մեծ պապաները, մեծ մամաները, ամէ՛նքն ալ, ուրախ էին իրենց թոռնիկով ու կը գովէին մայրը, որ այդպէս զուակ կը մեծցնէ:

Տղան սկսաւ կամաց-կամաց եկեղեցի երթալ. առաջ մայրը կը տանէր, յետոյ սկսաւ ինք մինակը երթալ:

Մայրը չէր ձգեր, որ ատանց աղօթքի կերակուրի նստէին. կէսօրուան դադարին՝ տղան տուն կու գար, բայց պէտք չէ ուսէր մինչեւ հօր գալը:

Այս բաները օրըստօրէ սկսան նողկանք մը արթնցնել հոգիին մէջ. չէր սիրեր եկեղեցի երթալ, կ'ուզէր հեռանալ այն ամէն բաներէն, որոնք կրօնական բոյր ու համ ունէին. կ'ատէր քարոզները, փաղաքշական բոլոր խօսքերէն ու քուրդուրանքներէն հեռու կը փախչէր. կ'ուզէր դուրս ելլել, մերկանալ իր բալոր պաշտօնական հագուստներէն...

Կ'ուզէր ապառ ըլլալ, պարզ եւ ուղիղ:

Ի՞նչ կար եկեղեցիին մէջ. կոխ, կըռիւ, կոխ. թորոս ազաններու, Սարգիս ազաններու, Կարապետ աղաներու միջեւ, աթոռի՛ կոխ...

Ամէնքն ալ, նոյնիսկ ատանց մանկապարտէզի վկայականին, աղաներ էին. մէկը եկեղեցիին քարտուղարն էր, միւսը՝ գանձապահը: Եկեղեցիէն դուրս չէին ելլեր անոնք, քարոզ մը իսկ չէին փախցրնիր, բայց իրենց ընթացքէն սանթիմ մը իսկ չէին շեղեր:

Տղան ազատագրեց ինքզինք այդ միջավայրէն եւ հասաւ Ամերիկա, բայց չըկրցաւ Աստուծոյ երկելը ջնջել հոգիին:

Օր մըն ալ ըսաւ. «Նա Աստուծոյ բանտարկեալն եմ»:

Երկու սուրի մէջ էր տղան. երբեմըն ինքնիրեն կ'ըսէր. «Մեղք եմ ետ ու կը դիտէր շուրջը, ամերիկացիները: Որքա՛ն ետ էր անոնցմէ: Կը նախանձէր անոնց: Անոնք, ամերիկացիները, Աստուածը զրած էին ամէնէն բարձր կէտին վըրայ, բայց իրենց ատօրեայ կեանքին մէջ բացարձակապէս Աստուած չկար. իրենք էին միայն, Պիլը, Ուոլթըրը, Փիթըրը, ու իրենց դորժերը, ատօրեայ կեանքը, Վէ՛նը: Մինչդեռ իր ծանօթները, ինքը ամէն նախադասութեան մէջ Աստուծոյ անունը կը գործածէին:

Ահա դպրոցական այս տարին ալ վերջացաւ: Ի՞նչ պիտի ընէր հիմա: Հոգեպէս ընկճուած կը զգար ու կը տատապէր:

Որոշեց Հայ աքալ երթալ, նախակըրթարանէն վկայական աննելն ու երկար ատեն դպրոցէն հեռու մնալն ետք, գիմեց. ընդունեցին:

Յաջորդ տարեմուտին՝ գնաց դասարան: Նոր էր ամէն ինչ, դասարանը, ուսուցիչը: Նախորդ տարուան պէս մեքսիկացիներ չէին աշակերտները, ամերիկացիներ էին, որոնք տարիներ առաջ կիր

սաւարտ թողած էին զպրօցը ու հիմա եկած էին շարունակելու: Ասոնք՝ ամերիկացի աղջիկները սիրուն էին:

Տղան նստաւ աթոռի մը վրայ ու ըստպատեց դասին:

Առաջին օրը, ճիշդ դասին օկիզրը, երիտասարդ ու գեղեցիկ ամերիկացի տիկին մը ներս մտաւ: Ի՞նչ տիկին էր: Բանաստեղծութիւն կար աչքերուն մէջ, ու յօնքերը՝ կամարի պէս: Մարիամ Աստուածածնին դէմքը ըլլար կարծես: Երկար մաղբրը իջած էին ուսն ի վար: «Ի՞նչ գեղեցիկ է», ըսաւ տղան:

Գաղարին, կնոջ մօտէն անցաւ տըղան ու լրտեսեց մատները: Ամուսնական մատանի ունէր: Ո՞վ գուրս կը ձգէր ատանկ մէկը: Հաւանաբար փօքր սարիքին իսկ ամուսնացած էր, մայր էր անպայման:

Ամերիկացիները գեղեցիկ են, զրաւիչ, անուշ բան մը ունին իրենց դէմքերուն վրայ, կ'ուզես հում-հում ուտել, ու կը զարմանաս, թէ ինչպէս կրնան այնքան գեղեցիկ ըլլալ:

Միւսները, նոյնիսկ ամուսնացածները տղայ կը փնտռէին, բայց ասիկա լուր նստած էր, աչքերը հակած սեղոունին՝ գիրք կը կարդար:

Տղան խենթանայ պիտի: Այդ օր սեսակ մը հոգեբանութեամբ տուն գընաց: Գիշերը երազին մէջ նոսր-նոր տուն մը փոխադրուեցաւ: Միբեց կրազը ու խորհեցաւ, որ կապ ունի նոր տեսած կնկան հետ: Բայց, ախտ՝, որ կին էր ինչպէ՞ս ալ շուտով «այս» կ'ըսեն ու կ'ամուսնանան. ո՞վ էր արդեօք ամուսինը:

Օր մը ուսուցիչը հարցուց.

— Եկեցե՛ք կ'երթա՞նք:

— Այո, — պատասխանեց կինը:

Դէմքէն յայտնի էր մաքուր ըլլալը: Քովը նստող հարաւ-վիթնամցի կինը, որ ամերիկացի զինուորի մը հետ ամուսնանալով հոս եկեր էր, ծայր աստիճան շպարուած էր ու եղունգները աւելի մազիկներու կը նմանէին:

Որքա՞ն տարբերութիւն կար երկուքին միջև:

Սիրահարուեցաւ տղան: Իր մինչեւ

հիմա սիրած բոլոր աղջիկներէն տարբեր էր աս. կարծես սրտին քարէ տախտակէն սպունգով մը բոլորը մէկ սրբուեցան, անհասան: Մնաց միայն այս: Կինը լուր չունեցաւ անոր սէրէն: Ան, հագիւ դասը վերջացած, առանց ալ կամ ձախ նայելու՝ տուն կ'երթար: Տղան կ'ուզէր մօտենալ, բայց կը վախճար վռնտուելէ: Բերանը այրած էր հայ աղջիկներէն ու ասոր առջեւ կը տառապէր:

Ա՛խ, ի՞նչ կ'ըլլայ, խօսի՛մ հետը, ու խօսի հետս: Կ'ուզե՛մ տնունը դիտնալ:

Առիթը ներկայացաւ օր մը, դադարին: Կինը պատմութեան հարցումները լուծել կ'աշխատէր. զնաց քովը, ըրաւ կարգ մը հարցումներ. կինը առաւ պատասխանները, տղան արձանագրեց:

Թաղորդ դասին, կինը իր մօտ նըստաւ. տղան ուրախութենէն պիտի պայթէր: Կինը դադարին ուրիշ կնոջ մը հետ կը խօսէր ու երբեմն կը խնդար. ամէն անգամ որ խնդար՝ տղուն կողմ կը նայէր, ու տղան երեսը ափին մէջ, ազատ հարար զինք կը դիտէր, առանց աչքերը թարթելու ու, զարմանալին, կինը չէր նեղուեր ատկէ, ու աւելին՝ կարծես դժէ էր...

Դասէն ետքը, տղան ու կինը սկսան քայլել: Ի վերջոյ տղուն երազներէն մէկը իրականացած էր. հոգ չէ թէ կին մըն էր քովինը:

Երբ հասան ինքնաշարժներուն, կեցան. տղան ըսաւ.

— Կեանքիս մէջ երկու անգամ աղօթեցի սկսած եմ: Մէկը տասը տարի առաջ, աղջկայ մը պատճառաւ, իսկ երկրորդն ալ քեզի համար:

Կինը զարմացած դիտեց տղուն աչքերը:

— Օ քէյ, — ըսաւ կինը ու բարի գիշեր մաղթելով բաժնուեցան:

Դասարանէն մինչեւ «փաքիթիկ լայն»-ը, ինքնաշարժներուն սրբազան ճամբան էր տղուն համար: Որքա՞ն կը տեւէր այդ պահը: Խօսելով՝ կամաց-կամաց կը յառաջանային:

— Բոլոր վէրքերս բուժեցիր, միայն բուժեցած վէրքդ կը մնայ, — ըսաւ տղան:

Ի՞նչ լաւ էին այդ նախադասութիւնները կնկան ահանջին, ու տղան ամէն օր անոնց ամէնէն լաւերը կը զետեղէր անոր մտքին ու հոգիին մէջ՝ ահանջին ճամբով:

Տունը ըլլար թէ շուկան, եկեղեցիին մէջ թէ գործատեղին, ամէն տեղ մտքով անոր հետ էր տղան, միայն անոր հետ կը խօսէր: Երբեմն գիշերները կ'արթննար ու հագնու արթնցած՝ «ո՛ր է Քէթինը կը հարցնէր ինքնիրեն, յետոյ միտքը կու գար, որ ամուսինին գիրկն է:

Ի՞նչ լաւ կ'ըլլար, եթէ աղջիկ ըլլար. հիշդ էր ուզածին պէս էր՝ պարզ, մաքուր, դեղեցիկ:

Օր մը, դասարանին մէջ, ուսուցիչը Ամերիկայի պատմութեան վերաբերեալ Ֆիլմ մը կը ցուցադրէր: Խնդարիք տեղ մը բոլոր աշակերտները խնդացին, բացի տղայէն ու Քէթինէն: Տղուն միտքը ամբողջովին Քէթինով էր կ'ընտան, բայց Քէթինն ինչու չինդաց:

Առտու մը, երբ պորձի կ'երթար, ինքնաշարժ մը իր ետեւէն կու գար ու կարծիք լոյսերը վառած ատեն իր ետեւը կանգ կ'առնէր: Տղան դիտեց հայտնիէն, տէր եւ տիկին մըն էին. ո՞վ էր այդ կինը, անթիի պէս իրեն կը նայէր հայտնի մէջէն. շատ զարմացաւ, մէկ չէր, երկու չէր, ամէն կենալուն՝ ազահարար գինջ կը դիտէր:

Այլեւս չհամարձակեցաւ ետեւ նայիլ: Վերջին դարձուածքին, երբ անոնք անցան, թիւէն ու ինքնաշարժէն գիտցաւ ով ըլլալը, ու պոռաց.

— Քէթի՛:

Յետոյ տղան պատմեց պոռալը ու կինը խնդաց:

Ուրեմն իր աշխատած գործարանին դիմացը կ'աշխատէին, ուրեմն, ուրեմն՝ մըն. ո՞ր ժամուն, ո՞ր վայրկեանին կ'ըրնան ճամբայ հլած ըլլալ: Ամէն օր տըղան կանուխ կ'արթննար, հեւ ի հեւ կը նախաճաշէր, միշտ իր ժամացոյցին նայելով: Եթէ նոյն ժամուն կը սկսին գործի, ուրեմն հիմա պէտք է արթննան, հիմա պէտք է նախաճաշեն, այս ժամուն ճամբայ պէտք է ելլեն:

Տղան կանուխ փողոց կ'իջնէր ու

շատ դանդաղ կը քշէր ինքնաշարժը. անոնք կը հասնէին ետեւէն ու կ'անցնէին: Պահ մը կը դիտէր կնոջ լուսափայլ գէճքը ու կ'անցնէր: «Արեւ է, արեւ», կը կրկնէր շարունակ:

— Քէթի՛, — կ'ըսէր, — կը վախնամ, որ արկածի հանդիպեմ, Քէթի՛, Քէթի՛...

Քէթին լուռ մտիկ կ'ընէր: Օր մը, դանդաղացաւ, որ պզտիկը մինչեւ տատու անդադար լազած է եւ բնաւ չեն քնացած:

— Ես ալ քանի մը ամիս է քուն չունիմ, — ըսաւ տղան, — քեզ տեսնելէս ի վեր...

Տղուն երկու սուրի միջեւ էր. ամբողջ սրտով կ'ուզէր ունենալ այդ գեղեցիկուհին: Ի՞նչ միտ կողմէ կար Աստուծոյ խօսքը՝ «Արիւնքին կնկան ամենէն ինչ ցանկա՛ւ»։ Բայց եթէ առանց Աստուծոյ տերեւ մը չի շարժիր ու մազ մը իսկ չ'իջնար մարդոց դուխէն, ուրեմն Ան դրած էր այդ սէրը իր մէջ:

Մերսը կը կոտորար, կը փնտէր զայն ոտնը, դուրսը, իրիկունը, առտուն: Օ՛, առտուները: Երբեմն հետուէն կը նշմարէր իրենց ինքնաշարժը, արագ կերպով կը սուրբար՝ անոնց հասնելու համար, ու ամէն անգամին ալ կ'ըսէր. «սխալ կ'ընեմ», բայց չէր կրնար ուրիշ կերպ ընել. խենթի պէս էր: Ամուսինին համբերութիւնը հատած՝ օր մը զինք մատնանշելով հայտնեց. «զատիկա մեծ պատասխան մըն է», ըսաւ տղան մըտքէն, բայց գիշերը, ի՞նչ զարմանք, երազին մէջ կինը, վրան պարկած՝ խենթի պէս կը համբուրէր զինք: «Այս ալ այդ հայտնանքին պատասխանն է», ըսաւ տղան արթննալով:

Դասէն ետք, պատմեց երազը: Կինը խնդաց:

— Օ՛, Քէթի՛:

— Եթէ Աստուած ինձի ըսէ, թէ ի՞նչ կ'ուզես, ամբողջ տիեզերքը թէ Քէթին, Քէթին կ'ըսեմ:

Կ'ըսեմ.

— Դուն փայլուն արեգակ ես խաւար երկինքին վրայ:

Կ'ըսեմ.

— Քու ժպիտդ դեղ է վիրաւոր սրբ-
տիս...

»

Դպրոցը պիտի վերջանար: Կինը վը-
կայական պիտի առնէր, իսկ տղան տա-
րի մըն ալ ունէր տակաւին:

— Քէթի, այլեւս քեզ պիտի շտեա-
նեմ:

— Ճամբան կը տեսնենք, — կ'ըսէր
կինը, — մենք ժամը վեցուկէսին ճամ-
բայ կ'ելլենք:

Այո, կ'ելլէ՞ն:

Տղան մտքին քոմփիլքըրններով ար-
դէն լուծած էր ատիկա, բայց ամուսինը
կնկան հետքը կորսնցնելու համար՝ ա-
ւելի կանուխ կամ ուշ կ'ելլէր: Տղան ալ
կը զգար ատիկա ու լաւ չէր:

Շարաթաւիբը մը, երբ ինքնաշար-
ժը լուալ տուաւ, դո՛ւ շմայց: Ետքը,
երբ տուն հասաւ, մասնաւոր դէպով մաք-
րեց ետեւի սպակին, սր աւելի լաւ տես-
նէ արեւը, է՛ր արեւը:

Երկուշարթի շտեսաւ, սահայն: Ե-
րեքշարթի՝ նոյնպէս: Աւելի կանուխ ըս-
կրտաւ էլլել, ու աւելի դանդաղ քշել:
Չկային: Ուրիշ օր մը տեսաւ կտուքը,
բայց Քէթին մէջը չէր: Տղան կը զողար,
կը տառապէր:

Առտու մը, կանուխ դնաց անոնց
փողոցը ու սպասեց: Տեսաւ ամուսինը,
որ մոքքը սայլիւմ գործի կ'երթար:
Հինգ վայրկեան չէր անցած, երբ Քէթին
ինքնաշարթով ուրիշ ուղղութեամբ մեկ-
նեցաւ:

— Օ՛, — բացադանչեց տղան, — կոր-
սընցուցի, վերջնականապէս:

Այլեւս չկար Քէթին:

Դողալով գործի դնաց տղան: Փոր-
մէնը տեսաւ վիճակը, հիւանդ կարծեց.

«տուն դնա՛, եթէ հիւանդ ես», ըսաւ:

— Ձէ, եթէ աշխատիմ աւելի լաւ է,

— պատասխանեց:

Ակաւ կոտորած սրտով աշխատիլ:
Քէթին գիտաւորի մը պէս երեւցած էր
իր երկնակամարին ու անցած: Ո՛ւր էր
հիմա: Դպրոցը ձգելէն հաք, փողոցով կը
մխիթարուէր: Ամբողջ կեսնքին մէջ մի-
այն այս կինը համակրանք ցոյց տուած
էր իրեն հանդէպ ու հիմա ան ալ չկար:
Յաջորդ տարին, դպրոցը նոյն աշա-
կերտներն էին դրեթէ, բայց միայն Քէ-
թին չկար. դադարներուն կը քալէր ա-
նոր դասարանն ի վար, ու սիրաւ կը
լեցուէր...

Փորձած էր հեռաձայնիլ, թիւերին
փոխուած էր ու զաղտնի թիւերու ցան-
կին անցած: Ամուսինը քանդած էր բո-
լոր կամուրջները ու հետք չէր ձգած
կնիկէն...

Քանի մը անգամ փնտրտուքի էլաւ
անոր տան շուրջը, երկու անգամ արկա-
ծի հանդիպեցաւ. առաջինին՝ ինքնաշար-
ժը կորսնցուց, երկրորդը՝ թեթեւ էր.
բայց կը փնտռէ՛ր:

— Այլեւս բնաւ պիտի շտեսնեմ Քէ-
թին, — կ'ըսէր:

Շարաթ օր մը, պատշգամբ կայանած
էր, միտքը՝ Քէթիին: Յանկարծ ինքնա-
շարժ մը անցաւ, Քէթիինց ինքնաշարժը
չէր, բայց մէջը նստողը Քէթին էր կար-
ծես, անոր շատ կը նմանէր. սիրահար-
ւածի պէս դէպի իր տունը նայելով ան-
ցաւ:

Շատ ինքնաշարժներ կ'անցնէին իր
տան առջեւէն, բայց ոչ մէկը եւ ոչ մէկ
ատեն նայած էր իր տան կողմը:

Այս մէկը սակայն սիրահարուածի
նման միայն իր տունին նայելով անցաւ:
Արդեօ՞ք Քէթին էր...

ՆՆՐՄԱՆՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ

ABORTION

Ճիշ մը լսեցի
 փխրուն,
 հեռաւոր,
 — Ներս Եկար, — ըսի, —
 փոքրիկ մատներուդ թարմութիւնն զգամ,
 շօշափեմ հոգիդ,
 երեխայ դառնամ:

Ճիշ մը լսեցի,
 փորձեցի ի գուր
 եւ տանգուեցայ
 բանայու դուռը
 կղզուած կեանքին:

Ձեռ տեսներ յառախ սկիզբն ու վերջը.
 տարածութիւն մը կը զգաս միմիայն
 եւ կը կոչես կեանք:
 ճայներ կը լսես դուրիդ գարնուող,
 կը բանաս դուռդ ու բան չես տեսներ:

Հաշուեյարդարը.
 կը մնաս միմակ
 եւ երազիդ մէջ
 պզտիկ մատներդ դեմքդ կը շոյեն մինչեւ առաւօտ:

Հագացի չոր,
 վերագարձայ,
 դատարկ կուծի պէս
 ինկայ բարձիս վրայ
 ու փշրուեցայ.
 փշուրներս են,
 որ փակագծի մէջ
 կը սպասեն
 հիմա
 աղբահաւաքին...

Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ Է Պ)

Ընկեր Մաթիկը, սահմանը անցնելէ ետքը, քանի՛-քանի՛ քաղաքներու մէջ պատմեր է այս հաղորդութիւնը: Իրեն սպասող հազար ու մէկ դառնութեանց հակառակ, անիկա չէր կրցած իր մէջէն փրցնել խորհուրդին այդ մկրտութեան վկայականը: Իր տեսածները, իրենց լաւովն ու վատովը, զինքը կ'ընէին ջրագրողի, յաճախ անիրաւ: Իր ժողովուրդը գտնելու իր առաքելութեան մէջ իր չվարձատրուիլը անիկա կը բաշխէր ահաւոր պայմաններուն, որոնք իբրեւ կեանք դրուած էին մեր ուսերուն: Մեր գերութիւնը մեր գործը չէր անշուշտ: Մաթիկ չհայտնեց մեր պապերուն, մեր ժամերուն, մեր կրօնականներուն, ինչպէս 1900ին սովոր էին մեր իմաստունները ընել, երկրէն դուրս, երբ դատելու առիթ գտնէին մեր պատմութիւնը: Բայց չըժածկեց իր հիասթափումն ալ իր տեսածներէն: Իր կարծիքով, մեր ջարդը-սիւր կը դանցէր որեւէ տրամաբանութիւն: Ամէն արեւելահայ այս մտածելու կերպը կը նախընտրէր արեւմտահայ պահպանողականութենէն, որուն աւմէնէն ստորին մեղքը պիտի կազմէր այս ինքնամեղադրանքը, թուրքին արգալացումով: Մաթիկին հիասթափումը նուէրն էր անոնց, որոնք ճերմկրումն կը գործէին: Փո՛ղբ, շատ փոքր մարդեր, ատոնք, Մենծ Մաթիկի Հաւատումով, որուն շերտութիւնը ծաւալական չէր իր շրջապատին, քանի որ գիտենք, թէ ՚հոն էին անոնք, Տարօնի եւ Վասպուրականի մէջ, կիսը կրելով ամէն օր, աշխարհք մը թնամիտի դէմ, մինակնին ու շքեղըրկելով: Սխալակա՛ն, խի՛ստ, անփափականկա՛տ, կո՛ւշտ: — Ատոնք սիրուն հարցումներ են ու շատ ալ ճահաւոր ընթերցազանց ժողովներուն կամ բանաստեղծական հանդէսներու մէջ: Այդ սարերու գլխուն, օւրկէ կու դար անոնց ձայնը, որոնք զարնուած էին Մաթիկի մեծ փառասիրութեան, ամէնէն ուշ պիտի յիշուին այդ քիչ մը խորթ առաքիչութիւնները: Սխալակա՛ն, խի՛ստ... Մըրը չէ՛ մենէ: Բայց քանի՛ հոգի, անոնք, որ զրահուած իրենց թերութիւններուն ժանիքներովը, ներելով մեր վայելչները մեզի, մեր նախատինքն ալ՝ իրենց, մտան տազնապէն ներս, անպատկերելի խստութեանց մէջ խարխալած, իրենք իրենց դէմ, ո՛ւր մնաց Մաթիկներուն, որոնք կը մատնուէին ճղճիմ իրենց մարմիններէն, ինչպէս նաեւ մեծ իրենց ուղեղներէն: Շատ հազուադէպ է, որ մարդիկ պահեն իրենց հոգեկան կշիռը հաւասար, մերիներն նման հզօր ձախորդութեան առջեւ: Ու ճիշդ է միւս վարկածը, որ մարդոց մեծութիւնը համեմատական կ'ընէ տազնապի պահուն անոնց կորանքին: Մեղիքաւանանցը, իր ատելութեանց թափէն բռնավար, չէր խորհեր իր ալ խստութեան, երբ նման ամէն նորազիր մարտիկի, միջավայրի փոփոխմամբ առաջացած անդաշնութիւնները կը մեծցնէր չափազանց, անոնց պատասխանատուութիւնը բռնալով մարդոց, որոնք ուրիշ բան չէին, եթէ ոչ իրեն նման պայքարի իջած սրբազան խնթեր: Ինչ որ յեղափոխական Մաթիկին

անձը կ'ընէ շահեկան, այն վկայութիւնն է, զոր ես ունեցայ իր ուսումնէն, տասներհինգ երկար օրեր: Նիւթն էր մեր պայքարը թուրքին դէմ, զոր կը զգար տարտամ: Նիւթն էր պայքարի մեր գործիքը, մեր յեղափոխութիւնը այս դարուն սկիզբը: Երեսուն տարի ետք, կուսակցական արխիւներու բացումը հանդէսներու էջերուն, անհատական ու խմբական յուշերու հանրայնացումը անշուշտ պիտի նպաստեն, որպէսզի մտայ այդ երեւոյթը պարզըւի քիչ մը ու Սփիւռքի որդիները առանց մեղադրանքի, ինչպէս առանց կարմըրելու տեսնեն անկէ ներս ինչ որ մեր ցեղը տուաւ, նոր օրերու դունդունութիւն իբր որակ: Կեր զոյգ դրականութեանց կերտումը միայն բազդատելի է այդ շքեղ մղձաւանջին: Ատոր դնահատումը չէ, որ կը փորձեմ: Բայց անցան հետախաղաղ նաթային կոտորումները, բան մը չձգելով մեծի: Նոյն բախտը կը սպասէ մեր վաճառականութեան այնքան յոխորտ ասպետներուն, որոնք դեռ կը յամառին Պոլսոյ ջուրերուն կապել իրենց նուէրը: Չկայ այսօր Էփէնիտիութիւնը: Չկան փաշաները: Բայց կայ գրքոյկը, որ կը պատմէ, թէ ինչպէս մեռնիլ գիտցան մերիները, երբ մահը եկաւ իրենց հետ ճակատ ճակատի:

Ձատագոյնութիւն մը չէ, որ կը փորձեմ: Ինձի համար սիրոյ եւ յարգանքի արժանի են տասը հայեր, որոնք քով քովի կու գան մը կանգնելու: Սխալը կամ ուղիղը միշտ պարզապէս ճշմարտութիւններ են ու քիչ են այն առիթները, որոնց մէջ մենք տեսանք յոտակ: Յեղափոխութեան հարկը: Բայց խելօքութեան փա՛ստը, եթէ կը բարեհաճէք: Ո՛ր են երկու միլիոն քիւրտերը, որոնք մեզմէ ետքը չկրցան խելօք մտալ: Ո՛ր՝ երեք միլիոն յոյները, որոնք ոչ մէկ մեղք գործեցին: Բայց պէտք է պատմել, ուրիշներուն ձգելով դժիւն մայ չարցին շուրջը իրար գլուխ պատռելու տիտղոս փառքը: Ի՞մ փափաքը՝ տարն է դէմք մը այդ օրերէն, բաւական ընդարձակ, ուր մուտք ունենային մեր յեղափոխութեան կրկնակ երեսները, զէնքին ու մըտքին զոյգ հոսումովը լուսաւոր: Մաթիկ Մելիքեանեանցով զայն նուաճելու սա ծրարիքը վախ կու տայ ինձի, որ կ'աշխատիմ նիւթի վրայ, ատաղձի վրայ: Ու սա սպառածին՝ գուրկ եմ այդ ամէնէն: Մնաց որ, երեսուն տարի առաջ, անկարող էի ընդգրկել ինձի ներկայացող առիթը, տարիքի, մտայնութեան խոշոր թերիներուն պատճառով, թերութիւններ, ինձմէ աւելի պատկանող իմ ժամանակին, — իմ ժամանակին, որուն իմացական գերազոյն ճիգն էր «Մասիս» շարաթաթերթը եւ ուր քահանայապետ էին «Մանգուլէ» խմբագիրները, գերման լրագիրներու քաղաքական իմաստութիւնը, մեր լաւագոյն քերթողներու գործին մէջ կղկղանք միայն զգայը, փրփուր ու ծանեակ հիւսելով բանաստեղծ պսակուիլը ու տակաւին ուրիշ միտք չպահուելիք տրամութիւններ նկարագիր կը ճշդեն: Ամէն ինչ կեղծ էր իմ շուրջը: Ու կեղծ՝ մեր հոգին, որուն արտայայտիչ արուեստն ալ ինչպէս թաթին տակ կը այդ օրերու ոգիին: Հրաշք է գարձեալ, որ այդ համատարած անկումը մեր յարգանքին արժանի կեցնէ կարգ մը անուններ: Հսկայ, կազմակերպւած մեր յարգանքին արժանի կեցնէ կարգ մը անուններ: Հսկայ, կազմակերպւած մեր յարգանքին արժանի կեցնէ կարգ մը անուններ: Եստ քիչեր գերծ կղան անոր ծծումբէն: Հիմա, այդ շրջանին բրածոյ մարդոց մօտ պղտիկ յաճախանք մը նորէն զգալի կ'ընէ նոյն Վրագլան, ինչպէս ճահճի մը երեսը ծածկող հողի խաւին վերացումը յարութիւն կու տայ կանանչ գարշութեան: Մեր մատուցութիւնը այս բուրումներով է թունաւորում: Ու հոս է հմայքը Մաթիկ-

ներուն: Երեսուն տարի ետքը, Մաթիկէն տրուած զգայնութիւններ, անկէ յեղուած դէպքերուն խորունկ խորովքը եւ շտեսայ յուշերուն մէջը անոնց, որոնք իբր գործիչ մասնակցեր էին շատ մը բաներու: Տեղերու եւ դէմքերու յիշողութեան մէջ ժառանգազուրկ Մաթիկը հոգեփրճակներ, մտայնութիւններ խտացնելու շնորհովը կը փոխարինէր իր միակողմանի պատմումը: Անոր տուածներէն դեռ մտքիս մէջ կը մնայ քանդակուած այդ օրերու հոգեփրճակը մեր ժողովուրդին, զոր խնամքով բաժնեց անիկա երկու հակադիր, «հակամարտ» զանաներու (դօսի): Սկսած էր Արծրունիով մուտք գտած նորութեան այլատեսութիւնը: Գիտական եւ լուրջ կշիռներու համար մեր բառերը պարտաւոր ենք քիչ մը ուշադրէն հոտիլ: Ու օտար բառերու այս մթերքը անտանելի կ'ընէր անոր պարզունկ զեկոյցն անգամ: Այս շարագէտ խանդը, հիմա աւելի քան սուր, կը սպաննէ մեր լեզուն Հայրենիքին մէջ: Մասաւ: Անշուշտ: Բայց չեչտօրէն բաժնուած երկու կարգի, դասակարգի: Պարապ տեղը գրուած չէր Capitalը, որուն իմ անծանօթ մնալը քրէական յանցանք կը թուէր ընկեր Մաթիկին: Ան էր արմատը հայ յեղափոխութեան: Ու իմ ուղեղը զոր կը յոգնէր, փնտռելու կապը հրեայ տեսարանին եւ թուրքին դէմ անհաւասար կռուի ելած Մրտոններուն, Սաքոններուն, Սերոբներուն միջեւ: Երկու դասակարգութիւն: «Լաւ հարկաւոր էր հասկանալ»: Ու տեսութիւն: Ու անխուսափելի, մեծ, յաւակնատ գիտութիւնը, Փլիլոնիլիան մանաւանդ (շատ հաւատք չունէր հոգեբանութեան, զոր կ'ընդունէր անհարադատ (բաղարտ) զաւակը առաջինին), որ կը միջամտէր յաղթական ու կը յարգարէր անհամաձայնութիւնները, մեր ցնդաշին տուրքերը ու պատմութեան պլոնցիսը հաշտեցնելով անխորտակելի օրէնքներուն հարկադրանքին, հանելով մեր դժբախտութիւնները՝ մեր երկրաբանութենէն ու ձորերէն, որոնք մեր երկիրը անջատողական զօրաւոր կեղծողներու կը բաժնեն ու կ'արգիլեն տարածուն մշակոյթ ու կենցաղ: Երբեքից եղած էր մեր երկհազարամեայ պատմական թիվալիլիցիայի ընթացքում այն ցանկալի միլիոնը, զոր մեր նոր ազգայնութիւնը, Միխիթարեան կնքահայրութեամբ, շրջաբերութեան էր հանած կէս դարէ առաջին: Յնորք, իսկի՝ բանդադուլանք, այդ միութիւնը, մեր հոգիներուն մէջ, քանի որ չկար անիկա մեր հոգիները ստեղծող տարրին՝ հոգին մէջը: Ո՛վ խորախորհուրդ պատգամները մեր Մաթիկներուն ու անոնց հետքովը, հիմա, պատկառելի հանդէսներու սիւնակներէն կոկողափիղ պոռացող աքլորներուն, որոնք նահանգային հայեր կը պահանջեն ապանելէն, ու մեր գոյութիւնը կը դնեն կենդանակերպին աակիր այդ բարձր ազգմունքներուն ու չեն զգար, թէ բառի վրայ կը խաղա՞ն: Գիրք մը ամբողջ չի բաւեր Մաթիկին Փաքբան (հիմա կը զործածեմ այս տարազը, պիտակելու համար սա արկածախնդիր ու ալ աժան գիտականութիւնը, որ յետագարձ մը կ'ընէ մեր մի քանի գրողներուն գրիչին տակ, պատկերով ու ոճով խնամով ծածկելէ յետոյ ծաղումին հասարակութիւնը, անցնելու համար իմաստասիրական եւ այլական հայեցողութեան, մեզի մշտապէս պահած բանի մը ծարաւը անպարարօրէն շահագործելով. վասնզի մենք նոր չէ, որ բառը կը շփոթենք իմաստին հետ, խորութիւնը՝ ծաւալումին հետ) սպանելու: Բայց պարտաւոր եմ մօտենայու ողնասիւնին ու քանի մը խոշոր ոսկորներուն: Ընմարանական Մաթիկը Հայաստանի մէջ տեսած էր քաղաքացի եւ գիւղացի, օտարներու քաղքենիին եւ բանուորին, շատ տափակցած քիչիչով մը՝ պուրժուային եւ պրոլետարին յաւանական, յաղթական շերտաւորումը: Ասիկա՝ ողնասիւնը իր վարդապետութեան: Անմահ էին հետեւութիւնները պատմական մաքծորիւիզմին, որուն հիացողն էր անիկա: Կը ճանչնար երկու շերտերն ալ, ապրած ըլլալով անոնց մէջ, «Կիսած լինելով նրանց կիկէ հացը», ինչպէս կը զարմացնէր գիտ

իր տեղական գոյն ստեղծող բառերովը: Իջերով ընդլայնումը անբաւական է սակայն զեանդեղու համար իր պատմութիւնը քիչ շատ հասկնալի մակարդակի մը վրայ: Այն ատեն չէի տառապէր, քանի որ իր պատմածները կը դպէին իմ երեւակայութեանս, հետո՛ւ՝ դատողութենէս: Հեջիա՛թ: Բայց պղտոր: Այդ պղտորութիւնը տարօրինակ է, որ հաստատեմ հիմա ալ, յուշերուն մէջը անոնց, որոնք շարժումին մասնակցած են անձնուպէս, պատասխանատու դեբորով, յաճախ իբր վարիչ: Յեղափոխականներու յուշերը կը ծփան նոյն տարածութեան մէջ, որով մշուշուած են հիմա՝ մտքիս, Մաթիկին վաւերական ապրումները: Մտքէս չ'անցնիր կասկածի տակ ճոյն ատոնց բողբոջին ալ ստուգութիւնը: Բայց չեմ կրնար հետեւիլ անոնց պատմութին, ճիշդ ինչպէս կը զարմանայի մեր պատմիչներուն վկայութեանցը վրայ, երբ թնամին երկիր բերելէ յետոյ, անոր սուրբովը բնաջինջ կ'ընէին մեր ժողովուրդը ու կը շարունակէին իրենց գործը, այդ ֆնջուած ժողովուրդը ունենալով նիւթ յառաջացող տրամին: Ինծի կու գայ, թէ դադարողի, անպատահով անցքն է պատճառը սա անճշտութեան, որ չի դադարիր վաւերական իր կնիքէն, բայց կը տպաւորէ հակադիր մարդով: Տեգորի այս անկատարութիւնն է, որ կ'արձագանգէ իր մէջ կատարուած գործողութեանց վրայ ու մեզ կ'ընէ անոնուպէ մտաչփութ շատ մը ղէպքերու բժրոնութիւն մէջը: Կարդացէք, կարկատուն նըմոյնի մը համար, Անգրանիկի յուշերը, ու պիտի համոզուիք, թէ այս յիշատակները ոչինչով կը լուսաւորեն անոր կուռղի գէմքն ու դերը: Ամէն ինչ թոյլ է, սղկաղկ, անկազմակերպ, — ծրարիբ, գործելակերպ, նախապատրաստութիւն, գործադրութիւն: Այդպէ՛ս՝ նաեւ իրականութիւնը: Ձեռ կարծեր, թէ անփութութեան, անճանաչութեան, բարտուլի յառաջացման այսքան մեծ մեղքեր ներէին իրենց մարդիկ, որոնք հսկայ դասի մը լուծումը ստանձնեցին էին: Ինծի կու գայ, թէ դերագոյն անձուկը, որ անոնց բողբոջին մէջ կը տիրապետէ, քիչ մըն ալ կ'ենդէ անոնց նախածքին յատկութիւնը: Ու մարդկային է ասիկա: Այդ հաւատակուտ մարդերուն ուսումնասիրութիւնը, անոնց մահուան սպասուալիքին, յեղափոխական շարժիչը, հանգստաւէտ պայմաններու մէջ անգամ կարօտ է լայն, մանրամասն ճշգրտներու, սրբագրութեան: Մեր ուղեւոր մէկ եկեղեցականը, հակառակ պայմաններու նպաստին, աւելի բան չըբաւ մարդոց եւ հողերանութեանց սեւեռման տեսակէտէն: Մահուան անձուկով Ծպտուած, կոյր, միշտ մութին քաղաք մը մտնող ու տուն մը փակուող երիտասարդը, այդ իսկ փաստերով, դուրկ է աչքին անփոխարինելի նպաստէն: Տարածեցէք տեղորը, փոխանակ քաղաքի՛ լեռներուն, իրենց գործածական անցքերէն ու մատչելի թափերէն, բռնուած՝ անպաշտօն ուժերով, խաշնարած ցեղերէ, թուրքին շափ վայրադ ու թշնամի, որոնք կը գործեն պաշտօնական ուժերէ՛ զեկազարուած: Անոնք, այդ իսկ պայմաններով, մերը չեն: Մենք ունինք անոնց առ ու ան կէտին շատ-շատ դեղեր. բայց զանգուածը կը պատկանի թշնամիին: Կովկասէն հասնող երիտասարդը այդ մղձաւանջային ողիսականէն հազիւ պիտի յիշէ փապերը կամ ստանապատ ամայութիւնները: Մաթիկին դիւցազներգած կոնիները զրական քնմեր են, քան թէ օր մը մղուած ճակատամարտներ: Իբր տեղագրութիւն չեն ենթարկուիր ոչ մէկ ճշգրտման: Անոնք տեղի կ'ունենային «մի դիւրում», աւելի ճիշդը՝ անոր մերձակայքը: Ընդհանրապէս անունը կը պակսէր. իր խուժ ու օտար հնչիւնին, ինչպէս ուսուցիկ ձեռով մը մաս բերելուն համար այդ ողիսականին: «Մի արտում», այդ գեղէն դուրս: «Մի աղբիւրի շքուղիական», կամ աւելի յաճախ՝ սարի մը կողերուն: Այս տարտամութիւնը իրական է սակայն: Միշտ սակաւաթիւ մարդերով, ու միշտ՝ յոգնախուժ թշնամու՛ ղէմ: Անոնք ճիշդ են, մեծ մասով, քանի որ անկէ յետոյ անձնա-

կան շփումներով փորձառութիւն ունեցայ ասպատակային կոնիւնքէն: Բայց մերինները հասարակ շարագործներ էին ու լեռներուն վրայ իրենց հետապնդածը սուղկեկ մահ մըն էր: Ու կոխը տարբեր կ'ընթանէին Մաթիկներէն: Թիգ-թիգ կը ճանչնային բոլոր խորշերը իրենց արջայութեան, ար հսկայ լեռնաստան մըն էր, ցանուցիր ու ցանցառ գիւղակներով: Անոնց քաջութիւնը չեմ ըներ խնդրոյ նիւթ: Անգամ մը մահուան գինուոր, երիտասարդը առիւծէն ալ վեր է իր սիրտով: Ի՛նչ որ Մաթիկը պատմած է այդ մարդերէն, պարուրուած էին նոյն տարտամով ու զրքունակ պարզութեամբ: Բաւական Բաֆֆի էր զոց ըրած, այդ զործողութեանց տալու համար թերթօնական նկարագիր, որմէ այնքան կ'ախորժին դաւազրական ձեռնարկները ու մըր ամէնուն մէջ անմահ արկածի ոգին:

Այնպէս որ՝ ստիպուած եմ արագ անցնիլ այդ չափազանց շահեկան, բայց անբաւարար տեղագրուած կուստրանութիւնէն: Կը ծանրանամ իր տըւածներէն Վանին վրայ, ուր բնակած է ամէնէն երկար:

Շամիրամի քաղաքէն իր դիտողութիւնները, սրամիտ ու հայեցի անկախութիւնը, այն օրերու ուսանող սերունդէն սեւեռումներ, մեծ չափով բիրտ, յամառ, բայց կորովի մտայնութեամբ, որ աշխարհի ամէն անկիւնէն վանեցիները կ'ընէ իրարու նման, այլամերժ ու պինդ: Այս ամէնը՝ արուած զոյնով ու կարկառով, զուցէ անոր համար, վասնզի Վասպուրական աշխարհը մօտ է Արարատեան հովիտին, ու այդ օրերուն՝ յեղափոխական դաժնաբարդութիւնը իր ամէնէն շատ նուաճումը կատարած էր սահմանմերձ այդ գաւառէն: Անոր բերնին մէջ քաղաքը, Խորենացու կողմէ այնքան պիւր նկարագրուած — Մաթիկ կը տարբերէր մեզմէ մեր պատմութեան ու հայրենիքին վրայ ընդարձակ ծանօթութեամբը — պողաւէտ, նկարէն, իր մարդերուն տարօրէն չարքալ ու կծծի պարկեւտութեամբը՝ քաղաք՝ կէս մը տանկըցած բազմաթիւ միներէններէ, զօրանոցներէ ու, մա՛նաւանդ՝ Բերդէն, ուրկէ կը թափէր այդ խզտոյ թրքութիւնը, գրօշակով ու թնդանօթով: Իր հաստ, այլամերժ հոգեխառնութեամբ, որ դարաւոր յեղումները կը խըտացնէր լինը շրջանակող խոտաբարոյ զագաթներուն, լեչոտ, անհրապոյր, ինչպէս էր զէ՛մքը այդ ծաղկաւար երիտասարդութեան: Քիչիկ մը յիշեցնող՝ դիմադիժը հրաշքով մեր կողմերը ինկած վարպետներուն, հաստ, փայլատ, դաժան: Որոնք շարդերէն առաջ կը փնտռուէին իրենց տարօրէն կենդանի պարերուն, մութ ու խոնավ երգերուն ու տրտում աչքերուն համար: Խիստ, հաստ այդ մարդերը, նոյնը՝ Մաթիկին ալ պատմումէն, որոնք իրենց նկարագիրը հարկադրած էին հայ յեղափոխութեան, զայն մասնաւորելով, իրենց միայն սեփական կազմակերպութեան մը վերածելով: Ու կ'արհամարհէին ձեռնարկը շրջաններով՝ ինչ որ իբր հրահանգ ու իմաստութիւն կու դար Կովկասէն: Ինքնապատահ այս հետտումը իր լրումին էր հասած Մաթիկի օրերուն: Հոն ճանչցաւ մեր արիւրունը իմացական իր առաջին պարտութիւնը, ամէնէն ամբարցուած, զրահուած իր կոչին: Ընկերաբանական, իր բառովը՝ զուտխալական՝ գիտութիւններէն, որոնք իր սերունդին նախասերութիւնը կը կազմէին, գիտական ոգիին իրենց բերած նպաստովը, միւս կողմէ՝ փրցուն, անբովանդակ հայրենասիրութեան իրենց անուղղակի հասցուցած հարուածովը: Այդ հայրենասիրութիւնը քնարական ու պատմական, զոր Այլշանները Արեւմուտքէն ու Քամառ-Քաթիպաները Արեւելքէն գրած էին հրապարակ, Բաֆֆիով պատկաւոր, տեղի կու տար նորերու — իրապաշտներ — զրոհին:

Մտաւ ճակատամի, խորունկ արհամարհանքով, աչազուրկ դառտիւրակի մը հետ, որ իր անաւոր յիշողութեան անդունդներուն մէջ ամբարած էր ինչ որ իբր տպագիր հասեր էր Վասպուրական աշխարհը, Արեւելքէն ու

Արեւմուտքէն: Կարողացած, անշուշտ ուրիշներու աչքովը, բայց նշանախեց մը անդամ շղոհած: Աչազուրկ ուսուցիչը Նրիմեանի եւ Սրուանձտեանցի գործը պաշտպանելու խանդին մէջ գրգռած էր ընկերաբանական նախանիւթերով ամբակուռ նորընծան, որ քիչիկ մը Շահազիդ թարմացուցած, նոր կարգերու, ընկերակարգերու ջատագովը կ'ըլլար ու կը յարձակէր թեր աճէնէն հաստատ կազմակերպութեան, եկեղեցիին վրայ: Մովածաւալ իր Հմտութեամբը աչազուրկ դաստիարակը ապացուցուց կենդանի դերը, զոր այդ մարմինը ունեցեր էր մեր պատմութեան Հողովութիւն վրայ, պատմութիւն՝ գերազանցապէս յօրինուած ժողովուրդ տարրով, որ իշխողներուն, իշխաններուն յեղիեղուկ բախտին իբր հակահարուած կը մնար անխախտ, մեր երկրի երեսին: Ի՞նչ տխուր, եղկելի արարածնե՛ր՝ մեր արքաները, պայծառ ու մեծ փառանդին դէմը՝ մեր հայրապետներուն: Մը՛ր՝ նոյնիսկ փլուշտակ սիւները ապարանքներուն, որոնք այդ խամածիկ թագաւորներուն փոքր քէնները ու անձերը պատասպարեր էին: Գոտիարակը անշուշտ Համադրում մըն էր հրապարակի հասարակ տեղիքներուն ու դիւրաւ զգեստնեց Պաշտանեան միայն վերծանած ուսանողը: Անիկա ահաւոր էր, երբ թեւածեց իր բուն կալուածին վերեւ, թիւերու եւ մերձաւոր մեր պատմութեան աշխարհը: Զախջախեց զայն, զգորս դու պատուիրեցեր,՝ դիւանագիտական խորունկ իր հմտութեամբ: Զուր չէ, որ Բիւզանդ Քէչեանը մեծ դէմք է մեր մէջ: Արեւեհահայերը զայն՝ դիւանագիտութիւնը, կ'արհամարհեն իբր անօգուտ գրադում ու կը ծագրեն մեր այդ նանիւր հետաքրքրութիւնը, որ Համանիչ է բարձր դիտութեան, Նրիմի պատերազմէն սկիզբ առնող, Հասած՝ իր ոսկեղարին ԴՅի պատրախարքական պատուիրակութեամբ եւ Յլրդ յօդուածով: Վկայ՝ մեր խմբագիրներու, գործիչներու, հրապարակագիրներու զարհուրելի քանակը, տակաւին մինչեւ այսօր, երբ երկիր իսկ չունինք ու ամէն օր, հարիւրի հասնող թերթերու բերնով դիւանագիտական իմաստութիւն կը քարոզենք իրենց հացին բեռովը տաղնապուն դանդաղաններուն: Մինակ մեր մէջ կարելի հրաշք է, որ այսքան քիչ ընթերցողներով այսքան շատ դիւանագէտ խմբագիրներու գոյութիւնը սպառնուի: Ահաւոր վանեցի՞ն: Դիւանագէտ՝ ա՛յնքան, որ պիտի ընէր տասը աչքովներուն չըբածը իր չունեցած աչքերովը, Վանէն մինչեւ Պոլիս, Եգիպտոս... Ու եթէ Տէրը կամենայ՝ մինչեւ Ամերիկաները, ճամբորդելով պրոսալընիկէ մը պէս անվախ, յամառ եւ ռդասպաշտ ի սէր իր կրթարանին: Ահաւոր վանեցի՞ն: Որ կարկամեցուց զա՛րջ՝ երիտասարդը թուականներովը ըտլոր հեռագիրներուն, դիւանագիտական դիմումներուն, աղերսագիրներուն, Ազգային մեծ ժողովոյ կողմէ խմբագրուած քաղրիքներու(*) — պատրախարանէ, մամուլէ, գաւառական ժողովներու խողովակով քաղաքագէտներէ Համախառնուորդ:

Ընկեր Մաթիկը տարիքով շատ էր մատաղ՝ լրջութեամբ դատելու Համար այն սերունդը, որուն ազգային հետաքրքրութիւնը սկիզբ կ'առնէր Սահմանադրութեան հրատարակումովը: Ազգային ժողով որակուած մեծ օճախէն: Հոսահոսութեան վկայական մը: Բասմերորդ դարու մուտքին Մոսկուա ըբած մտնունն ոգիով ուսանող մը չէր հասկնար անլուր խանդավառութիւնը, զոր ազգային դատին ԲՊՔական, դիւանական սա հետապնդումը կ'արժեցնէր դասակարգ մը թարգոյց մէջ, մեծ մասով՝ խմբագիր, ուսու-

(*) Թագրիւր.— Պատրիարքին միջոցով Բարձրագոյն Գրքն ներկայացուած տեսակ վը յիշատակագիր:

ցիւ եւ պաշտօնեայ: Կատարեալ ասպարէզ մըն էր ան այդ օրերուն, դեռ Հիմա շարունակուող, ուրիշ երանգի տակ: Աշաղուրկ դաստիարակը (որուն հմտութիւնը դնականեց ազգը շատ վերջերը, Ամերիկայի մէջ վասպուրտականցիներու նպատակովը հրատարակելով անոր ստուար մէկ պատմա-բանաստեղծական երկասիրութիւնը) համեստութեամբ — վանեցին երբ չի վերադարձրէր՝ համեստ է — կը համարձակէր ռուսակաները հրաւիրել ժամանակակից պատմութիւնը գծի քիչ աւելին ուշադրութեամբ ուսումնասիրելու: Յեղափոխութիւններու պատմութեան հոյովոյթը ճշդող, անոր կարգ մը օրէնքները արգարացնող երեսօթներ էին դարերու երեսին, ու արդիւնաւէտ դատնալու համար, պարտաւոր էին օգտագործել անոր, պատմութեան բոլոր փաստերը: Յեղափոխութիւնը զուլա՛յ էր պատմութեան: Արդիւնքի եւ պատճառի յաւիտեական հա՛րցը: Կովկասակաները շատ ատաղանալու չէին իրենց արհամարհանքին մէջ դէպի տաճկանայր: Հասնուր անական մըն էր, զոր գործածելու իրաւունքը կը թուէին կորսնցուցած, քանի որ Պարսեան գոնէ չէր ծնած իրենց լեզուէն: Անհամեստ աւելի լաւ պայմաններու մէջ շնորհելով պետական հարձանքէն, անոնք պարտաւոր էին պատմութիւնը բարձրացնել իրական գիտութեան մը: Ու պարտաւոր էին տեղեակ ըլլալ ծածկազիր հեռագիրներու բովանդակութեան Արիմանի պատմութեան, քանի որ ինք, իր այդ վիճակով, կարգացեր էր գանձը... Վանի մէջ: Վանեցին, երբ կը վիճարանի, իր փաստերը կը կռնէ աչքին խորութեամբ ու ձայնին անկիւնստ խորոտցովը: Ատաղին բացակայութիւնը դաստիարակէն կը մեղմէր մասով՝ վերադարձը թոնր այս դիտողութեանց, որոնք բանաձեւողի մտքին մէջ գերծ էին թշնամանող երանգէ, բայց բոլոր վանեցոց պատահածին նման ճիշդ հակառակ բրտութեամբ կը տպաւորէին լսողը:

Դաստիարակը ծաղկահար երեսը կը շոյէր յաճախ, ներքին գոհունակութեան յայտարար այդ շարժումով իր բարեմտութիւնը պարզելով դէմքին: Ու չէր զգար, այդ բարեմտութեամբ հովանաւոր, իր ետանդը, երբ հաստ, անհերքելի, մաթեմատիքական իր փաստերովը, ունակ-ուսուակ, կը հարուածէր նրբին զլիթիկը Մելիքիսանեանցին, խուլ ու հաստ հաւանութեանը մէջ շրջապատի տղոց, մեծ մասով իր աշակերտները, իրեն պէս խանդավառ ու յեղափոխական աշխատանքի նուիրուած ղինուորներ: Կենդանի, բուն այս վիճաբանութիւնը ուրիշ մարզի մը կը յանգէր այլապէս շահեկան արդիւնքի: Կուսակցութեան քաղաքական ըմբռնումներու վերլուծումին մէջ ընկեր Մաթիկը սովորական իր վերմութեամբ յայն ծաւալով կարծեց մտեցած ըլլալ Հիմնական անոր աշխարհահայեացքին, որով հայ յեղափոխութիւնը պարտաւոր էր որդեգրել միջազգային ընկերվարութեան սկզբունքները, եթէ չէր ուզեր լճանալ, Ասիոյ մէջ սահմանափակուել ու նեխել:

Դաստիարակը ահաւոր իր հմտութիւնը արժեցոց փառքով... Բանից զուրս եկաւ, որ անիկա եկեղեցիին հոյակապ հայրապետներուն չափ կը ճանչնար ընկերվարութեան մեծ առաքեալները, իրենց կենսագրութեանէն, ինչպէս դադարազրութեանէն, փախցուցած չըլլալով ոչ իսկ մէկ հատիկը պլաշիրներուն ու յեղափոխական մամուլի այդ ուղղութեամբ յողուածներուն:

Ընկեր Մաթիկը, հակառակ քիչ մը ղիջող իր արհամարհանքին, չորացաւ արժէքը այդ ստացումներուն, որոնք այդ պայմաններուն մէջ կը կրկնէին իրենց տարրութիւնը: Միշտ այժարած Ակոյի քարայրին մէջ, անիկա արդարութեամբ դատեց այդ կորովի ու փաստակուտ տրամաբանու-

թիւնը, Համագումրին հուրջովը վարակիչ: Քանձբազալա ու յամսո, դիտացածին վրայ ամբողջարխսի, ճկելու անընդունակ՝ աշաղուրկ դաստիարակը մտքիս մէջ շինեց իր տեղը, դեռ արբ օրերէն զիծեր որակող վերադիրներուն Համակեզրոն վկայութեամբը: Ա՛յնքան, որ ծօտ քառորդ դար յետոյ, փարաւոններու երկրին մէջ, իմ կողմէ հանդիպում մը Մաթիկի ներկայացուցած խՈՒԵԱԿԻՆ, պիտի վաւերացնէր զլիաւոր դիծերը անոր ասուածին: Ես դտայ դաստիարակը նոյն ծաղկահար կոշտութեան, բայց այլուրային թոխչիքի մը մէջ, ինքիւնք վատուած տգոյն տղու մը թեւին: Նոյն փաստակուտ մարդն էր, մեր ամբողջ պատմութիւնը գետեղած իր դանկին յարկերու, բայց անկէ լաւագոյն մը յատկացուցած ժամանակակից մասին: Յիշեց Մաթիկը, անոր տ՛ւա գողափարները ու վերացաւ մեր ժամանակը դատելու նոյն խնդրով, որ ազահար կ'ընէր ատջին մօտեցողը: Հիմա՝ անկա հեղինակ ալ էր, թելազրելով, մուսաներու բարբառով, իր կենդանի պատմութիւնը: Չընդունեց իմ առարկութիւնները, որոնք ուղղուած էին ոճին, պատմելու ձեւին, տաղաչափութեան անտեղութեան եւ խոշոր չտփով մը Հռետորութեան, որոնք կը խեղդէին պատմական մեղի իրողութիւնը: Չընդունեց անկարելիութիւնը Միջերկրականի նկարագրութեան մը, քանի որ բախար կ'արզիւէր զինքը այդ երջանկութենէն: Ալջիս առջեւն է իր թրահաւատ տխրութիւնը, «կապոյտ ալիքներէն» եւ «սպիտակ փրփուրներէն» Հրատարելու հարկին դէմ, զոր չէր հասկնար ու զիս կը ջանար հարուածել իմ Համբարին խտութեամբը: Յետոյ բաժնուեցանք: Մահը փակեց այդ որբերգութիւնն ալ անօթի մեռնող դաստիարակին: Չեմ տեսած իր Հայրենակիցներուն ջանքովը Հրատարակուած այդ գործը: Անշուշտ, հաւատարիմ իր սկզբունքներուն՝ անկա քէչ բան ըլլալու է փոխած իր մատենանէն, եթէ երբեք բան մը փոխած ալ է:

... Ընկեր Մաթիկը Վասպուրականի մէջ գործ ունեցաւ ուրիշ շատերու հետ, տարեկիցներ ասոնք, մեծ մասով շրջանի գեղերու ուսուցիչ, ձաղուկները աշաղուրկ դաստիարակին, անոր «քնթէն» ինկած, իբր միտք ու կաղապար: Որոնք զինքը նեղը դրին իրենց միակուոր, կրանթիթայ իմաստութեամբը, տարօրէն պատեհապալա, ամուր, անմիջական շահին, անձին օգուտին մայր մտահոգութեամբը թրթռուն: Յեղափոխութեան մասին անոնք ունէին դրական, օգտաւէտ բժրունումներ: Սրտոտ, բայց ուշագիւր տղաք, որոնք Հայրենասիրութիւնը Մաթիկի բերնին մէջ զանգակատան հայրենասիրութեան մը կը նմանէր: Անոնք կ'ուզէին ամէն ինչ կեդրոնացրնել իրենց գաւառին մէջ: Այս պահանջատութիւնը այդ օրերու մտայնութեան մէկ փաստն էր սակայն: Ու Մաթիկ աներաւ էր զայն մասնաւորելու Վասպուրական աշխարհին: Աղէտին հոտը ալ պէտ պահանջկոտ կ'ընէր գեղերը, որոնք կուսակցութեան բոլոր պահեստը, գէնքէ եւ ուսմբէ, իրենց քարայրներուն մէջ, իրենց պէտքին համար միայն, գրուել կ'ուզէին:

Մեր վէպը Հարստներ լայնալ այդ մտայնութեանց ղէպի լրիւ սեւեռումը, որոնք, պատահական, պարագայական իրենց նկարագրին հետ, կը կրէին նաեւ Հիմնական թերութիւնը ծաւալ շքտնելու այդ խորապէս պահպանողական, իր աւանդութեանց ցանցին մէջ ամբակուղայ մարդաց, որոնք, դարերով, յամառեցան մնալ խարոխուած մեր հայրենիքի գրեթէ կեդրոնին: Այրարատեան նահանգին հետ Վասպուրականը այն դաստն է, ուր մեր ժողովուրդը կրցաւ պահել ամէնէն քիչ ազաւազ կերպարունք մը...:

Քանի մը տարի յետոյ, այդ մարգերէն Համբարի ելած դարտուղուողներ — նոր-սերնդականներ, ազատ-սէրեաններ — այդ շատ կարծրացած պահպանողականութեան դէմ հակազդեցութեան փորձ մը կրնան նկատուիլ:

Մնաց որ, նոյն այդ աղաքը, քանի մը տարի առաջ, Մաթիկին գէժ, օտարաժուռ անոր անձին հանգէպ քնազգական մախանքով մը (ընկեր Մաթիկը, բացի անսահման եռանդէն ու նոյնքան միամիտ հաւատքէն, ոչինչ ունէր իր անձին վրայ ամբօրինեցու առաջնորդէն, արմատապէս վիրաւոր ըլլալուն՝ հասակէն ու նոյնքան անուղղայ մեծագար մը՝ խօտելու մարմաջէն, որ մէր տկարութիւնները ամէնէն շատ ու շուտ կը նետէ կրկէս) կը պաշտպանէին Հայ եկեղեցին, որմէ ուծացում մը վճռական կորուստ կը նկատէին մեր ցեղային զիմագծութեան, Մաթիկին հոգիին մէջ առաջ բերելով ամէնէն ծանր կործանումը: Կը պաշտպանէին Էջմիածնի նուիրուպետական հեղինակութիւնը, հակառակած ըլլալու համար սգատական Մաթիկին, ինչպէս նաեւ ծառայած ըլլալու համար երէցներու դատին, որոնք տեղական, բայց շատ բիրտ հայրենասիրութեամբ մը չէին կրնար մոռնալ դարաւոր Աղթամար ու չէին ծածկեր իրենց ջերմ հաւատքը օր մը հոն, պատմական կղզին փոխադրուած տեսնելու «զհայրապետութիւն Հայոց», երբ ոռոտական հետարզնտէ աճող բունութիւնը վտանգի տակ զնէր անոր անկախութիւնը: Ամէն վիճարանութիւն պէտք ունի հասարակ տեղիքներու մեծ սքոճի մը: Նախնական մարդոց համար հասարակ տեղիքը յուսութէ մը աւելի զօրաւոր կը հնչէ: Ինչ որ Սահմանադրութեան յաջորդ սերունդէն թափանցած էր մինչև այդ խորշերը, մեծ բան մը չէր կրնար ըլլալ, քանի որ գալբիմանքի իմ ընկերներս փաստն էին ասոր: Այնպէս որ՝ այդ վիճարանութեանց ծանրութիւնը կեղրոն ունէր վաթսուսի սերունդին սահմանադրական ազատական իրաւակարգը, զայն գտնելով լիուրի բաւող մեր հասարակական բարեշքը՝ ման: Ընկերվարութիւնը: Բայց այո՛ւ: Ապագայի կրօնքը: Ով կ'օրհանար ասիկա: Առայժմ Վանը՝ սակայն: Վանը՝ մանաւանդ շուկայէն, հողէն, ազատութեան բերելիք բարօրութեան: Կանխահա չէր ազատութեան դադափարը կապել այդ կրօնքին, որ ամբոյն ուժը կարող էր կիսել ու վնասել յիշափոխութեան մասսայացման: Գտնութիւն ու խորութիւն: Միայն աքաղաղները չէ, որ քաղաքի մը մէջ նոյն մայնքանգը ունին, այլև անոր վիճարանողները, իրարու հարազատ կրկնութիւն: Ու բառ, ու բառ, ու բառ: Ու վէճ: Վէճին հետ անխելք, անխորթ ալ պատահարներ, այսինքն՝ թեթեւ հրմշտուք, սաստ, շարժունակային արհամարհանք, բուրբը՝ առանց կանխամտածութեան, այսինքն՝ շեշտով մը, որ անոնց բնականն էր, ամէնօրուանը: Ինչպէս չիչէր խոշտանգուող Մաթիկ Մեխիքիանեանցը սքանչելի Մոսկուան — օրը նուազագոյն յիսուն անգամ այդ քաղաքը կ'ելլէր գործիչին բերանէն — անոր ընդարձակ սալմները, լիփլիցուն խարտեալ ու խելացի վիճարանութիւններով, որոնք լսելը վայելք էր ականջին, ոչ թէ շարչարանք, ինչպէս չէր քաշուեր բանաձեւելէ անոնց բիրտ, եռանդուն, կրթութեալ կրկնակներուն տըպաւորութեան ներքեւ: Չծեծեցին, վասնզի կը յարգէին՝ իր անձին վրայով, անկէ անդին՝ Մարմինը, որուն ներկայացուցիչն էր անիկա: Կը յարգէին յիշափոխութիւնը, որ իրեն գլխաւոր մարդ ընտրած էր իրենց պաւտը: Քաղաքները միշտ կը շահին, երբ մարդ մտնէ-ելլէ անոնց մէջ: Անիկա պարտաւորուեցաւ ընկերկի իր փաստերէն, լռել օր մըն ալ ինքնաբոյս հոտորներու այս փաղանդին գէժ, որ Շարաթ գիշերները կը կազմուէր, գեղերէն քաղաք խուժող ուսուցիչներու համադրումովը: Ու կը զարմանար ինքնաբոյս սա ընկերբարաններուն միակտոր դատարկութեան վրայ, որոնք իրենց վարժապետին չափ ալ չէին ուսումնասիրած այդ փշտա հարցերը: Վանը հետու է Բիւզանդիոնէն, բայց մեր նախնիները հոն սորվեցան յամառութիւնը, յաւանդութիւնը, հերձուածի մէջ խորութիւնը: Մենք դարերով կա-

բօան ենք ապրեր ուժղին վերացումներու, մեր դժնդակ կենցաղին մշտանորոգ ողբերգութեամբ միշտ ալ արդիւնեւորով: Կրօնք փնտռելը, ինչպէս մեծ գաղափարի մը նտեսէն մեր իօլ սուզումը բաւական փաստեր են այդ ծարաւին:

Ընկեր Մաթիկը կենդանի դժադրութեամբ պատկերացուց այդ տղոց տօգունելու աստիճան կրթոտ նայուածքը, թուքերը, աղմուկի մէջ հաճ ընտանութիւնը: Իրար մտիկ ընելու տեղ, անոնք իրար կը հրմշտակէին ու գոհ էին ատոր համար: Կարծես անոնց մատներն էին մտածողը անոնց տեղ: Մաթիկ Մելիքեանեան այդ մարդոց կարճ, բայց զէր մարմինը յաճախակի կը բերէր առաջին դիմի, մոռնալու համար իրը՝ ճիղճ ու անհով: «Անտիական» հասակն ալ աննպաստ հանգամանք մըն էր (անիկա յիմար էր եղած չճածկելու իր մօտիկ անցեալը, մա՛նաւանդ ատամնարուժական ուսանողի անորոշ գրազումը, վանկցիներուն համար բոլորովին անբարենկիթ, քանի որ սափրիչներուն աջանը լուսազոյն վկայական մըն էր արդէն) աւելցող իր անփորձութեան, յեղափոխական գործօն աշխատանքէ: Անիճեց, հարիւր անգամ օրը, ուր տուած էր որոշումը սա կիսավայրենի ամբոխին մէջ գործելու: Բայց սահմանէն չանցած՝ ան ի՛նչ եռանդ էր իրը: Իրեն հետ իր մեծերն ալ շուտաւ էին այդ յերան պէս ամուր հաւատքէն: Ի՛նչ ողբով ճամբայ էր ինկած: Եւ ո՛ւր էր իջած: Գործօն աշխատանքէ իր վարսնումը, անճարակութիւնը, մա՛նաւանդ ուրիշին խօսք հասկցնելու անհեղինակ իր յուսահատութիւնը կործանեցին անոր զլերան պէս ամուր՝ հաւատքը մեր ժողովուրդէն: Բայց չէր անգրադանար, որ անկարող էր չէն-չնորհ մօսիմ մը կառավարել: Անիկա անընդունակ էր սաստի, որ զինուորական կարգապահութեան հանդոյցը կը կազմէր: Յիմար իր մօրուքիկին վրայ իր յամառութիւնը պատճառ էր դիչեր ու ցերեկ անոր ծակածուտ կեանքին: Մաթիկ ժուժկալ էր այդ ծակերուն նկարագրութեան մէջ: Դիմամբ թէ իրականութեան հաւատարիմ մնալու ճիգով մը տուաւ ոչ մէկ կնիկի պատկեր: Ու տարօրինակ էր, որ հանդիպած չըլլար անոր: Եղաւ ժուժկալ բարքերէ, որոնք արդէն անդոյ էին իրեն համար, մշտապէս տարուած ըլլալով յեղափոխական մտախոհանքէն կամ մտախոյանքէն: Միւս կողմէ՝ կուսակցութիւնը կը տանէր շատ ներուժ աշխատանք: Կը պատրաստուէին հարուածող գունդերը ու գորաւոր ցանց մը մինչեւ Սասուն ու մինչեւ Տէրսիմէն վար, նպատակ ունէր ամուր կուսակցներ հաստատել, անցնելու համար մասսայական շարժումի: Բռնապետութիւնը աւելի քան զայրազնոտ: Հայ գիւղերը հսկողութեան տակ էին ներսէն ու դուրսէն մատնիչներու: «Ջորքը» սովէն տեղ, ու ամէն օր: Երիտասարդութիւնը՝ թերահաւատ ոչ գործէն, այլ գործիչներէն: Միտոլորտը թաց՝ կասկածէ, դաւէ, խեղճ ու իրերհալած կը ուրէ: Ապահովաբար դէլ ատողի տակ ծնած էր անիկա: Հիմա կը խորհիմ, թէ ինչ գեղեցիկ figure մը ընէր պիտի անիկա Սահմանագրութենէն ետքը, Գոլոսոյ յարաններուն բեմէն, իր հասակին թերին քանի մը տախտակով պարտկելէ ետքը, երբ բանար իր երկայն թուերը ու գետերը իր բառերուն, արաւիչ իր շնչուովը ծափեր խլելով իր փառքի կարօտ հոգիին: Այնօրերուն, այսինքն՝ ինրհարիւրին, ասպարէզը չէր նպաստաւոր անոր ճամաններուն: Ենորհազրկումը չուշացաւ: Իր ամուր պոռալու համարձակիլը սուսին քրէական յանցանքը նկատուեցաւ, թէն իրականին մէջ իր ճիգը աւարիչ քան չէր, եթէ ոչ միւսներուն աստիճանին հանել իր ճայնը: Գայթակղութիւն ու բողոք: Աինքը կախակայեցին լրիւ ժողովի մը մէջ, յանցանքներու համար, որոնք դեռ երէկ չէին ատիկա: Այնքան անպարար ենք ուրիշները գատապարտելու որոշում տալէն յետոյ: Ծոանդօն ընկեր մը, նիւ-

տնիւններու շատ կուռ շարքէ մը, կարգաց ջահջահիչ ամբաստանադիր մը, որ կը խարանէր անոր վեցամսեայ անջիզ ու անդեկ գործունէութիւնը, զինքը պատասխանատու բռնելով շարքերուն մէջ զգացուած անիշխանութեան, վէճի մոլութեան, հոս ու հոն արձագանգած գաղտնիքներուն, — պարագայներ, որոնք բնոյթը կը կրէին յեղափոխութիւնը տկարացնելու: Ի պատիւ դատախազին, ընկեր Մաթիկ շնորհակալութեամբ աւելցուց, որ դուրս-գործոց այդ սեւ զիրը յողուած մը չունէր գրամական զեղծումի: Մնաց որ, այդ կէտին վրայ ինծի անծանօթ չէր, դեռ այդ օրերուն, յեղափոխութեան անողոք վճիռը: Կ'անցնիմ արագ այդ տխուր փաստերէն: Անոնք, որ հիմա յիշատակներ կը պատմեն, իրաւասու են վճարական լոյսով մը պարզ ընել այդ մութ հոգեբանութիւնը դժնդակ աշխատուորին, որ այդ օրերուն գործիչն է: Անշուշտ մեծ պրկումով ու խոր աշխատանքով գուբաէն թափանցում մը քիչ մը բան կը լուսաւորէ: Բայց իրենցն է տիրական շեշտը: Ձեմ պահանջեր, որ գրականութիւն ընեն: Բայց պէտք է լայն տան մարդերը, աշխարհը, հոգեբանութիւնը, որ անոնցն էր այդ պայմաններուն մէջ:

(Շար. 7)

Յ. ՕՇԱՆԱՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ

1931ին ծնած, Փրենկի կամայտարանի բանասիրական ճիւղին վկայեալ, եսն ջաղաքի գոյններն մէջ աշուր Փրանտերին լեզուի ուսուցիչ, զանի մը դիրքերու հեղինակ եւ Փրանտական բանաստեղծութեան մէջ իրեն տեղ ապահոված վաճէ հոսէլ, անուազն հայ գրականութեան հետեւող ամէն անձ իմացած է, որ պաշտամունքի հանող սէր մը ունի մեր բանաստեղծութեան հանդէպ, որմէ եւ վերջին մէկուկէն տանձաձեռնին թարգմանական եր-մայշինքը ներկայացուց Փրանտայի եւ Փրանտերին լեզուին ծանօթ ընթերցողներուն: Եր թարգմանութեամբ վաճէ հոսէլ միայն վարուժանին նրատարակած է երկու ժողովածուներ, իսկ ուրիշ երկու աշխատանքներով՝ կատարած է ծաղկազոյ մը մեր գրականներին եւ հայրենի երիտասարդ ինք բանաստեղծներէ:

Աջեալ սարի, Ծրանայի Արեւելեան Լեզուներու Հրատարակչական աստնին ղըր-բոյնով մը լոյս ընծայեց վաճէ հոսէլի թարգմանած նահագնա Փուշակի հայրեններն ՅՈ կտոր, թարգմանիչին խնայելու մէկ ուշադրաւ յառաջարկով, որուն եզրակոչութիւնը՝ «Այդպէս է Փուշակը, այդպէս է Որքիւսը (տառալիպաններով մէջ ամէնէն առա-բակումը)․ այդպէս է վեճական Սիրտաքը, Համբարդը, գոր Անհամբարտիւնը կը լա-փէ գիշեր-ցերեկ... Խոջալափելով Անդամը, հարցախնդիրով Բազալայութիւնը, մինչև իսկ ժամանակին մէջ — հայնիսկ սարածութեան մէջ — ուր ան կը վերտեղծէ կատարել Ներ-կայութիւնը եւ կորուստով Միութիւնը»:

Այս ցեղեցիկ յառաջարկին ապաւորութիւնը, ցաւօք, չի կրկնուիք թարգմանչական արդիւնքին գիծաց:

Թարգմանիչին ասածած սէրը հայ բանաստեղծութեան հանդէպ, զգարմանայօրէն իմե-նատիպ եւ արդիականաց այդ բանաստեղծութիւնը օտարներուն ծանօթացնելու անոր կարողը, ինչ թուօք, կամարումով կը լեցնեն իրարանչիւր հայու սիրտ, թայց չեն ապահովիք սուէ՛ մէկուն բարեհաջակութիւնը (հոս նկատի չունինք շուտ գինեղցող մեր հայրենի գինեմե-րը) գուշակեան հայրեններուն առթիւով կիրարկած հոսէլի թարգմանչական արուեստին կա-պակցութեամբ, որ խոցելի է ըստ կուսեան ու զանի մը կողմերով՝ յապաւումներով, ան-հարկի յաւելումներով, հասկացողութեան թերիներով ու սեական տեսակ-տեսակ աղտու-ղումներով:

Մէկ լեզուին միւրը կատարումս փոխադրութիւններուն ասան գիտնք, որ անհար է նորագատութիւնը պակէլ շարիւր առ շարիւր սովորով, եւ անխուսափելի են որոշ պատ-շանկանմանքը, թայց պարզան այդ չէ հոս, հոս թարգմանիչը տանի ինքը կ'երևայ, զան հեղինակը: վաճէ հոսէլ կարծես Փուշակին նայելով բանաստեղծութիւնն որան է եւ ոչ թէ միջնագարու նշանաւոր հեղինակին նորագատութեան հաւատարիմ թարգմանութիւններ կա-տարած:

Բազալատութեան ու նաեւ թարգմանական արուեստին մասին խորհրդանութեան մզե-լու կամար ընթերցողը՝ հետագայ էջերուն կու տանք ինչորոշ աւարկայ թարգմանութեանէն զանի մը նմայեան, եւ անոնց թնայրիները, զէ՛մ գիծաց:

POÈMES D'AMOUR

Traduits de l'arménien par
VAHÉ GODEL

✱

Ô suave petit melon,
Quand pourrai-je enfin te cueillir?...
Ô mon bel océan,
S'il est vrai que la mer abolit tous les maux,
Que ne suis-je minuscule, au point
De pouvoir m'abîmer en ton sein,
Tel un oiseau de mer...; et je n'en sortirais
Que pour aller dormir à l'ombre de tes cils...

✱

Ô lune lumineuse, on dit que d'éclairer
Le monde d'ici-bas, tu tires vanité.
Or je tiens dans mes bras une lune terrienne:
La voici; face au mien, son visage scintille.
Oh! garde-toi de mettre en doute ma parole!
Elle est là, toute nue, sous le pan de ma robe...
Il suffirait que je la découvrisse
Pour que d'emblée l'amour te fît rendre les armes,
Ô lune, et ta lumière ici-bas faiblirait.

✱

Noirs sont tes yeux, noirs tes sourcils, et tes cheveux,
Tel un ruissellement nocturne sans égal...
Si tu ne viens cette nuit même auprès de moi,
Que le ciel te transforme en pierre! Mais si tu viens,
J'approcherai ton visage du mien,
Et nos souffles mêlés n'en feront plus qu'un seul.

✱

Belle inconnue, quelle est ton origine?
Où vivais-tu avant d'être venue?
Ta manche, ton corsage m'inondèrent de feu.
De ton amour tu fis de l'or, et tu
Le laissas fondre au creuset de mon cœur,
Pour en faire cette boucle qui brille
A l'oreillette de mon cœur.

ՍԻՐԱՅ ԵՐԳԵՐ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

✽

— Ա՛յ իմ փոքրիկ շամբոմ, քո ծոցուդ, ա՛մ, ե՛րբ տիրանամ.
Քո ծոցդ է ծով նման, ծովն դեզ կ'ստեն է չեմբան.
Փոքրիկ մրտեմնիկ լինամ ու մտնամ է ծոցդ ու լողանա
Մովուդ ալ է դուքս ելնամ, ունեբուդ շուքն էնանամ:

✽

— Լուսին, պարծենաս, ստես. «Էլոյս կուտամ ես ասորնւորիս»:
Անա հագեղէն լուսին է գրկիս 'ի երեսն երեսիս.
Քէ չես աւտալ այս գերուս, յես տանն գիշ կապայիս,
Վայելմ' սիրոյ տէր լինիս. լուս պակաս տաս ասորնւորիս:

✽

— Քույս աչք ու թույս ունի ունիս, թույս մազեր, կուպակ է հագիս
Մալլա կանկրտուր լինիս, Քէ չի գաս գիշերս է մտիս.
Քէ դու գաս գիշերս է մտիս, ես դնեմ գերեզդ երեսիս.
Նրեզդ երեսիս դնեմ, որ դպնու քո շունչդ է հագիս:

✽

— Ո՛ւր էիր, աւակի՞ց եկիր, անծանօք, ըզիս սիրեցիր.
Կրակն է քեզնիք ունիք, է ծոցիկս է վար քափեցիր.
Քո սէրդ ալ ասկի արիք, իմ սրտիս քուրան հալեցիր.
Դարձար զամ հալիս արիք 'ի իմ սրտիս ուկանչն անցուցիր:

**

Dépouille-toi de ta vieille vêtue,
 Va te vêtir d'or et de soie,
 Puis tu viendras parader devant moi,
 Toute grâce, toute mesure,
 Plus belle qu'une vigne enrobée de raisins.

**

J'ai deux amours; mais auquel donnerai-je
 Ma préférence? A les voir, on dirait
 La lune et le soleil.
 Ô lune, dont l'usage est de rester passive,
 Ce n'est pas toi que j'aime.
 Ô soleil, surgissant au point du jour, soleil,
 C'est toi que j'aime!

**

Ton visage: lune comblée,
 Ta chevelure: insondable ténèbre,
 Tes joues: fruit défendu, pomme du paradis,
 Tes yeux: surgis du fond des mers, tes yeux
 Pourvus de frêles arcs et de flèches trembleuses,
 Et ta bouche: tulipe, et ta bouche entrouverte:
 Corolle emplies de perles.

**

Ô lune, mon amie, dis-moi vers quel rivage
 Tu navigues parmi les ténèbres sans bornes.
 Chemin faisant, tu contemples la terre,
 Ô lune voyageuse, ô nocturne voyeuse,
 Tu t'insinues dans les demeures
 Auprès des belles endormies,
 Silencieuse, entrouvrant les chemises,
 Illuminant les aréoles..
 Ta lumière céleste obscurcit les étoiles.

**

Heureux le ravisseur
 Qui prend la fuite avec celle qu'il aime :
 A peine ont-ils passé le pont
 Que le torrent déborde, et le pont se disloque,
 Et la neige abolit la trace de leurs pas;
 Le ravisseur, portant sa douce proie,
 Gagne le cœur du plus beau des jardins,
 Et cependant que s'unissent leurs bouches,
 Le jour se lève.

— Քանի՞ ու քանի՞ ասեմ՝ մի՛ կննար դու խառ լաթերով.
Գնա ապրշում հագիր, որ նախշած է ոսկի թելով.
Արեգ, լուկ առջեւ անցիր, լո՛ւ քալե՛՛ քալդ համարով.
Ցայնժամ ինձ ազուար թուխ, քան գուռի որթն խաղողով:

Երկու ետրուկ գիս կ'ազէ, չգիտեմ թէ ո՞րն է սիրուն.
Մէկն ցերեկուան արեւ, մէկն լուսին՝ մութն գիշերուն.
— Լուսին, չեմ սիրեր գեղգ, դուն սովոր ես խոս կեանքուն.
Երբքամ գարեգակն սիրեմ, որ ծագէ լոյսն առուօտուն:

— Երեսդ ի լուսին նման, ու զիլֆերդ ի դադիր գիշեր.
Քնքեր բեհեշտի խնձոր 'ւ ծովուն տուած քեզ այեր.
Ուներ կեռ ու մեռ ունիս, թուխ այեր, թարթիչդ է նետեր.
Բերանդ է լալէ ֆինջան, մէջ ի լիւ է մարգարիտներ:

— Իմ բարձրագնայ լուսին, յա՛ւր կ'երբքաս գիշերդ անհուն.
Շատ յերգիւք ի վար հայիս. կու տեսնես շատ կիզէլ ի քուն.
Չկոնկիկն ալ արձակ արեր, լոյս դիպեր ի մէջ ծծերուն.
Շտաւաիդ յերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն:

Երեկ ես անոր կուտամ, որ աներ իւր յարն է փախեր,
Ոնց որ գկամուրջն անցեր, ջուրն ելեր գկամուրջն է տարեր.
Ձնիկ-եղեմնիկ, գառուրնուն հետէն է կարուսեր:
Ատեր ի պաղքան մտեր, ցարեկով գղնչիկն է պագեր:

**

Ô nuit, si tu pouvais durer toute l'année!
C'est la première fois depuis des siècles
Que mon amour vient me rendre visite...
Ô jour perturbateur, aube maudite,
Ô toi dont les lueurs cruellement dénouent
Les couples clandestins, n'approche pas de nous!

**

Le rossignol s'est posé sur la rose,
Au centre du jardin, pour se mettre à chanter...
Elle semble dormir en son essaim d'épines,
Mais elle entend la voix du rossignol
Et, déchirant sa robe verte en un clin d'œil,
Elle apparaît soudain tout de rouge vêtue.

**

Le rossignol suffoque en pleine mer,
Ecrouté dans la gueule hideuse du dragon:
«Que m'importe, dit-il, ce lamentable sort?
Ma rose est à l'abri du mauvais œil...»
Elle semble dormir en son essaim d'épines,
Mais elle entend la voix du rossignol
Et met en un clin d'œil sa vêtue en lambeaux.

**

Les oiseaux du printemps, floraison matinale,
Ô mes petits oiseaux, nul mieux que vous ne chante;
Voici le rossignol, voici l'amour en forme de parole;
Une perle sonore me glisse dans l'oreille,
Mes yeux s'embuent, j'éprouve la crue de mon regard.

**

Ma bouche, ma grenade, mon amande, ma rose,
Ma fleur de basilic, nulle matrice
N'a pu former pareille créature,
Le citron de ta lèvre donne une faim de loup,
Ta langue est la rivale heureuse du rossignol:
Tout ce qu'elle nomme désigne le printemps.

* *

— Գիշեր, դուստր կեցիք, տարեկ մի եղիք, թէ կարես, —
 Իմ եարն ինձ հիւր եկիք, — գետ հազար տարու, թէ գիտես.
 Առաւօտ, դու յետ կեցիք, որ գմեր խաղն չաւիրես.
 Գաս, գրոյսն ի վրայ բերես ու գիւ իմ եարէս բաժանես:

* *

Պիւլպիւլ ի յեզին մտաւ, ի վերայ վարդին թառեցաւ.
 Երանց գիւր բարի բերան եւ ասաց, մինչ որ լուսացաւ.
 Վարդն ալ ի փշի միջին տուտ ի բուն էր, գայն իմացաւ.
 Խօսեց գիւր կանանչ շապիկն, զկարմիր մի շուտով հագաւ:

* *

Պիւլպիւլն ի ծովին միջին, ի օճուն բերանն ու կ'սուէր.
 «Թող ես եմ ի յայս հալիս, թող իմ վարդն գեշ չի բաշէ»:
 Վարդն ալ ի փշի միջին՝ տուտ ի բուն էր, գայն կու լսէր.
 Լուկ իւր շարեղէն շապիկն ի չորեք դիմաց կու խօսէր:

* *

Այն առաւօտուն լուսուն ձայնն գայ գարնան ձագերուն.
 Ա՛յ իմ փոքրիկ ձագեր, ձայն անուշ է բանց ամէնուն.
 Ձագ մի կայ՝ պիւլպիւլ կ'ասեն, զինչ կ'սուէ՝ ամէնն սիրայ.
 Ձայնիկն ակննովս բնկաւ, չի դադարի աչերս ի լայս:

* *

— Այ իմ նուա ու ճուշ բերան, նուա ու նուշ, ծագիկ 'ւ բուսեան.
 Դու հագրեվարդի նման, մարն չի բերեր բեզ նման.
 Պոկունմէջ է լիման նման, կու բանաս դու մարդու մտտան.
 Լեզուդ է պիւլպիւլ նման, կու գովէ գինչ գարնան նման:

Լ. Մ Կ Ի Տ Չ Ե Ա Ն

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՇԵՇՏԸ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՄԼՁ

Գ.

Ստոյիկեան ուսմունքի հիմնադիր Չենոնը ծնուել է Կիպրոսի Կիտիոն քաղաքում մօտ 336 թ. (մ. թ. ա.) : Հարուստ վաճառականի դուստիկ էր, ինքն էլ նոյնպէս վաճառական : Փիլոսոփիա նամբողջելու ժամանակ նուարեկութիւն եղաւ, կորցրեց Հարստութիւնը եւ Ատտիկայի օփերն ընկաւ մօտ 315 թուականին : Վշտարեկ ու մտամուրթ չըլում էր Աթէնքի փողոցներում, երբ օրերից մի օր մի գրավաճառի մօտ աչքին ընկան որոշ զրբեր : Հետաքրքրուեց, թերթատեց, ինչոր տեղեր կարգաց ու ոգևորւած հարցրեց, թէ շորտե՞ղ են այս բաները ուսուցանող մարդիկ : Վաճառականը պատասխանեց հետեւեալը. ինչպէս է վկայում պատմութիւնը. «Փիլիսոփաները, տես պատմեմամբ մէկը քայլում է», — ցոյց տալով Կրատեսին : Չենոնը մօտեցաւ, ծանօթացաւ եւ դարձաւ Կրատեսի աշակերտը :

Կրատեսը շնականների դպրոցին էր պատկանում, ըստ որի մարդ պէտք է սովորի կամաւոր զրկանքներին, նուազեցրնի իր կարիքները եւ անկախ դառնայ բոլոր արտաքին իրերից, զրանով իսկ նմանութիւնը աստուածութեան : Բայց Չենոնը չբաւարարուեց Կրատեսից սորվածով : Նա այնուհետեւ յաճախեց Մեգարայի դպրոցը, ինչպէս եւ լիցէյ ու ակադեմիա : Ուստի՝ Չենոնի մշակած ուսմունքը սովորաբար համարւում է ընտրողական (էկլիպտիկ), որի մէջ տարրեր կան յունական փիլիսոփայութեան բոլոր դպրոցներից ու նոյնիսկ արեւելեան

մտածողութեան եւ ուսմունքների՝ հելլենիստական շրջանին յատուկ ընդհանրութիւններէց :

Այդպիսով, Չենոնը տարուեց փիլիսոփայութեամբ եւ նրա մէջ գտաւ կորցրած Հարստութիւնը : Ուշադրութիւնը կենտրոնացրեց շնականների ուսմունքի վրայ, բայց նրանով չզոհացաւ, այլ եղածը, ինչպէս ասում է, ընդլայնեց ու ազնուացրեց : Նա եւս ուսուցանում էր բարբերի պարզեցում, զրկանքի ու զոհաբերութեան պատրաստամութիւն, բայց փիլիսոփայութեան նպատակն էր համարում զլիսաւորապէս ինքնատիրապետումը եւ կեանքի ազնուացումը : Այս էր նրա մտածողութեան էլակէտը, երբ մօտ 300 թուականին հիմնեց իր փիլիսոփայական դպրոցը :

Դպրոցը հաստատուեց Աթէնքի երկար տասնամեակներից ի վեր լքուած մի շէնքում՝ «բազմազոյն սիւնասրահում», որի անունով էլ, — «Ստոյա»՝ սիւնասրահ, — Չենոնի փիլիսոփայութիւնը կոչուեց «ստոյիկեան» : Եէնքը աշխուժացաւ՝ նորանոր աշակերտներ ընդունելով, նոյնիսկ թագաւորի ուշադրութեան արժանանալով : Չենոնը զլիսաւորեց դպրոցը մինչեւ իր մահը՝ 264 թուականը, ու թէ եւ արեւմտեցի չէր՝ վայելում էր Համայնքի սէրը : Մահից յետոյ աթենացիները յուշարձանի վրայ արձանագրեցին. «Նրա կեանքը լիովին եամպպատասխանում էր իր ուսմանը» : Փիլիսոփայութիւնը, ստոյիկեների համոզումով, մարդկային կատարելագործման գիտու-

թիւն է եւ այդ նպատակին մօտենալու համար մարդ պէտք է իմաստութեան ձգտի: Իմաստունը նա է, ով ազատ է կրքերից եւ ինքն իրեն յաղթահարում է: Ճշմարիտ երջանկութիւնը կայանում է ներդաշնակ կեանքի մէջ, որով յաջողւում է աստուածային կատարելութեան ձգտել: Դրանից էլ հետեւեալ պատուերանները. — ամէն ինչի մէջ ինքդ քեզ հետ հաշտ եղիւր, հետեւիւր բնութեանը, ապրիւր բնութեան համեմատ:

Կարծողներ կան, թէ Ձեռնի մտքերը գրի չեն առնուել: Իսկ ուրիշներն էլ զբաւում են, թէ դրուել, բայց կորել են, որոնցից մի քանիսի վերնագրերը սրանք են. «Բնութեան համեմատ կեանքի մասին», «Բնագրի կամ մարդու բնութեան մասին», «Կրօնի մասին», «Պարտականութեան մասին», «Օրէնքի մասին», «Տիեզերքի մասին»: Այսպէս թէ այնպէս, այդ գրքերը այժմ չկան:

(Ինչպէս յայտնի է, Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում գտնուում են եւ այնպիսի հնագոյն երկերի հայերէն թարգմանութիւններ, որոնց բնագիրը կորել է: Նրանց թուում յիշուում է եւ Ձեռնի իմաստասէրի «Բնութեան մասին» երկը, բայց սովորաբար չի ճշգրտում, թէ ո՞ր Ձեռնի մասին է խօսքը: Ժամանակին ապրել են Ձեռնի անունով անուագն շորս տարբեր անուանի փիլիսոփաներ, իսկ բնութեան մասին գրել է գրեթէ իւրաքանչիւր փիլիսոփայ: Բայց կարելի է վստահօրէն ենթադրել, որ դա Ձեռնի ստոյիկը չէ):

Ձեռնից յետոյ՝ 264-232 թուականներին գպրոցը վարեց Կլեանտես Ասոսցին: Նա յայտնի է Ձեւին յղած մի աղօթքօրհներգութեամբ (հիմնով) ու շեշտը դրեց Ասոսու եւ նախահնամութեան վրայ: Կլեանտեսը Ասոսուն պատկերացնում էր իբրեւ գերագոյն էակ, յաւերժական ու ամենակարող, բնութեան տէր, բոլոր իրերի կառավարիչ, իբրեւ աշխարհի հոգի, աշխարհակառայի յաւերժական վարպետ, ճարտարապետ ու անսխալական կարգաւորիչ, մարդկանց հայրը, որը միայն բարիք կարող է կամենալ:

Կլեանտեսին յաջորդեց նրա աշակերտը՝ Գրիսոլոս Սուցին կամ Տարսնցին (231-204, մ. թ. ա.), զպրոցը վարելով 232 թուականից մինչեւ մահը: Ասում է, թէ գրել է 700ից աւելի աշխատութիւններ, նորագելով ստոյիկեան ուսմունքը եւ առաւելագոյն մակարդակի հասցնելով: Նրա մասին ասուել է. «նօթէ շիմէր Փրիսպար, չէր լիմի եւ ըստայան»: Ձեռնը, Կլեանտեսը եւ Փրիսպարը համարում են ստոյիկեան ուղղութեան առաջին փուլի ականաւոր ներկայացուցիչները:

Ընդհանրապէս, ստոյիկեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ ընդունում են երեք փուլ. առաջինը հիմնադիրներն ու անմիջական յաջորդներն էր ժամանակաշրջանն է, երկրորդը՝ մ. թ. ա. Չրդ եւ առաջին դարերն են, երբ նշանաւոր էին Պանայոսիսն ու Պոսելոնիսը, իսկ երրորդը՝ Սենեկայի, Էպիկտետի եւ Մարկուս Աւրելիոսի ժամանակաշրջանը:

Առաջին շրջանն աչքի է ընկնում վարդապետական խտտագանձութեամբ ու խտտելիութեամբ:

Երկրորդում՝ մեղմացում են սուր կողմերը եւ առաջին գիծ են քաշուում առաւել ընթացիկ կարիքները, զուտ բարոյագիտական նկատառումները:

Այդ միտումը աւելի է խորանում երրորդ շրջանում, հասնելով իր աւարտին, կենարոնական տեղ տալով անհատին ու անհատին գրողեցնող անմիջական մտահոգութիւններին:

Երկրորդ դարում (մ. թ. ա.) ստոյիկեան փիլիսոփայութիւնը տարածւեց նաեւ Արեւելքում, մանաւանդ Ատորիքում՝ Դիոդենես Բարեկացու միջոցով, որի աշակերտն էր Պանայոսիսը (մօտ 180-100, մ. թ. ա.): Պանայոսիսը Հրատոսցի էր, ուսանել է Աթէնքում, բայց երկար ժամանակ ապրել ու գործել Հռոմում, ստոյիկեան ուսմունքը տարածելով նաեւ Հռոմում իր աշակերտներին միջոցով: Առաջացած տարիքում վերագարծաւ Աթէնք եւ մինչեւ մահը գրէր խաւորեց ստոյիկեան դպրոցը: Գրել է «Պարտականութեան մասին» գիրքը:

Ենչորդ դրել է մարդկանց պարտաճանաչութիւն սովորեցնելու վրայ եւ իւրացրել է նաեւ Պլատոնի ու Արիստոտելի փիլիսոփայութեան որոշ տարրեր:

Պանայտոսի աշակերտն էր Պոսեյդոնիւսը (մոտ 144-60, մ. թ. ա.), որը ծնունդ է Միդիայի Ապամեոս քաղաքում, բայց ապրել Հոռոզոսում եւ հիմնել ստոյիկեան նշանաւոր դարձած դպրոցը: Ետո է ճամբորդել եւ գրել պատմական, աշխարհագրական ու փիլիսոփայական երկեր: Միտաիք փիլիսոփայ եւ իր ժամանակի էպիկուրեանները հակառակորդ: Զբաղուել է աստղագիտութեամբ, տարրինակ դրոյթներ առաջ քաշելով: Նրա գրած երկերից յայտնի են — «Պատմութիւն» (52 մասից), «Ուվկիանոսի մատիւն», «Աստաւածների մասիւն» «Կախարդութեան մասիւն»: Մեծ ազդեցութիւն է թողել ժամանակակիցների վրայ:

Փիլիսոփայութեան պատմաբանները շատ զեպքերում ստոյիկեան ուսմունքի համար ընդդոշ են համարում ո՛չ միայն ընտրողականութիւնը, այլեւ որոշակի ներքին հակասութիւնները: Եւ դա միանգամայն բնական է: Մէկ մարդու ստեղծած ուսմունքի մէջ նոյնիսկ չեն կարող այս կամ այն կարգի հակասութիւններ չլինել: Իսկ շատերի ջանքերով մշակուած ուսմունքի մէջ՝ առաւել եւս: Ետո տխուր բան կը լինէր փիլիսոփայութեան համար, եթէ բոլորը կրկնէին բոլորին եւ աշակերտները ոչինչ չաւելացնէին ուսուցիչներին ուսմունքին: Իսկ վերաբերում է եւ ստոյիկեան ուսմունքին, որը 500 տարուց աւելի կանգուն մնաց եւ բազմաթիւ փիլիսոփաների ապաստան եղաւ:

Արդէն նուեցին ստոյիկեան փիլիսոփայութեան երեք փուլերը: Իսկ նշանակում է, որ իւրաքանչիւր փուլ ինչոր բանով տարբերում է միւսներից: Եւ իւրաքանչիւր փուլի մէջ տարբեր մտածողներ իրենց հերթին տարբերում են միմեանցից: Ուստի՝ թւում է, թէ անկարելի է ստոյիկեան ուսմունքի ամբողջական բնութագրութիւնը տալը: Բայց զանի որ որոշ թուով փիլիսոփաներ իրենց հռչակել են ստոյիկեան եւ ընդու-

նելի են համարել այդ ուսմունքի հիմնական, էական, առաջատար դրոյթները, պէտք է կարծել, որ ամբողջական բնութագրութիւնը հիմք ունի եւ օրինաւոր է:

Այդ բնութագրութիւնը այս կամ այն չափով պայմանական է, բայց ոչ սխալ: Կարող է բոլոր ստոյիկեաներին հասարակապէս յիշեցնել, բայց իւրաքանչիւրին վերաբերում է ինչոր չափով: Այս վերապահութեան պատճառներից մէկն էլ այն է, որ յայտնի պատճառներով հիմնականում կորուստի են մատնուել բուն ինքնազիր շարադրանքները եւ գրքից դիրք անցած, երբեմն էլ կողմնակի մարդկանց թողած տեղեկութիւնների հիման վրայ է ամփոփուած ստոյիկեան ուսմունքը, վերականգնուած նրա կուռ շէնքը, եւ ուստի հնարաւոր են ամէն տեսակ վրիպումներ, թիրեւս էլ գունաւորուած վերագրումներ, թիրեւս էլ ամէն պէտք է մնալ գլխաւորի վրայ:

Ինչպէս ժամանակի բոլոր փիլիսոփաները, ստոյիկեանը եւս բարոյագիտական մտահոգութիւններով են ապրել, որոնել երջանկութեան հասնելու ուղիներ: Բայց եթէ էպիկուրեանները երջանկութիւնը տեղաւորում էին անդորրութեան ու հանգստի, այսինքն՝ մարմնի եւ հոգու լիցքաթափման մէջ, Չենոնը այն զետեղում էր յարուածութան եւ ջանքերի մէջ: Բնութեան ստոյիկեան պատկերացումը բնապաշտական համաստուածութիւնն էր, իոնեան փիլիսոփայութեան օրինակով: Ի տարբերութիւն էպիկուրի, որը ժխտում էր բանականութիւնը եւ ամէն ինչ համարում պատահական զուգահէտութիւնների արդիւնք, Չենոնը գտնում էր, որ ամէն բան կարգաւորուած է ճակատագրով եւ անհրաժեշտաբար կապուած՝ պատճառի ու արդիւնքի յարաբերութեամբ: Նա ամէնուրեք բանակառնութիւն է տեսնում՝ աշխարհի բազադրիչ տարր համարելու չափ եւ բնազանցութիւնը բնութեան մէջ լուծելու տրամադրութեամբ:

Ստոյիկեան բարոյագիտութիւնը եւս, բնականաբար, պայմանաւորուած է փիլիսոփայական միւս բնագաւառան-

րի՝ բնագիտութեան եւ տրամաբանութեան ստորիկեան սկզբունքներով: Աշխարհը պատկերացում է իբրեւ մի ընդարձակ ու ամբողջական մարմին, իսկ տարբեր էակները այդ մարմնի անդամներ, ու իրազարժութիւնները՝ դերեր: Ամէն ինչ անհրաժեշտաբար մարմնական է, կազմուած երկու տարրից՝ կրաւորական (բուն նիւթը) եւ գործուն (լարուած միճակում ուժը, մտածող ու բոցավառ շունչը), որը նոյնպէս նիւթ է՝ մի այլ բնութի: Այդ հուրը մարդու մէջ կոչուած է հոգի կամ բանականութիւն, իսկ տիեզերքում՝ Աստուած կամ բնութիւն: Էակաները տարբերուած են այդ գործուն տարրի ներկայութեան չափով՝ ամենապարզից մինչեւ Աստուած: Այդ տարրն է, որ թափանցում է ամէնուր, իր լարուածութեամբ, շարժում եւ կենդանացրնում ամէն ինչ: Այսպիսով՝ Աստուած, բնութիւն եւ բանականութիւն, նոյնանունով են, արասայտելով միեւնոյն իրականութիւնը: Սակայն այս ամէնը ենթակայ է ճակատագրի գերագոյն օրէնքին եւ այս աշխարհում ամէն ինչ անհրաժեշտութիւն ու ճակատագիր է, եւ այն ինչ որ մենք կոչում ենք գուգապիպութիւն, ազատութիւն, պատահականութիւն, բխում է պատճառների մեր անգիտութիւնից: Հետեւապէս, պէտք չէ ըմբոստանալ բանականութեամբ կարգաւորուած կարգի դէմ, եթէ նոյնիսկ թիրիմացարար դա շարիք է թւում: Սա բընազիտական ելակէտ է:

Այստեղից էլ տրամաբանում է, որ գործուն սկզբունքը՝ կրաւորական ու անշարժ նիւթի հետ կազմելով ամբողջ գոյութիւնը՝ օժտուած է զանազան յատկութիւններով ու դերերով, ըստ էակի աստիճանի. զօղուելու ուժը՝ Հանքերի մէջ, ծելելու ուժը՝ բոյսի մէջ, զգայուն հոգին՝ կենդանու մէջ, բանականութեան ուժը՝ մարդու մէջ: Բանականութիւնը օժտուած է երկու հիմնական ունակութեամբ՝ ճանաչողութեամբ եւ գործողութեամբ: Ճանաչողութեան աղբիւրը զգացողութիւնն է, ուստի՝ Վիճուքի մէջ չկայ ոչինչ, որ նախապէս եղած չլինի զգացման մէջ: Հոգու մէջ զգա-

ցումն իր հերթին առաջ է բերում լիսւղին կամային հակազդեցութիւն՝ Հաւանութիւնը: Ճանաչողութեան յաջորդ աստիճանը ըմբոսումն է, երբ առարկան ներկայանում է անդիմադրելի ակնյարտութեամբ: Եւ, վերջապէս, բաղձաթիւ ըմբոսելի պատկերացումներից կազմուած է ընդհանուր գաղափարն ու բուն գիտութիւնը:

Ձեռնը զգացումը համեմատում էր թաց ափի հետ, Հաւանութիւնը՝ կիսափակ, ըմբոսումը՝ փակ, իսկ գիտութիւնը՝ փակ եւ մի այլ ձեռքի սեղմուած ձեռքի հետ:

Ուրեմն, ստորիկները ուժի չափով են որոշում ճանաչողութեան կատարելագործումը, եւ գիտութիւնը առաջինութեան նման ծնւում է լարուածութիւնից, թափուած ջանքից: Սրանից բխում են մի շարք ծայրայեղութիւններ: Բայց դա ուրիշ հարց է: Իսկ բանականութեան գործուն ունակութիւն են Համարում բնազդը, կամքը եւ կիրքը: Բնազդը ցոյց է տալիս շարժող սկզբունքի գարթօնքը, կամքի մէջ բանականութիւնը ինքն իրեն լիովին տիրում ու կառավարում է, իսկ կրքի դէպքում՝ ընդհատուած եւ թուլանում է:

Ստորիկեան բարոյագիտութեան մէջ առաջինութիւնը դերագոյն եւ միակ բարիքն է: Միակ բարիքին հակադրուած է միակ չարիքը՝ արատը: Իսկ այն ամէնը, ինչ որ ոչ առաջինութիւն եւ ոչ էլ արատ է, — Հարստութիւն կամ աղքատութիւն, փառք կամ անպատուութիւն, առողջութիւն կամ հիւանդութիւն ու նոյնիսկ մահ, — ո՛չ բարիք է, ոչ էլ չարիք, այլ բացարձակապէս անտարբեր բաներ: Ըստ Ձեռնի, առաքինութիւնը ոչ թէ կատարելագործման ձգտում է, այլ հենց կատարելութիւնն ինքը, մի բացարձակութիւն, որը չի աստիճանաւորում, ուստի՝ բոլոր սխալները Հաւասար են, ինչպէս եւ բոլոր լուս գործերը: Բացի այդ, առաջինութիւնը ինքն իր սեփական Հատուցումն է, նաեւ ամբողջ երջանկութիւնը, որը մարդ ընդունակ է ընկալելու: Իմաստունը դրան Հասնելով՝ տիրանում է ամբողջ բարիքին, դառնում

աստուածներին հաւասար, նոյնիսկ աւելին, քանզի ինքը իր կատարելագործման համար պարտական է միայն իրեն, մինչդեռ աստուածները դա իրենց բնութեան մէջ արդէն ունեն:

Բայց ինչի՞ մէջ է կայանում առաքինութիւնը: Ստոյիկների համոզումով՝ պէտք է ապրել բնութեան համաձայն: Ճիշտութեան համաձայն սկզբունքն էլ իր ճերթին տարբեր է մեկնարանում: Ըստ ուսմանց, դա կայանում է մեր մարդկային բնութեանը պատշաճ ու աստիճանակարգուած գործողութիւնների մէջ: Իսկ ըստ ուրիշների՝ բանականութեան մէջ, որը կարելի է դիտել երկու տեսանկիւնից, — կարգուկանոնի եւ ներդաշնակութեան, որը նա հաստատում է աշխարհում, եւ ջանքի ու լարուածութան, որը ենթադրում է այդ կարգուկանոնը հաստատելու համար: Առաջին դէպքում՝ առաքինութիւնը կայանում է մեր ներսում եւ մեզինքն դուրս կարգ ու միասնութիւն ստեղծելու մէջ, որի օրինակը բնութիւնն է տալիս: Երկրորդ դէպքում՝ բանականութիւնը, լինելով աշխարհի գործուն սկզբունքը, հիմնականում ուժ է, լարուածութիւն, ջանք, հետեւապէս՝ առաքինի եւ բանականութեան իսկապէս ներդաշնակ գործողութիւնը պէտք է արտայայտուի առաւելագոյն ջանքով ու լարուածութեամբ:

Նկատելի է ստոյիկան բարոյագիտութեան խստապահանջութիւնը: Բայց իր ժամանակ դա ապաստան է ծառայել որոշ թուով մարդկանց համար, որոնք բարոյական չփոթութեան ու անկման պայմաններում ելք են որոնել դէպի հոգու բարձունքները: Հնարաւոր է, որ այդ տեսութիւնը, ինչպէս ասում է, աւելի շատ հիացողներ, քան աշակերտներ է ունեցել: Բայց իրականում գոյութիւն է ունեցել եւ ուղեցոյցի դեր կատարել: Ստոյիկներից շատերը դատապարտել են նաեւ սարկութիւնը՝ իբրեւ բնութեան հակառակ երեւոյթ: Նրանց մարդկային կանոնները շատ յաճախ հասել են աշխարհաբազմապիտանութեան: Թերեւս դա իւրապատուկ հակադրացութիւն էր այնքան տարածուած փոխա-

դարձ բղկտումների հանդէպ: Թերեւս էլ՝ ժամանակի արամադրութիւնների փոխոտփայական ամփոփումն էր սոսկ: Այսպէս թէ այնպէս, պատմութեան ընթացքը դրանով չփոխուեց:

Ստոյիկների համոզումով, իւրաքանչիւր էակի մէջ կայ ինքնապահպանութեան հակում, ինչ որ ո՛չ միայն արարացուած է, այլև անհրաժեշտ ու բարբար է թուում: Խօսքը հակահասարակական եսամոլութեան մասին չէ, այլ մարդկանց հասարակութեան մէջ եւ ժողովուրդների միջեւ իւրաքանչիւրի տեղը որոշելու: Եւ այս ինքնապահպանման սկզբունքի հիման վրայ, ամէն ոք ձրդատում է նրան, ինչ որ հաշտ է բնութեան հետ: Բնական է այն կեանքը, որը ընթանում է համաձայն բնական, Աստու կամեցած աշխարհակարգի եւ նրանից բխող բանական պատկերացման: Դրանով է պայմանաւորուած առաքինութիւնը: Հանոյքը չի կարող նպատակ ծառայել մարդու համար: Առաքինութիւնը ինքնարաւ է. ո՛չ արտաքին պատահականներն ու յարաբերութիւնները կարող են ազդել, ոչ էլ իմաստուն կարող է ենթարկուել սեփական ներքին կրքերին («ատարաքսիալի» եւ «ապատիալի» ժրխտական նշանների ներքոյ):

Կարելի է ստոյիկեան բարոյագիտութեան դրոյթները մեկնաբանել բոլոր կողմերից, շուտով տալով եւ տարբեր կէտերից դիտելով: Միշտ էլ հարցերից հարցեր կարող են ծագել: Բայց հիմնականը այն է, որ ստոյիկների պատկերացրած երջանկութիւնն ու առաքինութիւնը այն չէր, ինչ որ էպիկուրեաններն էին պատկերացնում: Ստոյիկների համար ընտրոշ է մշտական ձղտումը, լարուածութիւնը, ինքն իրեն յաղթահարելու մտասեւեռումը, տիեզերական ամբողջութեան հետ ներդաշնակ լինելու համոզումը, այդ ամբողջութեան ու մասնակի իրողութիւնների փոխադրութեան վերաբերեալ բաւական իւրապատուկ լաւատեսական պատկերացումը, եւ այլն: Ստոյիկեան ուսմունքը, առաջին հերթին, փոխոտփայական ուսմունք եւ փոխոտփայանների համար էր:

Բայց այդ ուսմունքին տեղեկանում եւ հազորդակցում էին նաեւ հասարակութեան միւս խաւերը: Ուսմունքը տարածւում էր երկրից երկիր եւ մտայնութիւն ու մթնոլորտ ստեղծում:

Արդէն ասուեց, որ մ. թ. ա. Չրդ դարում ստոյիկեան ուսմունքը տարածում էր դաննի նաեւ Հռոմում: Հռոմէացիները, ինչպէս յայտնի է, դործնական մարդիկ էին եւ հակուած չէին իմացական զբաղմունքների: Բաւական ուչ, այն էլ որոշակի դիմադրութիւնից յետոյ, նըրանք համաձայնուեցին շփուել յունական փիլիսոփայական մտքի հետ, երբ 156 թ. (մ. թ. ա.) երեք ակումաւոր փիլիսոփաներ Աթէնքից իբրեւ դեսպաններ ուղարկուեցին Հռոմ (ակադեմիական կարեւագիւր, պերիպատետիկեան Կրիտոլլոսը եւ ստոյիկ Դիոգենէսը): Այդ ղէպբում էլ նրանք հետաքրքրուած էին բացառապէս բարոյագիտական ուսմունքներով՝ էպիկուրեան եւ, մասնաւանդ, ստոյիկեան:

Էպիկուրեան ուսմունքը, թէեւ որոշ արձագանգ ունեցաւ, երբեք լայն տարածում չգտաւ Հռոմում: Եղան մի շարք անուանի մարդիկ, որոնք զնահատեցին այդ ուսմունքը: Բայց եղան եւ այնպէսիները, որ կառչեցին սոսկ էպիկուրի ուղղակի «հաճոյքին», իրենց անկարգութիւնները քողարկելու եւ հիմնաւորելու նպատակով:

Մինչդեռ ստոյիկեան ուսմունքը պարտ հող գտաւ, մասնաւանդ Հռոմէական հասարակութեան վերին խաւերի մէջ: Առաջին դարում (մ. թ. ա.) այդ ուսմունքը ըստ երեւոյթին դեռ աւելի շուտ ընկալուեց, քան մակուեց: Որովհետեւ պատմութեանը այդ ժամանակից յայտնի չեն զուտ Հռոմէացի ականաւոր փիլիսոփայ հեղինակներ: Առանձին տեղ է բռնում Կիկերոնը (106-48, մ. թ. ա.): Բայց նա փիլիսոփայ չէր, այլ բազմակողմանի հետաքրքրութիւններ ունեցող մարդ՝ պետական գործիչ, հռետոր եւ, վերջապէս, փիլիսոփայութեան պատմաբան: Բացի այդ, Կիկերոնը աւելի շատ համակրում էր «Նոր ակադեմիան», թէեւ ընդհանրապէս ցուցաբերել է ընտրո-

զական ոգի: Բայց իր որոշ երկրներում նա բացայայտօրէն կանգնած է ստոյիկեան դիրքերում՝ բարոյագիտութեան հարցում: Այն էլ՝ երկրորդ փուլի բարոյագիտութեան, որը ժողովացուել եւ յարմարեցուել էր հռոմէական գործնական ու զրական հոգեբանութեանն ու բարքերին:

Սակայն աւելի ուշ՝ կայսրութեան ժամանակ, հենց Հռոմում երեւան եկան ստոյիկեան փիլիսոփայութեան ամենակարկառուն ղէմքերը: Բաւական է յիշել Սենեկայի, Էպիկտետի եւ Մարկուս Աւրելիոսի անունները: Նրանք, անշուշտ, միայնակ ծառեր չէին, նրանց շուրջը ուրիշները կային: Բայց նրանց երկերի մէջ է, որ արտացոլում գտաւ ժամանակի առաջատար մասծոյլութիւնը, ինչպէս եւ հենց բուն ստոյիկեան փիլիսոփայութեան ընաշրջման պատկերը, էլ չըխօսած հասարակական տեղաշարժերի ու նրանց օրինաւարութիւնների մասին:

Հարց կարող է ծագել, թէ ինչո՞ւ յատկապէս ստոյիկեան ուսմունքը ամէնից շատ տարածում գտաւ: Այդ երեւոյթը պատահական էր, թէ օրինաւոր: Պատահականութիւններն էլ, անշուշտ, իրենց տեղը կարող են ունենալ: Բայց երբ համեմատում ենք էպիկուրեան եւ ստոյիկեան ուսմունքների էութիւնը եւ նկատի առնում նրանց հանրային արձագանգներն ու հետեւանքները, առաջնութիւնը տալիս ենք օրինաւարութեանը:

Էպիկուրեան ուսմունքը խորապէս պաշտպանողական ընդթ է կրում: Աստուծոյն դա մղում է մեկուսացման, թէկուզ եւ աղնիւ օւ առաքինի մեկուսացման: Ոմանց կարող է եւ յաջողուել այդ պերճանքը: Բայց եթէ այդ վարքագիծը ընդհանրանալ (այսպիսի անկարելի ենթադրութեան դիմենք), այն ղէպբում առհասարակ հասարակութիւն չի լինի: Իո՞վ հասարակութեան գոյութիւնը երկրի վրայ անխուսափելի է՝ թէ՛ իրրեւ առարկայական իրողութիւն եւ թէ՛ հենց անհատ մարդկանց բարիքի համար: Յաւից խոյս տալը հաճելի եւ հասկանալի է, բայց դրանով մինչեւ ո՛ւր կարելի է հասնել: Ոչ մի տեղ: Կարելի է միայն

գործել նորն կէտում :

Ստոյիկները եւս իրենց համախոհներին խորհուրդ չէին տալիս հասարակութեան գործերին անմիջապէս խառնուել : Թող զրանով ուրիշնե՛րն զբաղուեն, — կարծես թէ ասում էին նրանք : Փիլիսոփայի գործը, ըստ նրանց, բանականութեանը ընկերանայն է : Բայց ստոյիկեան ուսմունքի ողին այնպիսին էր, որ մեկուսացումը պարտադիր չի դառնում : Ճիշդ, ջանքի, ուժի, լարուածութեան, յաղթահարման եւ նմանօրինակ, թէկուզ եւ վարդապետական ըմբռնումները ճանապարհ են բացում եւ հանրային կեանքի ու գործունէութեան համար, չեն բացառում վերջինիս հանրօգուտ կամ այլ նշանակութիւնը : Քանզի ամէն ոք, եթէ ասլում է հասարակութեան մէջ, ստիպուած է լինում կեանքի առաւել կամ փոքր ծասը, այսպէս թէ այնպէս, հարուածների ու ցաւի տակ անցկացնել : Ուրեմն՝ ինչպէ՞ս եւ ո՞ւր խոյս տալ : Վերջին հաշուով՝ մնում է միայն ճակատագրական մարտահրաւէրն ընդունել ու ըստ այնմ գործել :

Սենեկան, մարդկային հասարակութեան մէջ անհատի ու քաղաքականութեան փոխարարներութեան հարցը արծարծելու տոթիթով, իր երկրից մէկում գրում է հետեւեալը. — «Էպիկուրն ասում է. Իմաստունը պետութեան գործերին չպիտի է խառնուի, եթէ որեւէ յատուկ բան ցրան չտալից : Դրա դիմաց Ձեռն թաւում է. նա պետութեան գործերին պիտի է խառնուի, եթէ որեւէ յատուկ բան արգելի չեմոնդիտեաց : Մէկը քաղաքականութիւնից հեռու կեանք է պահանջում սկզբունքով, իսկ միւրը՝

միայն բոլորովին յատուկ դէպքերում :

Այս յիշատակումը լաւագոյն բացատրութիւնն է : Եթէ էպիկուրը եւ իր համախոհները սիրում էին խաղաղ մեկուսացում, բարեկամական շրջապատ, ինքնաբաւ շափաւորութիւն, ստոյիկներն այս կամ այն ձեւով արձագանգում էին հասարակութեան ճայնբրին : Վերջիններս թէեւ իրենք անմիջապէս չէին ըզբաղում հանրային գործերով, կապուած էին այդ գործերը վարողների հետ : Ու չազրաւ է, որ Ձեռնոր սկզբից եւեթ վայելում էր թագաւորների հովանաւորութիւնն ու բարեկամութիւնը : Պակաս ուշագրաւ չէ, որ ստոյիկեան փիլիսոփայութեան վերջին ակնհայտ դէմքը հրեոսէական կայսր էր՝ Մարկուս Աւրելիոսը : Իսկ Սենեկան միայն փիլիսոփայ չէր, այլ իր ժամանակի նշանաւոր հանրային գործիչներից մէկը :

Ահա թէ ինչու ստոյիկեան ուսմունքից շխորչեցին Հռոմում, մասնաւոր մեծամեծները : Դա նրանց առջեւ միշտ բաց էր պահում գործելու դաշտը, հիմնաւորում կարգուկանոնի եւ կարգապահութեան պատկերացումները : Ստոյիկեան ուսմունքի աշխարհաբացարձական ընդթր իր հերթին որոշ իմաստով չէր հակասում եւ հոռոճական մեծապետական բմբռնումներին : Ճիշդ է, փիլիսոփաները՝ իբրեւ մտածող մարդիկ, աշխարհաբացարձակութիւն էին քարոզում դուրս մարդասիրութեան անունով, բայց այդ բանը իշխանաւորները մեկնաբանում էին իրենց սեփական հասկացողութեամբ : Կարեւորը կայսրութեան գոյութիւնն էր, մեծութիւնը եւ առաւել մեծ թուով ժողովուրդներ ու մարդիկ ընդգրկելը :

(Շար. 3)

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

«ԲԱԳԻՆ» Ի

ԶՐՈՅՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՈՒՆՍԻ ԷԼ - ՀԱՃԻ ՀԵՏ



— Ասիլէ առայ, հաւամարար, մէկէ աւելի անգամներ ձեզի ուղղուած է մեր շրթներուն յամախոյզ առաջին հարցունք, բայց նկատի ունենալով ամոր հետաքրքրականութիւնը, պիտի ուզէիմք իրրել մտաւ հարց տալ՝ ի՞նչու՞ բանաստեղծութիւնը, ի՞նչու մա՛նաւանդ արձակ ու ազատ բանաստեղծութիւնը եւ, վերջապէս, ե՞րբ սկսաւ բանաստեղծութիւններ գրել :

— Իւրաքանչիւր անձ կը փորձէ ինքզինք դրսեւորել արտայայտչական այն եղանակով, որ ամէնէն աւելի կը ներդաշնակուի իր ներքին էութեան հետ, կամ կը փորձէ արտայայտուիլ այն ձևով, որ ըստ իրեն լաւագոյնն է արտա-

յայտչական ձեւերուն մէջ : Այլ խօսքով՝ արտայայտչական ձեւի ընտրութիւնը ունի դիտակից եւ անդիտակից դրդապատճառներ, որոնք կախում ունին արուեստագէտ մարդուն նկարագրէն, կեանքի պայմաններէն ու այն բոլոր ազդեցութիւններէն, որոնց ենթարկուած է օրերու ընթացքին :

Ինչպէս սկսայ բանաստեղծութիւն գրել : Բանաստեղծութիւն սկսայ գրել շօշափումի եղանակով, նման այն մարդուն, որ խաւարին մէջ շօշափելով կը ճշդէ իր ճամբան : Ասիկա սկսաւ տարիներ առաջ, երբ գեռ ուսանող էի : Սկիզբները կը գրէի ես ինծի Համար ու կը սարսափէի զբաններս մէկուն ջոյց տա-

լէ: Այս մթնոլորտին մէջ, ինքնեկ ձեւով եկաւ բանաստեղծական այն ձեւը, որուն հետեւեցայ հետագային: Այո՛, արձակ բանաստեղծութիւնը եկաւ ինքնեկ ձեւով, այդ մասին երբեւիցէ մտածած չէի: Ամենայն պարզութեամբ եւ ամենայն անկեղծութեամբ տեսայ, որ կը գրեմ այդ եղանակով, առանց գիտնալու ինչուն: Արտայայտչական այդ ոճը կարծես ինձմէ բխած ըլլար, եւ խորքին մէջ անիկա եղաւ անձնական ոճ մը, որմէ չըբարձուեցայ, որովհետեւ ամէնէն շատ կը նմանէր ինծի, ամէնէն շատ կը նմանէր ըսել ուղածիս եւ ամէնէն շատ կը ներդաշնակուէր կեանքիս կըստ թիւն ու խղճմանքիս հետ:

— Ինչպէ՞ն է կ'աշխատիք: Գրելը առհասարակ դիրքի՞ն, թէ դժուար արարք մըն է ձեզի համար:

— Գոյութիւն չունի գրական օրէնք մը, որով կարենամ պատասխանել, թէ գրելը դժուար՞ է, թէ դիրքին արարք մըն է: Խօսքս կը վերաբերի բանաստեղծութեան եւ ոչ թէ յօդուածագրութեան, որ ասորքեր նիւթ մըն է ու զիս շատ չի շտապեցոր: Բանաստեղծութեան մասին խօսելով՝ ըսեմ անմիջապէս, որ գրելու գործողութեան գոնար կամ դիրքին ըլլալը կախում ունի պարագաներէն: Երբեմն տարիներ կ'անցնին առանց որ բառ մը գրեմ, ու երբեմն ալ քանի մը օրերու ընթացքին կ'աւարտեմ երկարաշունչ քերթուած մը, կամ կը գրեմ քերթուածներու ամբողջ շարք մը, առանց մեծ դժուարութեան: Գուցէ ասոր բացատրութիւնը պէտք է փնտռել ներքին ճշունտի մը իրողութեան մէջ: Եթէ բանաստեղծութիւնը խոր, երկար ու թթմորուած ճշունտ մը բխող պայթումը հանդիսանայ՝ կու գայ աւելի դիրքութեամբ, քան կամքի եւ գիտակցութեան ճշունտով ըստացուած բանաստեղծութիւնը, որ ծրուանդն է պէտք է բանաստեղծութիւն գրեմ, ուրեմն պէտք է սեղանին առջեւ նստիմ ծրագրային որոշումին: Խորքին մէջ ես երբեւիցէ չեմ որոշեր պէտք է նստիմ ու բանաստեղծութիւն գրեմ: Գրելու այս ձեւը ճիշդ ու առողջ չէ: Չեմ հաւատար այս ձեւին, չմտնալով հան-

դերձ, որ բանաստեղծը եթէ անպայման բան մը գրելու ուզէ, ինչպէս, օրինակ, պարագայական եւ ուսուցողական ոտանաւորներ, կրնայ գրել: Սակայն բանաստեղծական իմ վաստակօ, իր ջանքերի սովորով, գրուած է ներքին ճշունտի մը օգնեցութեան տակ:

— Ուրեմն բանաստեղծութիւն գրելու արարքը ձեր մօտ մերքին ճիշունտի մթնոլորտին մէջ կատարուած թթմութեամբ յարգող պայթումն է, որ կը մօտեցայ օթոմաթիք հասնի ստիմանումին, որովհետեւ ըսիք մասն, թէ գոյութիւն չունի գրելու յստակ օրէնք մը: Արդեօք օթոմաթիք գրելու մասն է ձեր ստեղծագործական արարքին նկարագիրը, եւ թէ յոյ՞ է, գոյութեամբ արարելն եմք առար կատարելն վրայ կ'աշխատի՞ք արդեօք:

— Նախ եւ տուջ կ'ուզեմ կանգ առնել օթոմաթիք բառին առջեւ: Կը գզուշտանամ այս ու նմանօրինակ բառերէ, որովհետեւ գերիբապաշտ շարժումը ասոր տուաւ սահմանեալ իմաստ մը, որ բոլորովին անհաշտ է գրելու իմ եղանակին հետ: Չեմ ժխտեր անշուշտ, թէ անուշին շրջանի բանաստեղծութիւններու մեծ մասը մասնաւորաբար գրեցի օթոմաթիք հոսքի նմանող ոճով մը, այսինքն՝ առանց յստակ արամարտութեան: Կ'ուզեմ արեւցնել ասոր վրայ, թէ որեւէ բանաստեղծութիւն, արդէ ըլլայ անիկա թէ հին, ինչ զպրոցի ալ պատկանի կամ ուզեն որ պատկանի, ունի օթոմաթիք մաս մը, որովհետեւ բանաստեղծութեան գործողութեան ընթացքին կ'ազատազրուի բանաստեղծին քննադատութիւնը եւ իր բոլոր զգայարանները կը նախգոյն, ինչպէս կ'արթնան իր բոլոր երանները եւ մշակութային բոլոր ծանօթութիւնները:

Ուրեմն, ինքս օթոմաթիք գրակատութեան հետեւորդներէն չեմ: Քերթուածին երկրաչափական կառոյցին մասին խօսելով՝ ըսեմ, թէ ծանօթ իրողութիւն է, որ իւրաքանչիւր բանաստեղծութիւն կ'ամբողջանայ քերթուածի յղացքին երկրաչափական կառուցումով, այս մասին խօսիլը արեւորդ կը նկատեմ, որովհե-

տեւ, ինչպէ՛ս ըսեմ, Հակոտակ անոր, որ կ'ատեմ պարտաւորութիւն բառը, անիկա բանաստեղծական պարտաւորութիւն մըն է, բանաստեղծին պարտաւորութիւններէն մէկը: Կը կարծեմ, թէ ճիշդ ձեւ չէ իւրաքանչիւր քերթուած գրելէ ետք դասախօսել անոր կառուցողական նորութեան մասին, այդ առիթով գրել կառուցողական տեղեկան աշխատանքը քաջատրոյ յօդուած մը կամ բանաստեղծական անձնական ըմբռնումները դրսեւորող գրութիւն մը, բան մը, որ կ'ընէին անցեալին ու կ'ընեն ներկայիս կարգ մը բանաստեղծներ: Բանաստեղծին մտերիմ անձին մաս կը կազմէ ատիկա եւ բանաստեղծին կը մնայ նուազագոյն աղմուկով իր բանաստեղծութիւնը ընթերցողին հասցնել: Կա՛մ կը յաջողի բանաստեղծութիւնը՝ հասնելով սրիշնեքու հոգիին, խղճտանջին եւ զգացումներուն, կամ կ'արձագանգէ ուրիշներուն մէջ եւ անձանօթ ճակատագրի մակարակիին բարձրանալէ ետք՝ կ'ապրի իր լինելութիւնը, եւ կամ՝ կը ձախողի:

Սակայն, Հակոտակ այն իրողութեան, որ վերոյիշեալ պատճառներով տրամադիր չեմ այս մասին արտայայտուելու, այսուհանդերձ երկու խօսք ալ ըսեմ քերթուածի մը յղացման ու երկրաչափական կառուցման մասին, ինչպէ՛ս դուք բանաձեւեցիք: Երբեմն քերթուածի մը կարգ մը մասերը կը գրեմ քանի մը անգամներ եւ բանաստեղծութիւններ եղած են, որոնց վրայ աշխատած եմ ամիսներ շարունակ, իսկ եղած են ուրիշներ, որոնք մնացած են այնպէս՝ ինչպէ՛ս առաջին գրիչով եկած են թուղթին վրայ, որովհետեւ այս վերջիններուն պարագային զգացած եմ գոհունակութիւն մը անոնց աւարտած իսկ վայրկեանին, գոհունակութիւն մը, որ բխած է իմ զննադատական արժեչափերէն: Պայման է, որ իւրաքանչիւր բանաստեղծութիւն Համապատասխանէ բանաստեղծին սեփական արժեչափին եւ ունենայ իր սեփական դիմապիծը, նկարագիրն ու էութիւնը:

— Ուրեմն, քննադատական Յախտահմանուած օրէնքով կարելի չէ որեւէ

բանաստեղծութեան արժեւորման աշխատանքը կատարել:

— Ոչ, կարելի չէ: Ինչպէ՛ս ամէն անձի հոգեվիճակ պէտք է դիտել այդ անձին հոգեբանական կացութենէն մեկնելով, նոյնպէ՛ս ալ իւրաքանչիւր բանաստեղծութիւն պէտք է արժեւորել նոյն այդ բանաստեղծութեան մեղի հայթայթած տարրերով: Եթէ կ'ուզէք իմ բանաստեղծութիւններուն ե՛ւ կառուցողական, ե՛ւ խորքային յատկութիւնները վերլուծեմ, անկեղծ ըլլալու համար ըսեմ, թէ յուսախօս պիտի ըլլաք, որովհետեւ իմ համոզումս է, — ու կը կարծեմ, որ ճիշդ համոզումս է, — այդ հարցը ձգել ուսումնասիրողին, զննադատին կամ գրական ճաշակի տէր մը տատարականին: Բանաստեղծին պարտականութիւնը միայն բանաստեղծութիւններ արտադրել է եւ ասիկա բաւ է իրեն համար:

— Լաւ: Բայց ինչպէ՛ս քաջասրել այն նշմարութիւնը, որ ձեր առաջին հատարին առաջին քսան էջերը նուիրած էք արձակ բանաստեղծութիւնը ուսումնասիրող մտաւի մը:

— Ճիշդ է, քայք եթէ ուշի ուշով կարդացած էք այդ յատկաբանը, կը յիշէք անկասկած, որ անիկա գրուած է արաբական եւ լիբանանեան բանաստեղծութեան պատմական պարագաները ներկատի ունենալով, իրեւ Հանդրուանային այդ պահէն բխող Հրամայական Յետոյ, այդ ուսումնասիրութիւնը կու գայ լոյս սփռել արձակ ու ազատ բանաստեղծութեան վրայ, բան մը, որ ծնունդ առած էր այդ օրերուն, շնորհիւ այն միասնական ճիւղին, որուն մղիչ ուժն էին ընկերներս, — Եւսէֆ Իւնայի Վանթութեան ծնունդ «Մըրը» հանդէսին շուրջ հաւաքուած երիտասարդներ: Հարկ էր ծանօթացնել այդ բանաստեղծութիւնը, այսինքն՝ «Մըրը» էջերուն ծաւալող նոր բանաստեղծութիւնը, որ դասականներուն կողմէ խթնարանութեամբ եւ անհասկնալիութեամբ կ'ամբաստանուէր, ու յուզելով պիտի աւելցնեմ, որ ամբաստանեալներուն կարգին կը գտնուէի նաեւ ես:

Աւելի պարզ ըլլալու համար բնեմ նաեւ, թէ այդ յառաջարան-ուսումնասիրութիւնը դասական տաղաչափեալ ու քարայցած բանաստեղծութեան հետ թեան գէմ իբրեւ պատասխան գրուած փորձ մըն էր, որ կը ձգտէր ազատ ու արձակ բանաստեղծութեան գոյութեան զսպանակները բացատրել: Մտաւորական աշխատանք մը, որ իմ մտածումներու ցոլացումը ըլլալով հանդերձ, ոչ մէկ տող եւ ոչ մէկ բառ կը յստկացնէր այս կամ այն բանաստեղծութեանս:

— Ինչ վայրէջքով ազատ բանաստեղծութեան ի խնդիր, որովհետեւ ինչպէս ըստի մեր առաջին հարցումին տրուած պատասխանին մէջ, արտայայտչական ոճ մըն էր՝ բխած ձեր էութենէն: Եւ ձեր գրական ասպարէզի սկզբնական շրջանին քարգմանեցիք Ռեմոնի, Անթոնիէ Արթոյի, Անտրէ Պրոքսնի եւ գերիբապաշտ այլ ֆրանսիացիներու այն գործերը. որոնք այդ դպրոցին կը պատկանէին, կամ կը մտնային ազատ բանաստեղծութեան: Արդեօք այն պատճառով, որ ձեր ձեռք բանաստեղծութիւնը ձեր համար արտայայտչական միայն ձեռք է, թէ ձեր ներքին պայմանները լաւագոյնս գրանցուած ոճը:

— Ըստ արդէն, թէ արձակ բանաստեղծութիւնը իմ էութենէն բխող մէկ ինքնակամ մասը եղաւ: Արտայայտչական այլ եղանակներ կային ու կան: Բանաստեղծութիւն գրելէս ու տպելէս առաջ, կը յիշեմ, որ գրեցի թանկ մը կարճ պատմութիւններ, որոնք նախանշաններն էին: Նախ թան բանաստեղծութիւն տպելս, մամուլի էջերուն լոյս տեսան նաեւ իմ օտարագրութիւնս կրող ու զանազան նիւթեր շօշափող նշմարներ, յօդուածներ, ուսումնասիրութիւններ եւ լրագրական բնոյթ կրող գրութիւններ: Երբ ուսանող էի, արդէն անոնցմէ ոմանք լոյս տեսած էին, մասնաւորաբար երաժշտական աշխարհի հսկաներուն մասին պատրաստած գրութիւններս: Հետագային, երբ նետուեցայ լրագրութեան ասպարէզը, շարունակեցի զանոնք, այսինքն՝ սկսայ երկրորդական գրութիւններով բաւարարել, որովհետեւ կը սարսափէի բա-

նաստեղծութիւն բառէն: Նոյնիսկ ոչ ոքի ցոյց կու տայի բանաստեղծական փորձերս, զանոնք կը պահէի ընկերներէս, ծանօթներէս ու ինծի ամէնէն աւելի մրտերիմ եղող անձերէն: Կը նմանէի փախըստականի մը, որ կը փորձէ իր մէջ քողարկել գաղտնի, տարօրէն անհրաժեշտ այդ մասը, որովհետեւ կը զուգուրայի բանաստեղծութիւններու մըլըրայ: Անոնց ինծի շատ անհրաժեշտ վրշալու զգացումը նաեւ կ'առաջացնէր այնպիսի հոգեբանութիւն մը, որ բանաստեղծութիւններս ուրիշներուն հետ դիւրութեամբ չէն կրնար հազորակցութեան մէջ մտնել: Կը պահէի քերթուածներս նման այն մարդուն, որ կը պահէ անակընկալ մը, այն անակնկալը, որուն ճակատագիրը անծանօթ է իրեն համար: Այդ իսկ պատճառով միշտ կը յետաձգէի զանոնք հրատարակելու ամէն տրամադրութիւն ու կը դիմէի նուազ միտաւոր, նուազ դիւրաբեկ արտայայտչական միջոցին, այսինքն՝ յօդուածին: Նման էի այն նուրբեալին, որ երկուցածութեամբ կը սպասէ Աստուծոյ հետ ոչ մի յանդիման գալու վայրկեանին:

Մինչեւ այսօր, մինչեւ այս երկվայրկեանը կ'ունենամ նոյն ապրումը, երբ կ'աւարտեմ բանաստեղծութիւն մը:

— Հետաքրքրական պիտի ըլլար իմանալ, թէ ո՞րն է ձեր բանաստեղծութիւններուն ելիկտրական մոդի հասանքը, երեսակայութիւնը, զգայնութիւնը, առօրեայ իրականութիւնը, ներքին ճշմարտութիւնը, բնագանցութիւնը, թէ այս բոլոր տարրերուն ամբողջութիւնը:

— Այո, այս բոլոր տարրերէն կը բաղկանայ բանաստեղծական փորձառութիւնս: Սակայն, եթէ հարցուի, թէ ո՞րն է այն ուղին, որ գիտ կ'առաջնորդէ իրերուն, հսկաներուն ու կեանքին որեւէ տարրէ աւելի, այսինքն՝ այն լարը, որ միւս լարերէն ուժգին ձեւով կը թրթռայ էութեանս մէջ, պիտի պատասխանեմ՝ բնայով, թէ էութեանս մէջ կը կատարուի շարունակական մրցակցութիւն մը երեսակայութեանս ու զգացողութեանս միջեւ եւ զգացումներս առհասարակ

յաղթանակը կը տանին մրցակից միւս բոլոր տարրերուն վրայ: Այլ խօսքով՝ զգայարանքը ա՛յն երակն է, որուն միջոցաւ կը հաղորդակցիմ աշխարհին ու կեանքին հետ եւ շնորհիւ այդ նոյն երակին կը լեցուիմ կեանքով, մարդկութեամբ, աշխարհով: Ա. Ե. Լի՛ն. կը թըրթըռամ, կ'աւելկոծիմ, կը վերանամ...

— Ձեր առաջին երեք հատորներուն մէջ կ'իմը կեանքի հակասական վիճակները արտացոլող բազմազան ու բազմիմաստ խորհրդանշիշն էր: Սակայն ձեր չորրորդ հատորի կարգ մը էջերուն, այսինքն՝ 1970ին հրատարակուած «Ինչ արարեցիք ոսկիով, ինչ ըրիք վարդով» հատորի բանաստեղծութիւններուն եւ 1970ին ետմ մամուլի էջերուն ձեր ստարագրութեամբ լոյս տեսած բանաստեղծութիւններուն մէջ մասնատրարար, ան, կ'իմը, կը մերկանայ ըմբատուիլի այն սատանայական նկարագրէն, զոր մեզի վարժեցուցած էր Ռեալի էլ-Համ: Վերադառնալ չորրորդ հատորէն սկսեալ ձեր քնարական հերոսուիին այլափոխւեցաւ ա՛յն աստիճան, որ այսօր մեզի կը ներկայանայ բոլորովին տարբեր պարունակով մը, իրրեւ քննուշ, նուրբ ու մեղմարարոյ էակ: Նմանապէս ձեր պեկոծ ռնր ձերբագրատուեցաւ իր զըզային կշռոյթէն՝ հասնելով յաւատեա քնարերգութիւն մը մատնող հանգարտութեան: Արդ՝ ինչպէ՞ս կը բացատրէք նկարագրային ու ճեպային այս այլափոխումը:

— Զի՛նչ է, որ կ'իմը իմ առաջին հանգրուանիս ընթացքին չեղաւ ինքնանպատակ գոյութիւն մը, սակայն ըսե՛լ, թէ երկրորդ հանգրուանին ան լքեց իր էութիւնը, կը կարծեմ, թէ ճի՛շտ սահմանում մը կատարած պիտի չըլլանք, հակառակ այն իրողութեան, որ վերջին ստեղծագործութիւններուս ան բոլորովին կը տարբերի առաջին հանգրուանիս իմ պատկերացուցած կ'իս էակէն:

Կ'իմը սէրն է ու սէրը Աստուածն է, ահաւասիկ տարազ մը, որ պիտի ուղէի տալ, որովհետեւ հակառակ իր պարզունակութեան, հակառակ թերի եւ խոցելի տարազ մը ըլլալուն՝ անիկա որոշ չա-

փով արտայայտիչ ու թելադրանքի զըսպանակները զործի լծող տարագում մըն է:

Համոզումներս, որոնց հասայ վերջին տասը տարիներուն ընթացքին, կ'արտադրան «Ինչ արարեցիք ռսկիով...» հատորիս կարգ մը էջերուն, իսկ վերջին հինգ տարիներուն, կեանքի փորձառութեամբ, ձեռք բերուած համոզումներս՝ 1970էն ետք զըած շերթուածներուս մէջ աւելի շեշտուած ձեւով, եւ մասնաւորաբար այն երկարաշունչ շերթուածին մէջ, որ սուսնձին հատորով պիտի հրատարակեմ մօտերս՝ «Մինչեւ ազբիւրները երկարող մագերով մարգարէուհին» անունով:

— Ռեալիմ, բանաստեղծական ձեր չորս հատորներէն բոլորովին տարբեր փորձառութիւն մը ըլլալու է այդ գիրքը՝ թէ՛ բովանդակութեամբ, եւ թէ՛ կառոյցով:

— Կ'աղօթեմ, որպէսզի անիկա իմ ամէնէն յաջող գործս հանդիսանայ, ըլլալ յաւազոյր, անկախ գոյութիւն մը:

— Կարծեմ ձեզ ընդմիջեցիմք, որուն պատճառով չբուժեցիմք ձեր բնաստեղծ հերոսուիին վերիվայրումներուն զըրդապատմաւորը, ինչպէս՝ երկրորդ հանգրուանին հետ ձեւատրուած լատատութեան տուն տուազ պատմաւորը:

— Լատատեութեան հասայ շնորհիւ երեք ուժերու՝ գութի, սիրոյ եւ հաւատքի: Այս չի ժխտեր անշուշտ, որ անիկա գոյ չէր առաջին հանգրուանին, թէ՛ եւ սկզբնական օրերուն նուազ էր անոր ուժականութիւնը: Ի վերջոյ պէտք չէ ժոռնալ այն իրողութիւնը, որ սկզբնական շրջանին ունեցած լատատեութիւնս կը բխէր մութ յոռետեսութենէ եւ որոնող էութեան տարակոյսներով ծանրաբեռնուած էր: Նոյնն է պարագան քրնարական հերոսուիին: Ան եւս ունէր մութ դիմադիծ, որովհետեւ այդ շրջանը իմ կեանքիս եւ գրականութեանս — որ գրեթէ նոյն բաները եղած են — որոնումի ժամանակաշրջանն էր: Այն ատեն չէի գտած ճշմարիտ սէրը, որուն հասայ հետագային: Առհասարակ, առաջին

Հատորներու մէջ կ'արտացոլայ այդ փնտառութիւնը, իսկ այժմ հասած եմ անսակարկ սիրոյ, որ կանգնած էր այս այլափոխման ետին: Կարծես «Պիտի շը...» Հատորէն եւ անկէ առաջ նոյնիսկ կ'որոնէի զայն, պատանութեան ու գուցէ ծնած օրէն սկսեալ ցանկացած երազս էր անիկա, եթերային, անծանօթ ա՛յն աշխարհը, որուն զրաման արամադրեցի ողջ կարողութիւններս: Այդ սէրը եկաւ քնակն ձեռով, երկունքի ցաւերէ եւ ցաւատանջ գիշերներէ ետք ծնունդ առած մանուկի մը նման, պարզ խօսքով՝ մեղանչումի, բնկրկումներու, բո՛րոստացումի, անառակութեան, յուսահատութեան եւ յուսադրումներու: Հանգրուանները յաղթահարելէ ետք: Այս երկար ուղիէն անցնելէ յետոյ Հասայ անո՛ր, զոր պիտի կոչեմ պայծառութիւն: Սկզբնական շրջանին պայթարած եմ քնարերգութեան դէմ, որովհետեւ այդ օրերուն զայն կը նկատէի կեանքին հետ կատարուած Հաշտութիւն մը: Ու որպէսզի բո՛րոստ խորքն ու ձեւը ըլլան ներդաշնակ իրարու հետ, կարելի եղած չափով գիտակցարար սանձեցի քնարերգակ մեղմ ոճը:

— Ըսի՛ք, քե՛ս ձեր վերջին գործին մէջ հասա՞ք պայծառութեան: Զե՛ք կարծեր, որ չափազանցուած պայծառութիւնը կը սպաննէ բանաստեղծութիւնը, սակայն չափազանցուած պայծառութիւնը նպատակն է իւրաքանչիւր արուեստագէտի: Պայծառութիւնը պղտորութեան հակառակը չէ: Ես չըսի պարզութիւն, ոչ ալ դիւրութիւն կամ յստակութիւն: Ինչ որ պայծառութիւն բառով կ'ուզեմ ըսել այն է, որ անիկա կրնայ պարունակել լոյսը, ստուերը եւ կիսաստուերը նաեւ: Պայծառութիւնը չի ժխտեր տակնուվրայութիւնը, չի ժխտեր Հողելլութիւնը, նոյնիսկ չի ժխտեր պղտորութիւնը, բարդութիւնը կամ դարձադարձիկութիւնը: Պայծառութիւնը, այս

պարագային, ոչեղինական, Հողելլան ու բնագոյնական կացութիւն մըն է՝ ձեւական կամ արուեստի կացութիւն մը ըլլալէ առաջ: Պայծառութիւնը արուեստէն ներս արդիւնքն է ներքին բիւրեղութեան, անոր ցոլացումն է, Հողելլան պայծառութեան լեզուն, եւ ես կը կարծեմ, որ Հողելլան պայծառութիւնը ո՛չ միայն իւրաքանչիւր արուեստագէտի ձգտումն է, այլեւ ձգտումը իւրաքանչիւր մարդու:

— Յստակութիւնն ու պայծառութիւնը մերձակից բառեր են. երկուսին ալ յատկութիւններէն մէկը քափանցիկութիւնն է: Օտար լեզուի վը ո՞ր բառով կարելի է սահմանել ձեր մտածումը:

— Այո, երկու բառերն ալ մօտ են թափանցիկութեան, ըստ ինձի, պայծառութիւնը Հողելլան ազատութեան հակառակն է: Ֆրանսերէնով՝ sérénité...

— Ըստ ձեզի, դասական բանաստեղծութեան եւ արձակ բանաստեղծութեան պատկանող բնութեան տարբերութիւնները մայն-մանուսն են արդեօք, քե՛ս մէկը միւսէն կը տարբերի:

— Ազատ ու մանաւանդ արձակ բանաստեղծութեան մէջ արտփող քնարերգութիւնը, ինչ որ է պարագան նաեւ իմ բանաստեղծութիւններուս, կը տարբերի դասական բանաստեղծութեան տաղաչափեալ քնարերգութենէն, որովհետեւ ատջինին պարագային քնարերգութիւնը չունի դասական երաժշտութեան յատկանիշները՝ յանգ, Հատած, տուն, եււայլն: Այդ իսկ պատճառով, առաւել զժուար է ազատ բանաստեղծութեան հաշտին ապահովել քնարերգութեան մթնոլորտը, եթէ բաղդատական մը կատարենք դասական բանաստեղծութեան հետ: Դասական բանաստեղծութիւնը, եթէ նոյնիսկ անիկա ըլլայ դիւցազներդական կամ ուսուցողական — didactique — նկատի առած իր յանգաւոր ու չափեալ ըլլալը՝ կ'ունենանք եղանակաւորութիւն, կրկնուող մեղեդի, քնարականութիւն, որովհետեւ անիկա իր մէջ ունի կրկնուող այն կշռոյթը, որմէ կ'առաջանայ քնարերգական տրոփ, միանըւազ երաժշտութիւն:

Հարցը բուրրովին կը տարբերի արձակ բանաստեղծութեան պարագային. Հոս բանաստեղծութիւնը չի կրնար վըտահել բառերուն վանկային կըտոյթին միայն, այլ՝ բառերու ներքին կըտոյթին, երեւակայութեան ու բովանդակութեան հետ կատարուած հասարուսմներդաշնակութեան վրայ նաեւ: Քնարականութիւնը արձակ բանաստեղծութեան մէջ շատ, շատ, շատ զփուար ու վտանգաւոր է, որովհետեւ կալանաւոր մը չէ, սահմանուած կաղապար մը չէ, որուն իբր արդիւնք՝ կրնայ ձախողիլ բանաստեղծութիւնը, ինչպէս արձակուանկութեան կամ արձակի ծուղակին մէջ, այլ խօսքով՝ դասական քնարերգութեան նման գոյութիւն մը չէ ի յառջադունէ, չէ նաեւ պատրաստի յանգն ու հասածը, որոնք կը սկսին վանկով ու կ'աւարտին այնինչ յանգով, առջացնելով արտաքենայէն կալանաւորուած 4-2-2 հաստածը օրինակի համար: Ընդհակառակն, արձակ բանաստեղծութեան քնարերգութիւնը չի հիմուսի ի սկզբանէ գոյութիւն ունեցող տարազի մը, եղանակի մը եւ ոչ ալ գրելաձեւի պատրաստի կանոններու վրայ, այլ կը բիթ խորքէն, որուն արբիչը բանաստեղծն է, սպաս ու անկախ ստեղծագործողը, ինչպէս գերագոյն ստեղծագործողը՝ Աստուած:

— Հակառակ քանարդ զարբ մըտալկոյդ հարցերու գոյութեան, հակառակ ճանճարչի, յուսահատութեան ու մեմուրեան մութ տարածութիւնները յուսարբիւն ձգտումին՝ սերն ու մարդրամաստեղծը միաձայն ե'ւ կը ճշան, ե'ւ կը գտում ի մասնաւորի ձեր առաջին երբեք հարողներուն մէջ: Արդեօք բանաստեղծի եսին մտին այսքան շատ արտայայտուիլը կապ ունի՞ եսասիրութեան հետ:

— Եսասիրութիւն բառը շատ նեղ իմաստ ու միաժամանակ շատ, շատ լայնիմաստ է: Մեզմէ ո'վ եսասէր չէ: Իւրաքանչիւրս ունինք այդ եսասիրութիւնը, որ կրնայ առաջնորդել ե'ւ գրական, ե'ւ ժխտական արդիւնքներու: Չենք կըրնար առաջին զէմքով գրող բանաստեղծը կամ գրադէտը եսասէր դասանիլ, որ

որովհետեւ գրական թեքնիքին մաս կը կազմէ այդ գրելաձեւը: Կրնանք առաջին զէմքով գրող բանաստեղծը եսասէր դասանիլ, երբ իր բանաստեղծութիւնները կը դառնան իր եսի օղակին շուրջ, կ'ամփոփուին բանաստեղծի եսին մէջ, չեն յուզեր ընթերցողը, որովհետեւ ոչինչ կ'րեն անոր հոգեկան, զգացական ու իմացական շարերուն. այս պարագային կրնանք դայն կոչել ձախող բանաստեղծ մը նաեւ, իսկ իր ստեղծագործութիւնները՝ մատորակ գրութիւններ: Սակայն, ես պիտի ուզէի հարցին մօտենալ տարբեր անկիւնէ, որովհետեւ «կապ ունի» հարցադրումը մեզ կրնայ առաջնորդել մտքի փակ դուռներուն:

Եթէ զանց ընենք դիւցազներգական, պարագայական, թողաքական ու գաղափարաբանական ձգտումաւոր բանաստեղծութիւնները, պիտի տեսնենք, որ բուրբ մեծ բանաստեղծները կը սկսին եսէն, ինչպէս՝ Պօտլէր, Բէմպօ, վիպագայտներէն՝ Հիւսօ, Միւսէ, Լամարթին: Աւելին. անգլիացի, ռուսացի, իտալացի, գերմանացի, ամերիկացի եւ ուրս բանաստեղծները, սկսուեալ իրենց վիպագայտ սերունդներէն եւ անկէ դարեւ առաջ՝ դիմած են եսին, մէջըն ըլլալով արար բանաստեղծները ու թերեւս հայ բանաստեղծներն ալ, օրինակ էլ Մուսիանայպի, Ապու Նաուաս, անունը, անունը, կարծեմ Սայեսաու...
— Սայեսաթ — Նովա...
— Նոյնինքն, Սայեսաթ — Նովա: Այո, հարցադրուած ուղիէն մեկնելով կը հասնինք պարիսպներու միայն, սակայն այդ հարցը գոյութիւն չունի բանաստեղծմարդուն համար նախադարեան շրջաններէն սկսեալ: Բանաստեղծը աշխարհը կը տեսնէ իր եսին ընդմէջէն, հականը ա'յլ է, եւ ոչ թէ իր եսը տեսնել աշխարհին ընդմէջէն: Առաջին պարագային, բանաստեղծին եսը կ'ըլլայ մենքը նաեւ, եւ Հոս կրնանք հասկնալ Բէմպոյի այն խօսքը, երբ կ'ըսէ. «Ես ուրիշն եմ»:

— Այսինքն՝ կը սիրեմ հարցերը գիտել իրենց ներքին կեանքի գիտանկիւնէն: Ան երկու բանաստեղծներ, որոնցմէ մէկը կը խօսի առաջին զէմքով, իսկ

Երկրորդը՝ երկրորդ կամ երրորդ դէմ-
քով, երկու պարագային ալ էականը
բանաստեղծական միջուկն է: Սակայն,
եթէ ուզես զրուիթեան արժանիքը պե-
ղել, այլ խօսքով՝ ուսումնասիրել զը-
րուիթեան մը արարման կենսագրութիւ-
նը, եւ ինքզինքիդ ուղղես նման հար-
ցում մը՝ «ինչո՞ւ այս բանաստեղծը կը
դրէ նստի, իսկ ուրիշ մը՝ անուկում»,
պիտի գտնես մէկէ աւելի պատճառա-
բանութիւններ: Կրնայ ըլլալ, որ երկ-
րորդ օրինակին պատկանող բանաստեղ-
ծը քաղաքական մտածողութեան մը կամ
գաղափարաբանութեան մը անդամագրու-
ած այն անձը ըլլայ, որ կը փորձէ
մոռնալ իր եսը, արծարծելու համար
բողաքական, գաղափարաբանական, փի-
լիսոփայական կամ ընկերային այն հար-
ցերը, որոնք կ'առաջնորդուին իր հա-
մոզումներէն կամ նախասիրութիւննե-
րէն: Ասիկա ձգտումնաւոր բանաստեղծի
տիպարն է եւ ես անոնցմէ չեմ: Կան
նաեւ բանաստեղծներ, որոնք արտաքին
աշխարհին մէջ կ'սպիրն աւելի զօրաւոր
մեւով, քան իրենց ներաշխարհին մէջ,
եւ կայ առաջին ու երկրորդ տիպարին
հակադրուող բանաստեղծը, որ արտա-
քին աշխարհը կ'ամբարէ իր եսին մէջ,
իրրեւ սնունդ ու աւել, որուն իբր ար-
դիւնք կը հարստանայ ներքին կեանքը,
կը դառնայ աւելի խիտ, աւելի հարուստ
եւ աւելի ուժեղ, քան արտաքին աշխար-
հն ու ասօրեան իրենց բոլոր մանրամաս-
նութիւններով:

— Պահ մը մտնամք այս բոլորը եւ
փորձենք քափանցել, իրաքանչիւր ար-
ւեստագլխի մեծագոյն ետրցը հանդի-
սագող, լեզուէն մերս: Ի՞նչ է լեզուն
ձեր հասկացալուքեամբ, հապորդակ-
ցութեամ պարզ միջոց մը, թէ բանաս-
տեղծութեան բովանդակութեան ծնող
անկախ գոյութիւն մը:

— Լեզուն, լեզու, լեզու...: Լե-
զուն շատ, շատ անհրաժեշտ բան մըն
է բանաստեղծութեան մէջ, որ կրնայ
ե՛ւ շնչաւորել բանաստեղծութիւնը, ե՛ւ
կամ՝ ընդհակառակն, շնչահեղձութեամբ
սպաննել զայն: Կամ արեան եւ կամ
թոյնի պաշտօնը վերապահուած է անոր:

Սակայն, թափանցել առաջ հարցին
մանրամասնութիւններէն ներս, պիտի
ուղէի կատարել հետեւեալ յաւելումը.
Ճիշդ յղացքի եւ զրկածեւի հարցին պէս
լեզուն եւս բանաստեղծ արուեստագե-
տին սեփականութիւններէն մէկն է: Բա-
նաստեղծը պարտաւոր է տանջուիլ ե՛ւ
լեզուին, ե՛ւ յղացքին, ե՛ւ պատկերին,
ե՛ւ իւրաքանչիւր բառին հաշտոյն, պայ-
մանաւ, որ չչատախօսէ եւ զեղեցիկ տա-
ռապանքին, այսինքն՝ լեզուին յատաշ-
ցուցած դժուարութիւններուն եւ յոգ-
նութիւններուն կենսագրումը չըբէջ յօղ-
ւածի մը հասակն ի վար, ինչպէս կ'ը-
նեն կարգ մը բանաստեղծներ, իւրաքան-
չիւրը նոր քերթուած մը գրելէ ետք:

Կրնամ ըսել նաեւ, թէ հաղորդակ-
ցութեան միջոց մը ըլլալով հանդերձ,
նաեւ անկէ մակարդակ մը վեր գոյու-
թիւն ունեցող այն բունակայն է լեզուն,
որ յաճախ ասպարէզ կը կարողայ բանաս-
տեղծին, պարտադրելով իր կամքն ու
գորութիւնը, եւ ճշմարիտ բանաստեղ-
ծը այն ստեղծագործն է, որ հակասա-
բաց կ'ընդունի այս մարտահրաւիրը ու
կը մղէ իրական պատերազմներ: Առա-
ջին՝ արտայայտչական մարզէն ներս,
եւ երկրորդ՝ ի խնդիր խորքին հետ հաշտ
ընթացող դիմադրի արարման, որուն
բացակայութեամբ խորքը կը տարուի
լեզուահեղեղէն ու կը խեղդուի:

Կը մղեմ այս պատերազմը, որպէս-
զի գտնեմ յարմարագոյն բառը, յարմա-
րագոյն պատկերն ու յարմարագոյն լը-
նութիւնը նաեւ, որոնք լուսագոյնս կը
գրեւելորեն բանաստեղծութեան խորքը,
միաժամանակ հանդիսանալով տրոփն
ու յաւերժացումը ապահովող կարողու-
թիւնը: Ես դայն կը կոչեմ արշալոյսի
պատերազմը: Բանաստեղծութեան ծը-
նընդոցի համար մղուող այս պատերազ-
մը նման է սերնդագործութեան պատե-
րագմին, որ տեղի կ'ունենայ զոյգ սեր-
մերու միութեան տտեն: Ասիկա պատե-
րագմն է նաեւ առաջին նշոյլներուն, ո-
րով հետեւ անով կ'ուզեմ լուսաւորել թա-
նաստեղծութիւն-մանուկին նկարագրային
պարունակը նաեւ, կ'ուզեմ, որ յաջո-
ղիմ իրականացնել բանաստեղծութիւն-

մանուկին նկարագրիր այնպէս՝ ինչպէս որ խորքը կը պահանջէ, — ջղախին, հանդարտ, պաղարիւն, բմբոստ, վեհանձն, եւ այլն... Ասոր կը յաջորդէ անման շրջանը: Գիտակցաբար պիտի անտեսեմ անման հանդրուանը, որպէսզի ուղիղ հասնինք վերջին հանգրուանին, որ լեզուին իշխանութեան շենթարկուելու եւ զայն զերթուածին էութեան ենթարկելու հանգրուանն է:

Իրապէս մտանգաւոր է լեզուն, եւ մէնք յաճախ կը հանդիպինք բանաստեղծութեան մէջ մեծ բարձունքներ նուաճած բանաստեղծներու, որոնց մօտ նոյնիսկ լեզուն կը դառնայ վերջին ու գերադոյն մեծամարտն ու նպատակը, կը դառնայ ինքնանպատակ, ու պատկերներ ձուլելու եւ բտեր ջանդակելու նպատակով տարուած՝ բանաստեղծը կը հասնի թնտուկներու, իսկ իր զերթուածները կը դատապարտուին կեղծ ու անկեանք ճակատագրին, որովհետեւ պէտք չէ մոռնալ նաեւ այն իրողութիւնը, որ լեզուն վերջի վերջոյ հաղորդակցութեան միջոց մըն է:

Որպէսզի բանաստեղծը չիյնայ այս թակարդին մէջ, պէտք է ներդաշնակութիւն մը յառաջացնէ լեզուի գեղագիտական դրաւշութեան ու բանաստեղծական փորձատութիւն — պարունակին միջեւ: Շատ դժուար աշխատանք մըն է ասիկա, սակայն երբ բանաստեղծը կը հասնի արդեն ներդաշնակութեան, կը հարստանայ զոյգ թեւերով՝ ինչպէս թռչունը:

Եզրակացութիւն՝ արտայայտութեան գծով ազատ ու անկախ լեզուի կողմնակից ըլլալով հանդերձ, անհրաժեշտ կը նկատեմ, որ բանաստեղծը չզառնայ լեզուին ստրուկը, զայն ենթարկէ իր իշխանութեան, որովհետեւ լեզուն ունի զօրեղ իշխանութիւն մը, մ'անաւանդ արտքերին լեզուն, որ հարուստ, գեղեցիկ, փարթամ ու ցանկայարոյց լեզու մըն է: որ դարեւրու ընթացքին, ան կը զատորոյն

բանաստեղծութիւնը, եւ յաւերժութեան արժանացած այդ զերթուածներէն կը կազմէ ընտանիք մը: Օրինակի համար, ուրաբակիան բանաստեղծութեան հեթանոսական շրջանէն եկած կարգ մը բանաստեղծութիւններ այսօր իսկ արդի կը նրկատենք: Ինչո՞ւ, որովհետեւ կը յուզեն մեզ, դարեւրու ընթացքին արձագանգած են բազմաթիւներու մէջ միշտ հաղորդելով կեանքի շունչն ու ջերմութիւնը, կամ իւրայատուկ հոգի մը...

— Այսի՞ց էն եզակի տեսիլքնե՞ր...

— Աւելի պարզ ըլլալու համար՝ խօսիմ օրինակով մը: Տուեալ բանաստեղծութիւնները, եթէ կը թրթռան՝ կարգ մը ընթերցողներու հոգիներուն մէջ սփռելով կեանքի լոյսն ու շունչը, անդին կրնան ըլլալ ընթերցողներ, որոնց համար անկեղան զերթուածներ նկատուին նոյն բանաստեղծութիւնները: Թէ ի՞նչ է այդ հոգին, կարելի չէ սահմանել, որովհետեւ սահմանէն ու ժամանակէն դուրս կը գրտնրի: Կրնայ ըլլալ ըմբոստութիւնը, որ կը մէկտեղէ տարբեր ժամանակներու եւ տարբեր ազգերու բազմաթիւ բանաստեղծները, ինչպէս՝ Թիլիստեր, Բէժմարն, Ապա Նաուասը, Քարաֆ Ըպրի Ապտը ժամանակակից Ատոնիսին հետ: Կրնանք զայն կոչել յաւերժականութիւն, կըրնանք նաեւ կոչել շարունակուող երիտասարդութիւն, մշտաբարձ հուր, որ իւրաքանչիւր դարու մէջ ապրող իւրաքանչիւր ընթերցողի ներաշխարհին մէջ կ'արձարձէ ինքնուրոյն խարոյկ մը:

— Որպէսզի բանաստեղծը արժանի ըլլայ արդի կոչումի՞ն այն հասկացողութեամբ, որ դուք սահմանեցիք, չէ՞ք կարծեր, որ ճշատաւոր է ժամանակի սահմանները փշրել ու պարտութեամբ ենթարկել ժամանակը:

— Այո, բայց առանց որ ինքը սահման մը գծէր, որովհետեւ կենդանի բանաստեղծութիւնը սահմաններու դէմ է:

Հարցազրոյցը վարեց՝
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Լ Ե Ո Փ Ո Լ Տ Լ Ա Պ Ե Յ

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՆԱԿԱՏԱԳԻՐԸ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԹԱՑՔԻՆ

Հայացուց
ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Այսուհանդերձ — աւելի քան յըջօրէն — կը մնայ յեղափոխական գաղափարաբանութեան գոյատեւումի հարցը: Անոր փոփոխականներն ու այլափոխումները կարելի չէ հասկնալ որեւէ պատմութեան օրէնքներու» ճամբով, կամ՝ բանաձեւում պատմական օրէնքներու եւ դիտակցութեան լոյսին տակ, հեկէլեան ըլլայ անիկա թէ մարքոսեան, լենինեան թէ ստալինեան, մարտական թէ մարքիւզեան: Ինչպէս կրօնական կամ դիցարանական գաղափարաբանութեանց, նաեւ յեղափոխական գաղափարաբանութեան ճակատադէրը կարելի չէ բացայայտել պատմական նիւթապաշտութեամբ»:

Ընկերային յեղափոխութեան յղացքը առաջին անգամ երեւան եկաւ 16րդ դարուն: Անիկա հիմնուած էր երկնային մարմիններու սիֆլիի շարժումներուն ծանօթութիւնը փոխաբերականօրէն կիրարկելու գաղափարին վրայ: Կոպերնիկոսի թեզը խորագրուած էր «De Revolutionibus Orbium Caelestium»: Նմանօրինակ իմաստով մը անիկա գործածուած է նաեւ Մոնթէյնի կողմէ, բայց միայն Փառահեղ Յեղափոխութենէն (Glorious Revolution) ետքն էր, որ ստացաւ իր արդիական ճանաչումը: Մինչ այդ գաղափարաբանական հետաանդումները կ'արտայայտուէին միայն կրօնական ըմբռնողութեամբ:

Քրոնովէլի ղինուորները պատերազմի էլան՝ իրենց ձեռքերուն Ս. Գիւրջը բռնած:

Արմատական Հինգերորդ Միապետութեան մարզիկը կընտեցան աստուածարանական պայքարով:

Փառահեղ Յեղափոխութեան եւ Ծըրանական յեղափոխութեան միջեւ յեղափոխական եւ իւթոփիական անհրաժեշտութիւնները աշխարհականացուեցան:

Աստուծոյ Քաղաքին, Նոր Երուսաղէմի փնտտուքը ճամբայ Հարթեց Մարդու Քաղաքի փնտտուքին, կամ, ինչպէս Մելվին Ժ. Լասքի կը բանաձեւէ. «Յեղափոխութեան գաղափարը աստուածաբանութենէն վերածուեցաւ բնկիրաբանութեան, իւթափայլի գաղափարը՝ աստուածաբանութենէն ֆազաւիանութեան»:

19րդ դարուն, յեղափոխական գաղափարաբանութիւնը ենթարկուեցաւ յաւելեալ փոփոխութիւններու: Անիկա սկըսաւ այլեւս կապուել պատմութեան գաղափարին (որ կը փոխաբերէր Աստուծոյ գաղափարը):

Վիգոյի մօտ պատմութիւնը տակաւին կը ղեկավարուէր «Նահանգին» կողմէ:

Հեկէլի մօտ պատմութեան հարցը դիտակցութեան հարցն է:

Մարքոսի մօտ անիկա կը դառնայ բընական ընթացք մը՝ ղեկավարուած դիտական օրէնքներով:

Վիգոյի մօտ պատմութիւնը դեռեւս սիֆլի է:

Հեկէլի մօտ անիկա արդէն շարունակական է (աշխարհի ոգիին տրամախո-

հական (dialectical) յառաջընթացին ընդ-
մէջէն) :

Մարքսի մօտ անիկա կը թաւալի աը-
րամասնահականօրէն, բայց մարքսեան
պատմական նիւթապաշտութեան մէջ Հե-
կէլ գլխիվայր կը լըջի :

Մարքսի մահուան տոբթով, Էնկելս
կը պնդէր, որ ան՝ Մարքսը, պատմու-
թեան տուած է ա՛յն՝ ինչ որ Տարուին ը-
րած է կենսաբանութեան համար, բայց
ի՛նչ որ ալ ըլլայ տարուինականութեան
գիրքը այսօր, շատ քիչ կասկած կայ այն
մասին, որ մարքսեան մտաւորականու-
թեան սկզբնաղբիւրի պաշարը դատապար-
տուած է լքուելու: Անիկա կրած է տե-
սական այնպիսի՝ փոփոխութիւններ, որ
անոր պատմական ընդլայնումը եւ իբրեւ
յեղափոխական հանգանակ ունեցած շա-
րունակական ձորողականութիւնը կարելի
կ'ըլլայ հասկնալ միայն վիպաստեղծա-
կան ըմբռնումով եւ ոչ թէ անոր գիտա-
կան արժանիքներուն թերմով :

Առաջին հերթին տարիակ ընկերային
փոփոխութեան տեսութիւնն էր՝ արտադ-
րութեան ուժերու աճումին ընդմէջէն :
Բայց փոխանակ արտադրութեան վրայ
դրուած արդիւնները վերացնելու այն եր-
կիրներուն մէջ, ուր արտադրութիւնը պի-
տի բարդուածէր, երբ դրամատիրական
թողանդը պայթէր ու բաժնուէր երկու
մասի՝ պրոլետարական յեղափոխութեան
մը միջոցով, մարքսիզմը, հակադրուելով
իր նախադրեալներուն, փոխադրուեցաւ
մեծ թիւով թերած երկիրներ :

Արեւմտեան ճարտարարուեստական
երկիրներու պատմութիւնը շարդարացուց
մարքսեան շատ մը սերունդներու քա-
ղաքական եւ ընկերային ակնկալութիւն-
ները, սկսելով Մարքսէն :

Ռուսիոյ մէջ մարքսիզմը ենթարկը-
ւեցաւ ժողովրդական կամայական փո-
փոխութեան մը՝ Լենինի կողմէ, որ յե-
ղափոխական առաջին քայլը առաւ՝ հե-
ռանալու համար մարքսեան ուղղափոտու-
թենէն, զանց առնելով տնտեսական բար-
դաւաճումի հաշտոյն նշած անոր հանդըր-
ւանները :

1917ի յեղափոխութենէն ի վեր
գամարքսիստ յեղափոխականներ կ'որոգար-

ձակեն պատմական նման ռուստեմներու
տարողութիւնը. այլեւս զօյութիւն ու-
նենալէ կը դադրին վարդապետական այն
բանավէճերը, թէ երկիր մը պէտք է կամ
պէտք չէ հռուսները ըլլայ ճշնակրվարու-
թեան: Հիմա անիկա կրնայ ծնունդ առ-
նել ընկերային սո՛ճն տեսակ շարժում-
ներէն, վաչկատուն Մոնկոլիոյ Հանրա-
պետութենէն մինչեւ ցեղապետական
Քոնկո Պրազովիլի Ժողովուրդի Հանրա-
պետութիւնը: Ստալինի իշխանութեան
տակ մարքսիզմը վերածուեցաւ տնտե-
սապէս յետամնաց երկիրներու ճարտա-
րարուեստականացումի ազդու վարդա-
պետութեան, որ հազիւ կը համապա-
տասխանէ մարքսեան նախատեսութիւննե-
րուն :

Մինչ մարքսեան նոր աւետարանը կը
տարածուէր, անիկա հետզհետէ կը կոր-
սնցնէր իր մտաւորական սկզբնական նը-
կարադիրը, ենթարկուելով տեղական
պայմաններու սահմաններուն — ծնունդ
տալով մարքսիզմի ռուսականացումին,
չինականացումին, լատինականացումին,
միաժամանակ փոխելով նաեւ իր տեսա-
կան ընդհանուր նախադրեալները :

Գաղափարական միութիւնը այդպէ-
սով վերջ կը դառնէր :

Այլ հերձուածներու նման, իւրա-
քան իւր զլխաւոր եւ բազմակեղծրոն բը-
ջիջ պնդեց իր համաշխարհային գորու-
թեան վրայ՝ իր սեփական ուղղափառու-
թեան օգտին :

Մարքսի անձնական մտաւորական
հայեցակէտին զանազան դարձուածքնե-
րը, որոնք կը մէջոտրուին կանոնագիր-
քէն, կը հասնին անհեթեթութեան սահ-
մանին: Չինաստանի մէջ, Լիու Շայո-Շի
յարձակումի կ'ենթարկուէր իր հակա-
մարքսիստ հերետիկոսութեան համար, զոր
մտայական պաշտօնական մամուլը կը
կոչէր «արտադրողական ուժերու հե-
ղադրող տեսութիւն, որ ընկերային տ-
նումը կը բացատրէ միայն իրրիւ քնա-
կան արդիւնք արտադրողական ուժերու
տեսումին, մտաճարարար՝ արտադրա-
միջոցներու տեսումին»: Մարդ պիտի կա-
րենար դիրքութեամբ երեւակայել Մարք-
սի կացութիւնը, էթէ այսօր ան աւտիթ
A.R.A.R.®

ուհեկար իր տեսութիւնը իրադրոճելու Ձիւստտանի մէջ:

Հեռուոր Արեւելքէն մինչեւ Վայրի Արեւմուտք (Wild West), մարդ կը զարմանայ՝ տեսնելով մարքսեան գարթնումը ճարտարարուեստականացած երկիրներու մէջ, բայց մտաւորական մարդերուն աւելի, այդ գարթնումը շատ քիչ չափով կ'առնչուի Մարքսի անձնական տեսութիւններուն: Արեւմտեան մարքսիզմը կենդանի կը պահուի իբրեւ «ճակատագրական տեսութիւն»՝ Հեկկէյսէն շարունակական եւ հեղահեղեմէ առող ներարկումներով: Մարքիզ վերադարձաւ ո՛չ միայն մինչեւ Հեկկէյ, այլեւ աւելի անդին՝ մինչեւ Բուսո: Ինչպէս ինք կ'ըսէ իր «Երոս եւ քաղաքակրթութիւն» (Eros and Civilization) տնուն հատորին մէջ՝ «Պղաճանքն միջին Բուսո, մանկավարժական գաղափարը, որ փորձուած է բոլոր անոնց կողմէ, որոնք կը կարծուին ունեցալ իրաւ լաւին գիտութիւնը, միակ պատասխանն է: Այդ պատասխանը մտազուտ է ճերմակայիս...»: Անոնք բոլորը միշտ լաւ գիտեն. աշխարհական նախասահմանեալ պատմութեան աշխարհիկ ընտրանին, հեկկէյսէն իլուսմիւսաբան եւ մարքսեան Բոկնոսամբին պատմութեան ընթացքին, Լուքսաները, Պրէխթերը, Մարքիզները: Այսուհանդերձ, Լենինները, Ստալիններն ու Մաոններն են միայն, որ կ'որոշեն «ճշմարիտ լաւը»:

Ինչպէս Լիւսիէն Կոլտման խանդավառութեամբ դիտել կու տայ՝ «Մարքիզ «ճակատագրական տեսութիւնը» (բսկածեւը, որով ահ կ'ազնարկէ Մարքսիզմի) վերստին բերաւ դէպի իւրօնիստ: Բայց որքանո՞վ մարքսեան — եւ որքանո՞վ քննադատական — է «ճակատագրական տեսութիւն» կոչուած այս նոր տարբերակը: Մարքս ինքը հազիւ թէ ճանչնայ զայն իբրեւ իր զաւակը կամ թոռը: Կոլտման կը վստահեցնէ մեզի — քիչ մը պաշտպանողական ձեւով — որ «Մարքիզի մօտ ժամանակակից ընկերութեան համար ճշմարտութեան սկզբունքին շուրջակայքի մեր արտադրողականութեան ընկերութեան է»: Ճիշտ հակառակը Կոլտմանի հակաստիացումին, որ շուրջ է եւ բա-



ՀԵՐՊԸՐԹ ՄԱՐԿԻԻԶ

նաճեւուած Ֆրէյտսեան լեզուով: Մարքիզ ինքը բնաւ ամբողջական ձեւով մը չի հակիր դէպի հակամարքսեան շեղումները, ինչպէս կ'ընէ Լիւս-Շայո-Շի: Բարականութեան մէջ Մարքիզ Մարքսի «արտադրողութեան ուժերը» իրենց հետեւակ կացութեանն տարաւ դէպի տեսութեան ծանրութեան կեդրոն: Ասոր պատճառը, ի հարկէ, համառօտ ձեւով ըսած, հակառակն է Մաոյի մտահոգութեան: Մարքիզի համար անիկա «արտադրողական ուժերու» տկար աճումի հարց չէ՝ ինչ որ է Ձիւստտանի պարագային, այլ անոնց զերանումն է Ամերիկայի մէջ: Անոր համար կեդրոնածիւղ մշտահոգութիւնը զրամատիրական ընկերութեան մը մէջ արտադրողական ուժերու ազատագրումը չէ, ինչպէս որ է Մարքսի համար, այլ մարդուն ազատագրումն է՝ «յաւելուածական ճնշումէն»՝ զրամատիրութեան կողմէ ստեղծուած ատելի, յորդահոս ընկերութեան մէջ: Մաքս Միթրնի նման — «Մուրը Մաքս» —, որ կատաղօրէն քննադատուած է Մարքսի կողմէ իր «Գեորմալ գաղափարաբանութիւն» հատորին մէջ — Մարքիզ կ'երազէ կատարեալ ազատագրումը բնազգային մղումներու եւ երեւոյթներու աւշ-ճնշել

բիւրեղացումի շնչող գոհունակութեան զոյսփիճակը»:

Այսպէս, յեղափոխութեան զաղափարը կը ստանայ այլ դարձուածք: Այս անգամ անիկա կ'ընթանայ տնտեսագիտութենէն դէպի հոգեվերլուծում, Մարքսէն Տրէոյտ — եւ աւելի անդին — ընկերարանակալէն դէպի հոգեբանական Իւթոփիա: Մարքիւզ կը կասկածի այն մասին ինչ որ ինք կը կոչէ «պոստմութեան մէջ պատճառի նիւթազատ յղացք» եւ լքելով զարտադրութեան ուժերը՝ իբրեւ տնտեսութեան մասնակի բաժիններ, ան կ'արձակէ նոյնպէս Մարքսի ընտրեալ դասակարգը, ճարտարարտեսական աշխատուորները, իբրեւ յեղափոխական ազատագրումի պատմական գործիք: Իրականութեան մէջ, Մարքիւզ ամբողջութեամբ կը մերժէ Մարքսի դասակարգային վերլուծումները. «Այսօր, ժխտումի ուժը չի կեղբոնաբար առանձին դասակարգի մէջ: Քաղաքականացուալ թէ բարոյապէս, տըրամաբանօրէն թէ բնագործին, անիկա զինադրութեան բառային անիշխանութիւնն է, մերժումը միանալու եւ դեր մը խաղալու, գոյանձը բոլոր տեսակի ճոխութիւններէ, ստիպողականութիւնը՝ յոգնեցուցիչ»:

Յամենայնդէպս, ան չի մատնանշեր, թէ ինչպէս նախնիութի (Iձ) ազատագրումը կարելի պիտի ըլլայ միացնել իճու լուծի՛ք հասարակչութիւն, կամ թոյլատու ընկերութիւնը՝ մանկավարժական մենապիտութեան հետ: Անպատ մը, որ «ճնշիչ համրերատարութիւնը» վերանայ, ճառանց ահաբեկումի յեղափոխութիւնը անկասկած մեծ գիւրութեամբ պիտի լուծէ այս պարզ խնդիրները: Այսօր, կեղծաւորութիւնը մեծ տուրք մըն է, զոր յեղափոխութիւնը կը վճարէ ազատականութեան:

Բայց միայն մտաւորական մարզի մէջ է, որ մարքսեան տեսական փոփոխութիւնները հակասական են. միօրինակութիւն եւ շարունակականութիւն կ'ընծայուի մեզի մարքսեան զաղափարաբանութիւնը ընդգծող յեղափոխական եւ իւթոփիք տարբերու կողմէ: Միայն այս ձեւով է, որ կարելի կ'ըլլայ հասկնալ արտադրութեան շնչող գոհունակութիւնը եւ ընդլայնումը, հետեւաբար եւ՝ իրական ստիպողականութիւնը: Այս հայեցակէտով, Մարքիւզի իւթոփիական անհրաժեշտութիւնը (եւ տիեզերական հիւպոթիւզ) նման է պոստմութեան իր նախորդին: Ահաւաստիկ, թէ ինչ կը զրէր Մարքս համայնազարութեան մասին, իր «Տնտեսական եւ փիլիսոփայական բուզքեր» հատորին մէջ.

«Ատիկա մարդուն եւ բնութեան, մարդուն եւ մարդուն միջեւ գոյութիւն ունեցող բախումին լուծումն է: Ատիկա նշմարիտ լուծումն է՝ այն բախումին, որ կայ գոյութեան եւ էութեան միջեւ, առարկայացումին եւ ինքնապարտադրումին միջեւ, ազատութեան եւ անհրաժեշտութեան միջեւ, անկատիւն եւ իր նմաններուն միջեւ: Ատիկա լուծումն է պատմութեան անեղծումին եւ որ, միաժամանակ, գիտակից է իր այդ դերին»:

Այն՝ ինչ որ Մարքս կը կոչէ «փոքր-ձառական պատմութիւն», կամ՝ «պատմութեան ճշմարիտ հորիզոն» հազիւ թէ կը մօտեցնէ նման ծանր նպատակակէտեր որեւէ յետ-յեղափոխական ընկերութեան մը: Այսուհանդերձ, աշխարհիկ իւթոփիաներու մտաւորական տարածականութեան եզրերը իրապէս կ'առնչուին «պատմութեան ճշմարիտ հորիզոնին».

անոնք կերտուած են ժամանակակից իրականութեան հիման վրայ եւ, ինչպէս բոլոր Փանթիզիները, անոնք կը պարփակեն իրենց տարբերուն որոշ մէկ սովոր եւ ձեւով մը նաեւ կը սահմանափակուին անով: Նախաճարտարարտեսականացումի շրջանին, Բուսօ կ'երկուակայէ նախնական մարդը, մինչ ստիպողական ճարտարարտեսականացումը ապագայի մասին ունեցած Մարքսի «գիտական» մտապահակերին հիմքն էր, իսկ յետ-ճարտարարտեսականացումի ընկերութիւնը կը ներկայացնէ Մարքիւզի Մայքոփիայի (կամ էմփոփիայի) արտացոլումը: Ինչպէս բոլոր իւթոփիաներու պարագային, հոս ալ ապագայի մտապահակերը առանձին չէ, այլ գոյութիւն ունի նաեւ դէպի անցեալ վերադարձ մը: Բուսօյի մօտ վերադարձը դէպի ճազնիկ վայրենիքն է, Մարքսի

ժօս՝ ղէպի չնախնական համայնավարութիւն»՝ բարձրացած մինչեւ «կատարեալ համայնավարութիւն», քեֆնալստիք աւելի բարձր մակարդակի ժը վրայ, Մարքիզի ժօս՝ ղէպի մանկական բնազգները այն մարդուն, որ ապականած է դրամատիրական յորդառատ իրականութեան մէջ: Ահաւասիկ Հո՛ս է, որ կ'ընդելուզւին օրհնեալ ապազան եւ անմեղ անցեալը, Իւթոփիլոս եւ Արքատիան:

19րդ եւ 20րդ դարերը եւս ականատես եղան Իւթոփիլայի եւ յեղափոխական գաղափարներու աւելի խոր ընդելուզումի ժը: Ինչպէս Փիթըր Սթրուպլ սրամտօրէն գիտել կու տայ, յեղափոխութիւնը ինքը կը վերածուի Իւթոփիլայի: Միջոցը կը նոյնանայ թիրախին. իտէպլ ընկերութեան մը մտապատկերին մէջ ի յայտ եկող զգայնութիւնները կը վերածուին վարչամեքենայի, որ պիտի առաջացնէ զայն: Այս ճարտարական յեղափոխութիւններուն» համար անորոշ ապազան կը դառնայ որոշ ապազայ: Այս ճեւղով անոնք կը զգենուն իրենց ենթադրեալ-կըրօնական զգայնութիւններու հանդերձանք՝ ի խնդիր դալիք փրկութեան, կը կեդրոնանան ուժի պայքարին վրայ եւ կը յետաձգեն լուծումը այն բոլոր հարցերուն, որոնց զէմ յանդիման կը դրուի որեւէ մէկ ընկերութեան կառավարութիւնը, մինչեւ յետ-յեղափոխական Իւթոփիլային գալուտստը: «Ճշմարիտ հաւատացեալներու» համար յետ-յեղափոխական իրականութեան յուսախարութեան առաջնորդող փորձառութիւնը աւելի կը քաջալերէ, կը սկսարացնէ անոնց առասպելա-բանաստեղծական հայեցակէտին այս շեղումը: Հաւատքը կը պահուի, անտեսելով փորձառութիւնը, եւ զգայնութիւններու թափով կեդրոնանալով յեղափոխական միջոցներու վրայ աւելի, քան Իւթոփիլական աւարտին:

Այսուհանդերձ, եթէ յեղափոխութեան դադարին զոյստեւումը կը պայմանաւորուի յիշեալ հոգեբանական ազդակներով, որ կը դիւրացնէ «Ֆեսթինգիսի ազդեցութիւնը» (Festinger effect),

թէ եւ անոր տարածումն ալ կախում ունի այս գաղափարին ընկալումէն, «Ճըլմարիտ հաւատացեալներու» խումբէն՝ տարբեր խումբերու կողմէ: Այս ընկալումը կը տարբերի մէկ խումբէն միւսը: Ընկերային կացութիւնները միակ ազդակները չեն այդ ընկալման ներմուծումին: Փաղաքական եւ մշակութային աւանդութիւնները, ինչպէս նաեւ յեղափոխութեան գաղափարին վարկաւորումը ինքը կարեւոր դեր կը խաղայ պատմութեան ընթացքին՝ յեղափոխութեան յաջողութեան կամ ձախողութեան մէջ:

Մեր ժամանակներուն, Նոր Զարթ կը ծառայէ իբրեւ պորտակապ տնտեսական եւ դասակարգային դրութեանց՝ մարքսեան աւանդական մօտեցումին մէջ առկայ յեղափոխական կացութեան Հեռ:

Իւթի Տըպլէ լենինեան կամաւորութիւնը զահաղործումէն՝ փոխադրեց յեղափոխական կացութեան ստեղծումին: Յեղափոխական նոր թէքիթները կը յուսան առաջացնել մենստրութիւնը եթէ ո՛չ մէկ հազարերորդ մասնիկին, առընտացն այն փորձամասնութեան մօտ, որ անհրաժեշտ է անոր հիմնումին:

Պատմականօրէն, աշխարհական փըրկութեան հարցը կ'առաջնորդէ յոյսին եւ իրականութեան միջեւ դոյութիւն ունեցող իրամատին լիցքաւորման: Եթէ յեղափոխութիւնը կարճագոյն ճամբան է ղէպի Իւթոփիլան, յեղափոխական անհամբերութիւնը առաջին հերթին իբ հեռագիտակը կ'ուղղէ ղէպի «քաղքենիները» եւ «ընկերվարական» յեղափոխութիւնները: Ապա՝ «քաղքենի յեղափոխութիւնը» կ'անհետի իբրեւ անհրաժեշտ նախապայման «ընկերվարական յեղափոխութեան» մը եւ, վերջապէս, նոյնիսկ կարիք չի ըզզագոյրի սպասելու յեղափոխական կացութեան՝ առաջ բերելու համար յեղափոխութիւնը. ահաբեկչութիւնը կը դառնայ յեղափոխութեան առաջնորդող կըտրուկ ճամբան, որուն համար քաղաքային թէ դիւղական կնիքիւնները պէտք է դիտակեցուին (foei) հաստատեն:

Անցեալի բոլոր «տեսական» բանավէճերը, որոնց մէջ միւրճուած մարքսեան յեղափոխական սերունդները իրենց կեանք

ըը մաշեցուցին տրամաբանութիւն ծածկելով ու այս կամ այն տարազումին համար իրենց գլխուն մազերը թափելով, մեկանի ծովեր հոսեցուցին որոշելու համար ստորակէտի մը տեղը յեղափոխական հայեցակէտին վերլուծման մէջ, — յանկարծօրէն անիմաստ դարձան: Պատմութիւնը փաստեց, որ բոլոր այս մարզանքներուն ետին միակ իրականութիւնը յեղափոխական կամքն է՝ զրկախառնըւած յեղափոխական տառապելին: Այս իմաստով՝ իրականութեան մէջ շատ քիչ տարբերութիւն կայ Լենինի եւ ժամանակակից հնոր յեղափոխականներուն միջեւ, բացառելով անշուշտ այն իրականութիւնը, որ վերջիններու պարագային «տեսական» թզեմի տերեւը նոյնիսկ անփութի թափանցիկ է, եւ թէ՛ ասոնք կը միտին կարճ ու կտրուկ յեղափոխութեան, առանց որեւէ անականի, այլ զլխազըրւած Յով մը միայն:

Յեղափոխութեան վերադարձումը Արեւմուտք եկաւ, երբ յեղափոխութեան տառապելը դարեցու առնչուելէ նորհրդային Միութեան հետ:

«Յեղափոխութիւն» բառը վերաստացաւ առասպելական երանգաւորում ամբողջական մտաւորականութեան մօտ, մասնաւորաբար անոնց մօտ, որոնք ըստ Մարթրի (եւ Հեկէլի) մտաւորական կ'որակուին իրենց զժբախտ գիտակցութեամբ (conscience malheureuse): Յամենայնդէպս, անուանի գրողներու մեծամասնութիւնը անմիջապէս շտարուեցաւ այս բոլորով: Հարցը կրկնակ ամօթի մէջ անգամ խոցուած ըլլալուն մէջ չէ միայն, թէեւ ատիկա ունեցաւ իր կարեւոր բաժինը, այլեւ ժամանակին երիտասարդ, սակայն ներկայիս Հասուն գրողներու պարագային մէջ, որոնք նախնարեցին ձախէն անցնելի աջ, թէեւ այս մէկն ալ խաղաց իր դերը: Ամենահիմնականը, սակայն, յեղափոխական այս դարարջանին ընծայած փորձառութիւնն է: Անոր ցոյրածակումները հորեւիլ սկսան Բէտլէրի, Օրվէլի, Միլոնի եւ Սփերպերի պատրանաթափութեան

զրականութիւններով: Ատիկա ունեցաւ իր զօրուոր աղղեցութիւնը, բայց ժամանակակից դէպքերու ազդու անդրադարձն է, որ ներկայ նշանաւոր գրողներէն շատերը խանգաւառութենէն նուազ բան մը կը զգան յեղափոխական նուաճումներուն եւ անոնց մէջ դեր ունեցող գրողներուն հանդէպ: «Բանաստեղծները ամծանօթօրէնադիրները չեն աշխարհի», ըսած է Օտըն վերջերս, «ամծանօթօրէնադիր այդ պաշտօնը կը վերաբերի գաղտնի աստիճանութեան»: Նուազ յատկանշական չէ Սօլ Պելլոյի «կենսագրութիւնը» Պր. Սամբրի մալորակը» գործին մէջ. «Ձեր յիշեր որեւէ յեղափոխութիւն, որ կերտուած չըլլար արգարութեամբ, ազատութեամբ եւ անխառն բարութեամբ ի խնդիր: Անոնց վերջին հանգրաւանը միշտ ատելի ոչնչական էր, քան ատաղիներ»:

Անգամ հին Համայնափար գրողներ, Արեւմուտքի մէջ, կը ցուցաբերեն նոյնանման պատրանքներու փրուզումները (disenchantment), թէեւ կը շարունակեն Հաւատարիմ մնալ կուսակցութեան:

Հարցազրոյցի մը ընթացքին, Արաւոն կը յայտարարէր, որ ինք զմիշտ ըմբոստացած է ընկերավարական իրապաշտութեան դէմ», եւ թէ՛ երբեք մաս պիտի չկազմէր Համայնափար շարքերուն, եթէ ժամանակին կարգացած ըլլար Կըլաթովի «Շալալ» (Cement) անուն գործը: Նոյն այս Արաւոն է, որ զըրած էր «Բնկերավարական իրապաշտութեամբ մը ի խնդիր» յօդուածը եւ որ հիմա կը յայտարարէ.

«Ճիշդ է, որ ստալինականութիւնը ինձի պիտներում համար ստեղծած է դիւրանաւսմութեամբ կացութիւններ: Բայց ոչ ոք կրնայ ըսել, որ ես ստալինական մըն էի՝ այդ բառին այսօրուամ ասուումով»:

Յետագործ մեկնարանութեան բառային ուժին նմանող ոչ մէկ ուժ գոյութիւն ունի: Բայց Հաւանաբար բառացուցական են յայտարարութիւնները այն գրողներուն, որոնք իրենց երեսուն տարեկանին ներթողական բանաստեղծու-


Քիւններ նուիրած են Կէֆէուի (GPU) եւ սրոնք յարձակում գործած են Փիքասոյի վրայ, որովհետեւ Փիքասո անհրաժեշտ յարգամեծարութեամբ չէր դժած Ստալինի դիմանկարը, «սիրեցեալ» առաջնորդին մահէն ետք:

Արակոն մինակ չէ: Նման հասարակութիւն մը կատարած է նաեւ Փապո Ներուտա, «Զօն Ստալինի» քերթուածին հեղինակը, որ կը դանդաղէր, թէ ստալինականները իրեն դէմ գործած են «մեծագոյն սխալը»:

Եթէ նման հին ստալինական եւ դրականութեան ազնուազգի նժուղները ստիպուած կը դզան այս կարգի յայտարարութիւններ ընել, յստակ է այլեւս, որ Խորհրդային Միութեան յեղափոխական կուր մեռած է ու թաղուած: Իրականութեան մէջ, այս յօդուածին էջերուն յիշուած արեւմտեան անուանի գրողներն եւ տարեգրողներն միայն եօթը տնուն կը յիշուի, իբրեւ ներկայացուցիչներ Ընկերակարական իրապաշտ կաշուութեան, դրականութեան եւ յեղափոխութեան խորհրդային համայնադատարանին մէջ: Անոնցմէ վեցը, — Բոմէն Բուան, Թէոտոր Ծրէյցըր, Հայնրիխ Մանն, Արնոլտ Զուէյք, Փոլ էլիւար եւ Պերթոյտ Պրեիթ՝ ի բարեբախտութիւն իրենց՝ մեռած են: Եօթներորդը Լուի Արակոնն է: Հետաքրքրական է, թէ անոր անունը պիտի երեւի՝ համայնադատարանին երկրորդ տպագրութեան մէջ, որ անկասկած դարձեալ պիտի բացուի հետեւեալ բառերով. «Հսկանմանքի մասնակցութեամբ մեծ յեղափոխութիւնը որոշիչ ազդեցութիւն ունեցաւ համաշխարհային գրականութեան վրայ»:

Եթէ նկատի ունենանք մարքեան դրականութեան գեղադիտական կողմը, ոչ մէկ բան աւելի լաւ ձեւով կը պատկերացնէ անոր սնանկութիւնը, քան Լուքսաի «Բուայէր» (Boutade), թէ Մոյժենիցիէի «Իվան Տենիսովիչի կեանքին մէկ օրը» խորհրդային «Ընկերակարական իրապաշտութեան» միակ գիրքն է:

(Շար. 5) ԼԵՌՈՒՏ ԼԱՊԻՏ



Ջարմանալի կուզողիպութեամբ մը, Ֆրանսական թերթերէն ոմանք («Ֆիկարո», «Լը Մոնտ», եայլն), կրկին անգամ կը հիւրընկալեն այս էջին մէջ յիշատակուած Ստալինը պատկերացնող Փիքասոյի այն նկարը, որ ուղիղ քաներկու տարի առաջ ու այս ամսոյն, այսինքն՝ Ստալինի մահուան վաղայացորդ օրը լոյս տեսաւ բանաստեղծ Լուի Արակոնի խմբագրապետութեամբ լոյս տեսնող համայնակար շաբաթաթերթ «Լէ լէթրը Ֆրանսէզի էջերուն», ամիսներ տեւող լրագրական աղմուկի մը դուռ բանալով:

Փարիզի ոռւս դեսպանը անարժան գտաւ նկարը նորոգ չքացած իր «օր» յիշատակին եւ «օր»ենական ժառանգութեան գծով հրաւիրեց նկարը գծող արւեստագէտը եւ զայն հրատարակող բանաստեղծը, որ բաւեն իրենց մեղքը հրապարակային ինքնախարականումով: Համայնակար շարքային Փիքասո արհամարհանքով դիմաւորեց նուաստացուցիչ սաստը, իսկ Արակոն «իլու կամակատարութեամբ մը» ենթարկուեցաւ կուսակցական հրահանգին, ի լուր աշխարհին «խոստովանելով», որ սխալ ըրած էր «սիրեցեալ առաջնորդը» այդ այլանդակութեամբ ներկայացնող պատկերին տեղ տուած ըլլալով: Փիքասոյի «Ստալին»ը այս օրերուն նորէն կը շրջի թերթերուն մէջ, իսկ անոր հետ դարձեալ քմիծաղով ու արգահատանքով կը յիշուի Արակոնի անունը, ինչպէս յաճախ կը պատահի անգամ մը իրենց հոգին («Արակոն կորսնցուց իր հոգին», Մարսէլ Ժուհանո) կորսնցուցած մարդոց պարագային...

ԳԻՐՔԵՐՈՒ ՆԵՏ

ՈԱԶՄԻԿ
ԴԱՒՈՅԵԱՆԻ

«ՄԵՂՐԱՀԱՅ» Ը



Չաթուհուհու թուականներու երկրորդ կիսուն, ընթերցողներուն ուշագրութիւնը իրենց վրայ կ'ընդունացուցած Հայաստանի երկուսուսուրդ բանաստեղծներուն մէջ՝ Յազարիկ Գալստիան թերեւս կ'զուս այն միակ ուժը, որուն բանաստեղծական անհասականութիւնը աստիճանաբար խորացու ու բիրեղացու, եւ այսօր արդէն նախորդ սերունդի կարկառուն գեղեցիկուն հետ կ'ընդունի իր տեսլը՝ իրեն հեղինակ աւարտած բանաստեղծութիւններու:

Մեր օրերու ճնշուղ եւ ժամանակակից կեանքի թուարունին հազարդ բանաստեղծ է Յազարիկ Գալստիան, որ ճիշտօրէն ըստ բանաստեղծներուն պէս ենթահող սերի մեր աշխարհին հետ նաեւ ուրիշ աշխարհ մը, թուալոյ ժամանակին հետ՝ ներքին ժամանակ մը, ուր ծայրերու, գոյներու,

տեղերու թարմալունը հանդիտի մը մէջ կ'ը իւր իւր թուարունին ապրիտ կ'անց մը, ա՛յն՝ որ խորհուրտով, հուրտով, տեսիլտով, կաշտտով արեւտով կ'ընծայուի ընթերցողին ու կ'ը հաստատէ բանաստեղծին տարրերէ յատկանիւր, իւր նութիւնը:

Ներքին ու արտաքին այդ երկու աշխարհներուն, երկու ժամանակներուն հետ պատահած ետեղաններուն, առանկ՝ յուրեմալունը հիմին եւ կենսաառ նորին անկնդրութեան, տարբարգրումին ու բիրեղացման անձնաաւր սպաւով խուսուածք մը, որուն շերքին մեծ մասին մէջ նոր արակով մը կ'ը փայլիլին՝

Երազմեմերի տուգարայլիք թորի եւ եկի-ինչպէս նաեւ փոփոթեան, քջու-թեան, տաղնապաների եւ տարգնատարքի կրքի ուշ-

դրու մթերքներ, արժաններէն վերջնմիւզ կտրտաւ ըստ ըստներ սպա, ու գաղաթներէն հոտոզ ճառագայթներ, որոնց մէջ բանաստեղծը կը գիշէր պապակով ժը յաշոգան է դնել՝

Անյայտութիւնից մի բուս յայտնութիւն,
Այսինքն՝
Անխուան բանաստեղծութիւն:

Ռազմիկ Գուռիան ծնած է 1940ին, Սպիտակի Մեծ Պարնի գիւղը: Միջնակարգ կրթութիւնը ըստացած է Լենինականի մէջ, իսկ մանկավարժական ճիւղը սուարտան է Երևանի Կալաուսուր Արտիկանի անուան մանկավարժական թանկիւնը: Բանաստեղծութիւններ գրել սկսած է դարձապահան ստեղծելով, իսկ առաջին հատորը՝ «Եմ աշխարհքը խորագրով լոյս ընծայած է 1963ին: Անցեող առնամեակին, երկաստորգ բանաստեղծը լոյս ընծայեց ուրիշ երեք հատոր եւս, 1967ին՝ «Սուտերմերի միջով», 1969ին՝ «Ռեֆլիկս», և 1973ին՝ «Մեղրանացի»:

Մասալով փոքր ևս միջին հաւաքով հարիւր յիսուն էջերէ բաղկացող հատորներ են անոնք, որոնցմէ իւրաքանչիւրը գործանալի յասակութեամբ մը կը պարզէ բանաստեղծին գաղափարն ևս լայն վայրէ: Առաջինին մէջ հասկնալի էր ստեղծագործ շունչը, երկրորդը՝ ինքնուրոյնութիւն մասնազ պարբերական փայլատարածներով սուտըստ գործ էր ստեղծել, երրորդը՝ «Ռեֆլիկս», սակայն մը յայտնաբերող անմիջեւի նորութիւններով կը ներկայանար ընթացողին, իսկ վերջինով՝ Գուռիան վերջնականապէս կը կատարէ իր ինքնուրոյնացումը ևս բանաստեղծութեան մէջ:

Սէրը, սպրիտը ևս ճաշը, ընտելեան ու մարդուն անտանելի ու անտանելի զեղեցիութիւնները, մարդութիւնը, մարդկայնութեան պապակով ու, հակադրաբար այս սպրուսեանուն՝ կորուստներուն կոկիթը, կործանումներու ստիժով զգացումն միւսը, բանագասութիւններուն աւերները, պատերազմը և կեանքը սահմանեցողիչ դարձնող խանգարումն խառնուածքներուն մթութիւնները գարնանը ևս Գուռիանի մտքին ու լիզերուն, դասնալով անոր բանաստեղծական պատկերներուն ծնուցիչ պատճառները:

Արտագին դրուումներէն աւելի, սակայն, ներքին խոռվածները ճամբայ կը հանեն Ռազմիկ Գուռիանը, որ յաճախ կանգ կ'առնէ տեսիլներու հրապարակներուն առջև: Մեր նորագոյն բանաստեղծութեան մէջ՝ ամէնէն աւելի թ'նքն է, որ կը յաշոգէր պատկերացնել տեսիլներու կեանքը, ինչու

պէս կը ցայտեցնէ կեանքին մ'ի բաժինը, որ անուն է տեսիլի մը հմայքով: Ու ստուգարան չափով մը հոս է, որ իրարու կը գործակցեն բանաստեղծին շնորհներէն երեքը, — երեւակայնութիւնը ևս ստեղծական ու լուրջական զգայարանները:

Պիտի աւելցնենք իսկոյն, որ Գուռիանի թէ՛ տեսիլները ևս թէ՛ կեանքի տեսլական պատկերները ունին հաղորդական շերտութիւն մը, որ կուզայ իր արեան կանգրէն, ցեղայն մարդեղէն, լիզուին, աշխարհակայնացիին, արժեքներուն մասնաւորող նկարագրին: Զերմութեան այս գոյք միւս ընկերացու իրեն, «Սուտերմերի միջով» անցած արեւէ մինչև «Ռեֆլիկս» սուտերոս դեղեցիութիւններով լի էջերը ևս մինչև «Մեղրանացի» շարք մը գերթուածներուն ստեղծակերպը:

«Մեղրանացի» ստեղծած սպասարութիւնները շոր սաստիճաններու կը բաժնեն ևս մէկտեղուած կտորներուն տեսակարար կէտը:

«Կեղծիչ քաց արա», «Ես իմ մանկութեամբ հանդիման կամայ», «Մառաքման ճանի» պատմելիայ մեր մէջ», «Ճայմերը» և «Գիշերուայ» մէջ կ'օրն իրար խորագրերով ու ստեղծով սկսած բանաստեղծութիւնները Գուռիանի ամէնէն աւելնալի իրադրութեան են, յաջաւով թարմ, ու կատարումով՝ անկրկնելի: Պիտի լայնաբերէնք աւելցնելու, որ վերջին ստեղծակերպ ստեղծուած ևս բանաստեղծութեան մէջ ևս անոնք կը ներկայանան իրեն բացարձիկ արտախոսներ:

Իրեն երկրորդ խումբի գերթուածներ՝ վերջներուն լատ մտիկը պէտք է գրուին զասական շունչով յաղեցած այն կտորները, որոնք կը կոչուին «Անմարտից ծեծուած, հոգիից հալածուած», «Փոքրիկ տնիւններով», «Երեկ տխուր, այսօր ուրախ», «Ճակատագրի դառնութեան միջով», «Աշխարհը յիմ է կարծանումներով», «Անյայտ, անամուս հոգեբի միջին», «Ձիւնքն սպիտակ շրթունքների պէս», «Փոքրիկների մէջ միայնուած ճայմերը» և «Երկու հորիզոններ»:

Երրորդ շարքին սակ կ'էջան «Ոչինչ չեմ հասկնում քո զգացման արտի», «Ճայմի անհունի կապույտ մի ծուկ», «Մաղաւմ է ցած», «Մտաք ծառ էր ծնուել», «Ամպերի իջնա առ մերմակ կտուցներով», «Ապակու մէջ անա մարտի եմ օրորում», «Ճեղքելով ինձ մուտի մտան», «Ջրառայ իրկիմ ու անգուստ յուշեր», «Ես անպատի սապկերի պէս» և «Ես անմահալ մընայի դարձայ» անուն բանաստեղծութիւնները:

«Անդրտեղքի մէջ ամփոփուած են հարիւրէ աւելի թերթուածներ, որոնց զտարդը, ժողովուրդէս վերի կորով՝ հետաքրքրութիւն ու հիացում կ'առաջացնեն ընթերցողին մէջ, զիբը կըրկին ու կրկին քանալու ենրուժ հրամայականներով:

Հոս շխիտատկուած Դաւոյեանի միւս բանաստեղծութիւնները շարքային բանաստեղծութիւններ չեն հարկուալ, փայլալուց մասեր միշտ սենին ստեղծ, ունին նշխարի փայլատակող հասուածներ, բայց իրիւս ամբողջութիւն միակուսեր տպաւորութիւններ չեն մկեր ընթերցողին զգացումներուն, մասնուժին կամ երեւակայութեան վրայ:

Ճշմարիտ բանաստեղծներուն ժողովուրդը միշտ տանձին տեղ մը դրուած է ու յարսնորսը անոր կարգ մը արտայայտութիւններուն խորհուրդը պղծելու անկող՝ անդիմադրելի: Այդ երակը աշխուժ է նաեւ Դաւոյեանի ժողով, որ մշտնջող մնոր նկարագրիչն յանախ անկրկնելի զնկնչկութիւններ կ'որոտայ ու կը հողորդէ տաղերուն, ընկերացնելով անոնց նաեւ իր վերաբերումը, հեռանալու, այլանտրու, յաներմանալու բուռն աննշխարի:

Այս անգամ միւսներն են, որոնք կ'իջնեն, կը նստնին բանաստեղծին պիւրօրէր բոլորը, կը մարմառնեն, կու լան տաք համարչներով, կը պատմեն, թէ աստղեր չկան, յետոյ՝

Եւ Յրոճք տաճ, քէ մահ էլ չկայ,
Մեռնում ես, կրկին յարութիւն առնում,
Եւ հուսաւոյցի, եւ մի պահ միայն
Ոնգայութեանք աւանցի կեանքս
Եւ այլիւս ես չվերադարձայ:

Անդայութեան խորհուրդներուն մէջ ինքննք արձակելու եւ հո չվերադառնալու զտիպումնն տառն, կայ հարկուա մեկնելու արձակութիւնը, որ կը հասուննայ միշտ ստեղծագործական ստարթով անսանալ ընտիրներուն մէջ ու կը ստահանայ ո՛չ միայն խառնուանքային բնական թելադրանքներով, այլնու զիմ ու այս աշխարհի անբնական կապիցս:

Օրիբն, մարդերն, տիրութիւններն ու խնդր կարտաներն յոգնելով՝ իր հողին անհանդատացնող տարերջ տարերն մեւերու մէջ շնչաւորելու այս մղումը յանախաղէպ է Դաւոյեանի մէջ ու իր անհատականութիւնը շնչաղ ամեննն մտուր ու արդիւնաւոր երակներն մէկը: Պատարիւժ մը աւորեայն, ներքին կարեւրութիւններ

բու գիտակցութիւն մը, բնութենէն ընտրուած լեռնելութեան մեւ մը, այլնն՝ մամանկայրխանը, ծաղկելու սահմանուած էութիւն մը, ծառը՝

Ա՛ն իձմ կեղելիք մէր.—
Այս ամառիկի գարաւ
Եւ կը ձուլուիմ մեզ հետ՝
Որպէս փոքրիկ գարուն:

Եղածն, տրուածն, խոտացումն զմառ, կուտուածն, շնչուածն զոյսածան կարտաներն կանչուած ողի մը կը թրթոտայ Դաւոյեանի ստեղծուն մէջ, մանկութիւն մը, որ զխորհրդաւոր, անթափանց խորութիւններուն շարժումը կը կընստնէ ու կը մեկնի զաղաներէնու կարտաներն բուռնուած:

Այդ խորիք իր խորիքի հեռա-հեռաւոր շարագումնիւրի մայմեր է բերում:
Մի մանուկ ընկած հրոմնց Խոնից
Վազում է դէպի անվայեան հեռուն:

Հոս նշխարի շնչը հարցեր, թէ ո՞ր խորիքի մասին է խոսքը եւ ո՞ր հարագաններուն մայմերն են բերուածները, արեւն զիմ զգայուած խորքը, ջնգային՝ միջնագայրերն հկած հարագանները, մարդկային՝, բնութեան, ստատուածութեան, շնչը հարցեր, այլ կը վազենք զէպե տեղախնան հեռուն վազող մանուկին հետ, կաշտակելով ասոր մաքրութեան, անխաթար բնաղբն, անհայտնակաւ կարտաներուն անսուս ամբողջութիւնն: Թերեւս միշտ այդ չէ բանաստեղծութեան զիբակնցածը: Ինչ փոյթ: Կապեք միւսն է, ընթերցողը լիացնելու իր հմայքը ու լիութենէն կտք անոր մէջ հոր ծարուներ բռնկեցնելու երկրորդ զորութիւնը:

Հոս պետի ուղեկնք պահ մը հարցումներով ընթանալու.—

- Ի՞նչ է բանաստեղծութիւնը;
- Անտաթին վրայ ունեցած աշխարհի ներդարձուն անդրադարձն է հաւանարար:
- Ի՞նչ է բանաստեղծութիւնը;
- Աշխարհի վրայ անհատին ունեցած ներդարձութիւնն է անտարակոյս:
- Ի՞նչ է բանաստեղծութիւնը դարձնում:
- Այդ երկու աշխարհներու խորքերուն պահումն անծանօթ զնկնչկութեան յանախործումն է անշուշտ:
- Ի՞նչ է բանաստեղծութիւնը շարքը անգամ:

Յայնապարծուած անտաթին հետ մարդը

յարտերութեան մէջ զնոց յաւուրքն է վերջին հաշուով:

Այդ բոլոր զօրութիւններուն միանուածն է, համասնոց շնորհաբերութիւնը զուրից: Յամենայն դէպս, Ռազմիկ Դաւոյեանի աւարկայացումները զերազանցապէս այդ ապուրութեանը կը ձգեն: Ան, բանաստեղծը, միայն տեսածը չի փոքր տալերուն մէջ, նաեւ զգացածը տեսնելի կը զարմրէ: Գիտէ, թէ կարելորդ արձագանգները կամ պատճենաւորումները չեն, այլ լրացուցիչ հասարակութիւնն է, կենսոգիտական գոյնը, շարժումը, լուսը ընծայուող զուգարեանն է, ճիշդ Մարտիրոս Մարեանի նուիրած իր բանաստեղծութեան հերոսին պէս:

Փեղ երկրագունաց փսիլ է իր մէջ,
Իւ մտկանման մի մեծ Անհունի,
Բոյր ու ծաղկումով է լազուս ճա ճիւղից
Իւ գոյն-գոյն երգեր, որ իմքը շունկի:

Սեր ինքը շունկի:

Մաշուտ:

Եթէ երկրագունանի զօրածոյ միայն պիտի վերազարտուի ու զօր միջոցն նոր գոյն մը, բոլոր մը, շարժում մը չհաղորդուի երկրագունանի՝ արշու քիչ արտուես:

Այդպէս եւ իր՝ Դաւոյեանի բանաստեղծութիւնը, կատարուած՝ կենսոգիտական ու պոետիկ ներքին աշխարհէն արդարացի փոփոխ, զուսնոյ, առողջ, արգաս արարելով, տեսիլներով, բարասումներով:

Եւ որովհետեւ զիտակից է իր կարողութիւններուն ու ծանօթ է ստեղծագործ տառապանքին, Մարտիրոս Մարեանը բնութագրող ուշադրաւ բանաստեղծութեան պէս՝ Դաւոյեան երկիրում յարգանքով մենագրած է նաեւ ուրիշ երկու դէպքեր, Սուրբ Մեսրոպը եւ ուսու տառարարիւր բանաստեղծ Սերգէյ Եսենին, որոնց սկզբունքները, հակասադիւրն ու արարչագործութեան մղող սաղնագիտները կը թուին որոշիչ զէր մը ունեցած ըլլալ մարդու եւ արուեստագէտի իր ունին միայն: Մարեանին հետ իր կապը տեսնող շարժում մը: Ահաւաստիկ եւ բնութագրող շուրջ տեսիլի մը ձեւն ու ուղի ընծայող Դաւոյեանի արարելի Սուրբին, որ իր զիտու լուսակերտից զտրով, խանգով, թախիծով ու նաեւ իր անձը բազկացնող, տարբերայնացնող այն միւս ուսով, ըստ որում՝ ան կը հաւատարմ իր

... Զայնիմ, խոսիմ, ցաւիմ,

Իր մեծ կուտքեան ու ճառագանքիմ իր մեծ:

Մարեանին ու տառաւորեալ Սուրբին տանդերով, պայմաններով, տառապանքով սպիտակ թուղթին անցիկը զնո թաւարար չի թըւիլ բանաստեղծին, անոնց մտ զօրութեամբ իմանալին կը յայտնէ իր հերոսներէն երբորդին՝ Եսենինին հետ, որ ձեռնները չեն շոքու մամի-Յերի վախիցս փորձաւորութեանը հաղորդելն տալու, պիտի ըտէր իրեն:

Ոչ ոք մեզ ճարտարեան
Համար քու չվարձի:

Պակաս գոյնի համար՝ շիջերու լարում, զգացում ուղիքի համար՝ մեծաստեղծան տառապանք, ու ճորտութեան դէմ՝ ճիշդ, Բոլոր մենագործութիւնները, ու Ռազմիկ Դաւոյեանի լուսայն բանաստեղծութիւնները ծնունդ տան են ներքին այս վիճակային մէջ ու պայմաններով:

Մեր աշխարհի միայն, մեր մէջ, մեր հոգերով ու յափտակութիւններով ապրող այս բանաստեղծը ունի, ինչպէս վայել է իրենց արեւն կանչը իմացած ու ցեղային խոսնուածքին հասարակ մշտարեւ խոսնուածքներուն, պարտէ զօրուր կապ մը հայ բանաստեղծութեան մայր բնութեան հետ, ներքնած է մեր հին ու նոր գլուխ-գործոցներուն հիւթը: Արգասու, իր տալերուն մէջ դժուար չէ կոտորել նարեկային զէտ-զիւրեային բաներ, Զարեկէն՝ զահազայող, անհզրական արձագործութիւններ, Մենարեկէն՝ փոփոխութիւններ, բայց այդ նպատակները նեղացուցիչ ներկայութիւններ չեն, ախրպետուած են ու ճուրակած տուեալ բանաստեղծութիւններուն ընդհանուր կատարելի մէջ ու կ'ապրին իրենց նոր հակասադիւրն: Ու աղջկայութիւնները իր մէջ ճուրջու տարբ ուժի մը տէրը չէ միայն Դաւոյեան, այլ տէրն է նաեւ խորթութիւնները վանող մաքրագործող ընտրի մը: Դեռ «Ստուիքնի միւլով» (1967) հասարակ օրերէն պիտի թելադրէր բանաստեղծներուն թոյլ շատը՝

Որ օտար մակընկներ հաւերի յաւանութեամբ
Նաւնն ձեր հաւատքի վրայ:

Վտանդի ենթակայ ճաւորները զգուշացնելէ ետք, ան պիտի ծառանայ նաեւ պատրաստի ու մաշած կաղապարներով զինեալ ենթարկողներու դէմ, անոնց, որոնք

... Մեզ ստիպում են, որ աշխարհիմ հայնիմ
Իրենց բացած նիւթիկ միլիոններէ:

Այնքան փոփոխ, իտապուով ներթեր բըն

նելու եւ ընթերցողին ներքը զանոնք բուրբովին անտիպ եղանակներով թրթուղանելու սովոր նուազին, ինչպէս կ'երեւի ըմբոստ զիծեր կէ կրէ նոյն ասան: Առ ստիկա բնաւ անբնական չէ: Արդէն բացուած միջանցքներէն աշխարհին նայող անձը զորք լուսնի զբականութեան մէջ, Ձի կրնար սաղարականէն վեր բարձրացնել իր հասակը, եթէ Եմիլեանցքը ընդարձակելու կամ նոր պատուաններ բանալու է խնդիր լուս կամ յախումն մեւով ճը չբախի սուր կամ անոր, ըմբոստութեան զգրուիչ շարժէ սուրբայ ստիկաններու կամ անզորեան ժառանգութիւններու ղէմ: Այս դեմքին վրայ եւս զգալի է Գաւայեանի ներկայութիւնը, որ կարգ ճը բանաստեղծութիւններու մէջ կը ժառանգ խորանի ստապանք ճը, ու ստիկա՝ ասանց բարձրագոյն զօլերու, ընտրելու, ընթանալու, իրաւ ըսելու, ներդրելու հրամայականի ճը բերումով:

Այս կապակցութեամբ, «Մեղքանցքի մէջ եղած սրամազբութիւններուն ամէնէն ուժեղ արտայայտութիւնը զաւտանութեան շրջաններէ մէջ բառը մանրացնող շարժանութիւններուն ղէմ ու յանուն բառին արժանապատուութեան սրմանէն Եմիլ Է:

Պիշակերմերի, անտաղանթների ստրուկն է

Բառը,
նա կանծարիմ է միայն հաւատար:
Բա՛ռը: Ար ստորելուկան իր բովանդակութեանն պարզուեցաւ յառկապէս այս դարուն, որ չի՛ժա յոգնած կը զայն

Բառերի աննայք հարսանի մէջ,
Եւ յոյսար է Յա, Կանծարացած մի միջ
Եւ աննուան է, եւ ճնշօրէն խեղճ:

Եւ անկա, բառը, ի հարկէ գործնաւ կը սպասէ կանծարհներուն, ժարգարհներուն, իժառանգներուն, որդէտի վերանուանէ իր մեծախորհուրդ իժառար եւ ստեղծագործութեան, արդարութեան, երջանկութեան պողոտաներուն վրայ ընծայէ վերջապէս իրեն պէս յոգնած, մանկարցած, տխուր եւ Երեւոյն խեղճ ժարգէ նախին խոստացուած զուարթ շնչաութիւնը:

Այս նոյն սրամազբութիւնը իցանող շարքին կը պատկանի նաեւ Գաւայեանի «Մասը ծառ էր ծնունիչ սողով սկող ղանաստեղծութիւնը: Ծառին ու ստոր խաղաղութիւնը վրդովող զամբին իրական եւ խորհրդանշական պատկերին մէջ, բանաստեղծը կը պատմէ պայթելու պատրաստ ծառին բազրոջումը ու անոր նառային լինելութիւնը

խորասակելու համար զամբին սուրբած զուր, սաղով բանաստեղծութեան սա աւարաը:

Ու մեղքերը յինան խաւարի քաց կազիմ,
Մասը մի խալ Յիաց,
Եւ օտաչիմ հերքիմ
Գարձու աննուն մի երգ՝
Հինց իր՝ Բաճու շրթիմ:

Յամբն, բերա ուժը, արդեւքները (ԵՄ՝ արգիլմերի տեսլական ո՛ւժը) անպակաս եղած են կեանքէն ու յառկապէս մեր երկրէն, ու ստիկա՝ ի նուայ սնախ, Խորհնացիէն մինչեւ Նարեկացիի դարը, Սայաթ-Նովայէն մինչեւ Արզնիան, Վարսեմանէն մինչեւ Ձարեկ, ու մինչեւ սրբ Գրեկոյ Հոգեհարազատ այս կայտառ ընծիւղին, որուն շարք ճը բողբոջներուն (եկոստովանանէն, «Աշխարհը լիքն էր կործանումներով, եւայլն) ընդմէջին եւս անպա Երամբն, ցնցեց հասանարար իր ստեղծը, յայց չկրցաւ խորասակել նառը, ընդհակառակն՝ ծառը զարձու երգ՝

Հինց իր՝ Բաճու շրթիմ:

Բայց ծառին եւ զամբին բախումը նկարագրող ու յայթաղան այս ելքը հազարապատուութեանն այլարանական խորհուրդը սակմանով կամ կ'ըլլանք, եթէ ընդհանրացումներու մղող անոնց ուժը յաւարանեք նաեւ պատմութեան վերայ եւ անոր մէջ լսանենք ժողովուրդներու կենսազրութիւններէն թելադրուած ցօլեր: Ճընշողներուն յառկապէս, ու նշուել շուղողներուն մօտ՝ կեանքի յայտարար անակնկալ երգը: Բազմիկ Գաւայեանի մօտ շնչուան է նոյնպէս Երեւոյններէն ու անաղանջներին օրէնը՝ զրութեամբ կամ մեքով կատարուած միւս ա՛ժառութիւններուն ստիկան խալ բազրը, բնութիւնը հարստահարող երեւոյթը:

Ինչ որ գուցեղի եմ մարդիկ բնութիւնից՝
Տերը կամ վախով եմ (ցրել ու ձանձրայթով,
Կամ ամէն մի թանկ բան մնացել է կիսատ:

Փաղոցներում տես, ուր օդ չկայ վազուց,
Վախով շրջապատուած ծառերն եմ օրորուեմ,
Ճննկուկները փոքրիկ սարսափներ եմ կարծես,
Կիսատ կարօտների մարմնիկներն եմ նստած,
Անկերց կարուտների ստգնաղն եմ հալվաւմ:

Քաղաքակրթութեան այժմուս հեւքին մէջ պատկերն է, անզրազարճ յազումը սարածութիւնները ղրաւելով սարածասփեւս զեղեցիկութիւնները ոչնչացնող սպանդին, որ սուր սաղ-

Դաւոյիստի էջերուն, յանախ անոնց մէջ զննութիւն կ'անթարկէ ինքզինք, խորանալով կործանումներուն, առաջնապէս ծովածառայ վիշտերուն պատճառներուն մէջ:

Եւ այդ վշտերի անսահման հոսիմ,
Տէր իմ, ի՞նչ ստեղծեմք, Պայէճն է հովիւ.—
Եւ կայ մի վիշտ էլ, որ այդ կայէճիմ
Գիտնիմ Արեւի մահուամ շնորհիւ:

Շոշափիմ ճեղքով եւ տնօնեմ աջօք,
Որ իմ մէջ չկայ արժագու կայէճ,
Մալեանպարեմ իջած ծնկալայք
Պագանիմ երկիր, աւ Աստուած հայիմ:

Այս եւ շարք մը այլ բանաստեղծութիւններու մէջ հետազոտական է այն փաստը, որ Դաւոյիստի, մեր բոլոր իրաւ բանաստեղծներուն պէս, թէ ապրումներէն յետոյ Մեծաբանիչ հետնորդին ձեւեր ճարելու հակումներ կը ծառնէ: Ետեւ պաշտարարականութիւնը մտ նշմարելի այս երկայնիքի պատճառներուն մէջ զօրուար է խորանալ հոս, ըսենք միայն, որ ներքին շնորհամբ ունեւորու էջերուն այս զինք կ'ընծայէ լեզուական աշխատանքի մը, պերճութիւն մը, առանձին համ մը, ինչպէս կը հաստատեն արդէն Դաւոյիստի մէջ շնորհամբ վերի հաստատները:

Աւելի որտարաւոր բանաստեղծութեան խորքն է սակայն, մարդիկէրոյմ զինուած, վայրի քաղաքային անձնագրերով, որոն զանգուղ ու կործանելու քննադրերով մարդու մարդու ճակատարարութիւն հերոսին վարքը, ճշմարիտ մարդը, որ զու է միշտ, բայց նաեւ հրճուանքով լեցուն, որ իր մէջ չկայ արնագու հայտն, զայնէներով ինչ այս աշխարհի մէջ:

Պիտի շարունակենք ու ընդհանրացումներու ճամբով համարակից ըսել, որ այս բանաստեղծութեան մէջ եւս կայ մաս մը մեր պատմութեան, ժողովուրդէն, այն յաւիտեանական Արեւին, որ հիմն է վեր ապրեցաւ հայրենիքու մղձաւանջին սակ, բայց չզուսանակց իր ընդմիջ, Գարեհուղաւ արարքներու շնորհիւ, այլ շարունակեց իր առաջնութիւնը ներքին իր լուսերը աշխարհին ճաղարկելու կեցողիքով զօրութեամբ:

Բացասական ուժերու խռովումէն, մոլորանումներէն, կաշկանդումներէն, աւերումներէն կը դառնանայ յանախ Դաւոյիստի, կը ստեղծանայ, կը խորուի, բայց չի նուաճուի անոնցմէ, կը շարունակէ թէկուզ իր յուսահատական կոխը, որպէսզի զանգուղութեան ուղին զործէ անկաւ-

կանդ ու ճանտակ սուղազարտի տխուր ստացում լոյսերու փոխարէն կեանքը լեցուի:

Մի փառքիկ կամայով,
Մի փառքիկ լուսբեամբ
Եւ ամոռնան, ամժայր,
Ամերկան ճոյսով:

Գոնայը՝ կենդանութեան համար հարկաւ, փոքրիկ լուսբեանը՝ մեծ լուսբեաններ վերածնունդու անհղով թերեւ, ու անհարկան յոյսը՝ յոյս-նորուն յուսարկումները բարեխառնելու պատրուով:

Կեանքը այսպէս տեսնելու եւ բնութեան զննչիւթութեան հետ աշխարհը մարդկայնական ապրումներով հարստացնելու համար կարճ շոտիլ զուսարկութիւնները անտնօթ չեն մեր պատմութեան ու գրականութեան, ու յեղափոխականութեան, սուրբերուն ու բանաստեղծներուն ուսանչները այնքան աշխատանք են ու նոր, որ նորի մը կարիքը հարկ թէ զգացող զանուի, երբ մահաւանդ փորձ ըլլայ այդ նորը տալ մեզի ջնարկու գութեան ծանօթ կողմաներով: Բայց ըստ երկայնիքի, ո՛ր ծանօթ արամաղբութիւնը եւ ո՛ր ալ կարգին, կանոնին, արեւտաքան կարճ նեղացուցիչ լափերուն զէժ մեր նախադրամաղբութիւնը վճարական նշանակութիւն մը չունի, երբ ենթական տէր է հաստաջ ներշնչող ապրումներու եւ զիտէ ապրումները թրթուսանել կենդանի, անմիջական, շարժուն պատկերներու մէջ:

Նոր մեկերու որոնման մէջ արդէն ինքզինք պարտադրող վաստակի մը տէր ճաղովի Դաւոյիստի ստեղծուած ընդհատած է իր ընդուն արհամարհարութիւնները եւ այդ միտաբարութիւն մէջ ու ճաննարարութեամբ օրինալութիւններով կառուցած է իր կարգ մը յղացումները, որոնցմէ մեկուն մէջ՝

Լուս ծպտում եմ փոքր ու մեծին
Կամ ծիծաղում ինձի իման,
Ինձ քայտում եմ տաղանքիմ
Անպարտի գիտի մեան:

Եթէ մարդուն բաշխուելու աստուածային հակումը սակայն չէ կորսնցուցած իր արժեքը ու պատկեր ըստածը զոն նշանակութիւն մը ունի գրականութեան մէջ, ապա ուրեմ բանաստեղծութեան մեկերը փոխելու համար զօրը պարզած ամէնէն անզուտ նորամուտ անգամ այս սողերուն դիմաց պար մը պիտի ստեղծէ իր ճիշտափոխականութիւնը ու ի սեռ սուղներու

իննաչքին՝ փորձէր ժարդկայնական ապրումններով սղաղէլ իր հոգին:

Արուեստին օրէնքները շատ են, ու օրէնքներէն առաջինը անկէս է հաւահարար, որ ժողովուն կու տայ օրէնքները:

Բարի, ազնիւ, հնչող գեղեցկութիւններուն հետ՝ անմասցորդ սէրը, հպնական հրճուածքները, կատարելութեան աննշով կերպարանափոխուող, հոյզուող ըզմանքները երգած սանն՝ Դաւայնանի խորացումները, յայտնարեքած գեղըութիւնն ու հմայքը, խաղաղած խորհուրդն ու լինելութեան աննշքը իր բարձրանան երբեմն անսովոր գեղեցկութիւններու:

Յայնքը գուցէ չեն մտնում քնաւ,
Գուցէ ցաւաւս են ջրերի խորքում,
Գուցէ մտնում են խեղճների մէջ
Մարգարտամալու տնկանքով զնգում:

Յայնքը չեն որչաղուած բանտանգծուած ան մէջ:

Գուցէ արիւնլուայ ժարդարէի մը սղաղակներն են ձայները:

Արդարութեան կանչեր են թերեւս:

Նոր կեանքի մը օրէնքները յուշող հանչեր:

Պարտադրուած երգի մը բնկութիւնն են զուցէ ձայները:

Անպարճանելի տառապանքներ օրօրոջ կարելի թիակ մըմանջներ:

Յամենայնդէպս, կան անանք, կ'անմտաւորեն մէկն ու մէկը մեր կարտաներէն ու կապութիւններէն, որոնք տարտամօրէն կը խլարին ժեր հոգիներուն ու կ'երկարաձգեն իրենց կեանքը՝

Մարգարտամալու տնկանքով զնգում:

Ասիկա ինքը բանտանգծութիւնն է, նոր՝ իր յաջուածով, պարզ՝ իր արուեստով, խոր՝ իր թելադրականութեամբ, յանկուցիլ՝ իր շարժումով: Երգուածն, ընկերարանն, ընաղէտ վէպէրներն չեն չենք գիտեր որ մէկը կ'ըսէ. «Եթէ գիրք մը չարժէք կարգալ երկու անգամ, ապա արեւմ շարժեր գայն կարգալ թան մէկ անգամ»:

Ընթերցողը՝ անանելիէն զէպի անտեսանելին, Ժանօթէն զէպի անձանթը, իրականութեան զէպի խորհուրդը մղելու մղաղութիւններ բերող Բազմիկ Դաւայնանի «Մերքանացը վէպէրի խառնականգնութիւնը արդարացած» դիմէ: Ասիկա կը կարգացուի կրկին ու կրկին անգամ:

Պ. Յ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՐԹԻՒՐ ՄԻԼԵՐԻ «ՎԱՃԱՌՈՐԴԻ ՄԸ ՄԱՂԸ»

ԹԱՏԵՐԱԿԻՆ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ամերիկացի, սակայն ծագումով հրեայ Արթուր Միլեր, 1949ին իր «Վաճառորդի մը մահը» թատերախմբով միամտանակ երեք մրցանակներ էր շահեր: Թատերակը Պրստուէյի Թատրոններուն մէջ էր սկսէր ներկայացուիլ 1949 Փետրուար 10ին, հրկնակիւմով 742 տեղամ, ինչ որ զայն էր դասէր Պրստուէյի մէջ մեծ յաջողութիւն դասած Պե երկար տան ներկայացում 50 թատերակներուն շարքին:

«Վաճառորդի մը մահը» նախ տարին իսկ էր սկսէր ներկայացուիլ Լոնտանի մէջ (28 Յուլիսին), սակայն այնտեղ նուազ յաջողութիւն էր զանկէր, և 204 ներկայացումով կ'աւարտէր:

Թատերակը կառուցուած է զիպրերու այնպիսի շարահիւսութեամբ մը, պատմութիւն այնպիսի թեքիւթով մը, որ անզիտաստեաները կրնան չհամարձակ մտածուիլ: Տեսարաններ կան, որոնք ներկային մէջ տեղի կ'ունենան, և կան սրբիներ, որոնք անցեալին տեղի ունեցած են և կը վերջնակէն հիմա, անզիտաստեան զիմաց: Տեսարաններ ու կան, որոնք անցեալին տեղի ունեցած են այնպէս՝ ինչպէս Ուիլիամ Սոփի Լաման էր պատկերացընէ զանոնք և կայ տեսարաններու շարքերով իւր մը, որ ամբողջովին երևակայութիւն են, Ուիլիամ Լամանի մտածութիւնն ու երևակայութեանը կ'արտայայտեն: Գործածուած թեքիւթը պատահականութիւն չէ, էր ձգտի արտայայտել Ուիլիամ Լամանի սպասելի մէջ տեղի ունեցող շրջապատայալ, որ զինք աստիճանաբար էր սեղմէ, էր թեքիւթ, իրականութեան էր կարէ, էր վերածէ արհեստականութեան, յագնած, սպասած էակէ մը:

Եթէ թատերակին պատմութիւնը ամփոփելու սկսենք, պիտի ստացուի Լաման ընտանիքի մը կիսանքի պայթումի նկարագրութիւնը, որուն ընթացքին ձգտումներ, երազներ էր քայսելն, էր զանտան աստիճանաբար, ազա, չիրականանալով, պատրանաթով կ'ընեն նկարագրերը: Ուիլիամ Լաման ու իր շտապները տեսարար կ'երազեն աստիճանաբար զիմաց ըլլալ, յաջողիլ, Լորտաստալ, յար-

զուիլ, սիրուիլ բոլորին: Սակայն էր պակտի իրենց Լամայտաստեան ճիւղը, կարգապահութիւնը: Կ'ապրէր այն ապաստանութեան ասի, թէ իրենց անձնատրուութիւնները ինքին քայստիկ անձնատրուութիւններ են, որով՝ անհրաժեշտաբար պիտի յարզուին, պիտի յաջողին:

Երեսուցըրու տարի զազազէ զազազ շրջած տակարարկան տան մը վաճառորդը, Ուիլիամ Լաման, ասորից տանելու վրայ է, յագնած է այնտեղ, մը աստիճան վերակ մը ունի. զորեքը աստիճանը չեն, կարեւորութիւն աստիճան չկայ իրեն. շարժական սրտ զուտար մը ապահովելու իսկ ի վերահի չէ այնտեղ և կրցոյթ Զարիթ բարեարտութեամբ, տար փոխ տուած զուտարներով է, որ էր յաջողի ծայրը ծայրին բերելու: Զուտարներէն մեծ յայտ չկայ: Մեծը՝ Պիֆ, տեսարար բարեւոյթ մէջ է Լորդ Լեա, էր Լեանտայ տունէն, էր վերապատկայ: Կը փորձէ Լամանուն զարիթ ձեռնարկել, չէ յաջողի, կրկին խոյս կու տայ տունէն: Զգալի է բարեւոյթ մը Լոր և կուկին միջև: Լեանտային երևան կ'ըլլէ, թէ էր իր անհարտութեան Լեանտայի ձախուղած է մաթեմատիքի փնտրեան և Լամայտարան մուտքը ապահովող աւարտական վկայական չէ ստուած իրեն, Պիֆ Պոսթըն վագան է, ուր էր զանտեք այլ բոյնի լայրը, իր զարիթի բերումով: Լեա, սակայն, անակնկալ կերպով տեսած է, որ կին մը կայ Լորը աննկող: Մինչ այլ պատմած Լորը մէջ կ'ըզիթ աննկողով, հրաժարուած ու խորատկուած, Պիֆ ձգած է տունը և մեկնած: Մտիկ ետք տեսարար բարեւոյթ մէջ է Լորը Լեա, Լեանտայի զայն շատ սիրելուն:

Միտախ մտպած է միտի Ուիլիամ կ'ըլլէ՝ Լինտա, որ տանը խորիտի է, սիւնը, անտանայն ամբողջական պաշտպանը: Միտախտան, որ ի վերջոյ յանձն կ'ունէ իր զուտարները վաճառելու տունէն, որպէսզի անտեք, իրենց ներքապ ու յագնած Լոր Լեա տեսարար բարեւոյթ ու վերջնակ շրտանցանն զայն:

ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՑԵԱՆԻ

ՁԵՐ ԿԵԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Թեմադրուքիւն
ՋՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ

Ուրիշը՝ Մարտիանի զճեր կեանքի ժամանակը թառերգութեան զհզգերը տեղի կ'ունենան իր տիպարներէն մէկուն պատկանող ժողովըրդային գրաստիւնը մը մէջ, ուր կ'աշխատեն բնականներ, անգործներ, զորս փնտաղներ, մայթաղիճներ, դատարկագործներ, չըջանի ոտականը եւ տնտեսական նախանձնի կացութիւն մը ստեղծան ձեռն: Առհասարակ երազողներ են ըստըն ալ, ցաւազին երազահարներ: Մէկը կ'երազէ մանկութեան շրջանին իրեն զայցուած աստիճանի բոյն մը, որուն երազը տարիներ շարունակ զտըշ տուած է անապատով ճակատազրկին լեռ: Երկրորդը՝ Հայրենիքի կարօտաբունէն զշտող մակոյկ մըն է, որուն համար զաշխարհը անհիմն է: Երրորդը՝ սպասման ու տարակուսանքի հուրհրէն ու աշխարհին հալածուող սիրահարն է: Զորքորդը՝ իր ջգուտ բազուկներով արգար հայր վաստկող բնականներն է, որ տէր է զգայուն սրտի եւ հարցերն ու կացութիւնները վերլուծող մտքի, ուրիշ մը՝ ստիկանական իր տարտըն ատող, բայց այդ տարազին լեռ, ատարիներու ընթացքին, իր էութենէն ներս արժաս երկարած բրտութիւնը վանել չկրցող խոճառակը, կամ իր միւս դործակիցը՝ զաշխարհը վատնել վատթարագոյնին փոխելը յայտարարող սաստիճ ստիկանը:

Մեր կարծիքով, զսասական հանկարգութեամբ զլիսուոր հերոս ու երկրորդական ախպարներ գոյութիւն չունին չուն, ալլ կայ մըթնայտը, ժամանակաշրջան մը պատկերացնող հոգեվիճակներու ամբողջութիւնը, որուն ամբողջացման ի խղիք իւրաքանչիւր տիպար, մեր աշխարհն զնմաց զմուտ պատասխան վրայ կը զուարէ իր զոյնը, իր սաղնապը, որ մէկ էր քանզի է արարուող պատասխան: Այսպէս՝ Ուրիշը

կըր Մարտիան կը կհրակ երեսնական թուականներու ամերիկեան կեանքի ժամանակագրութեամբ՝ զճեր կեանքի ժամանակը, որ է նաեւ ըստը ժամանակներու կեանքն ու կեանքի ըստը ժամանակները, որովհետեւ այդ կեանքի ժամանակը գրեւորող հոգեվիճակները կու պան իտը տեղեակէն, ունին կեանքին տարիքը եւ կեանքին հետ պիտի շարունակեն ապրիլ:

Երկրորդը բնագործը Ջօհնայ Եագուպեան, ըմ հանելով քսանէ տակի երկրորդ տարիքը կը մղէր վաստկուող փորձասութիւն մը, որ շնորհի իր եւ ընկերակից դերասաններու անբողբոջով իտղարկութեան, կարողացաւ զանազն կանգնատեւրեմ պատուարը եւ հաղորդակցութեամբ վարակեց սրահը:

Ժամակալ անգործ յայցուած բերաւ իր նըպատը՝ ստեղծելով այն բնական մթնայտը, ուր դերասանները սպարեան իրենց ժամանակութեամբ անպարենեան ներաշխարհային տակուղբայտութիւնները: Ուլազբաւ էր մանաւանդ կիտի բնակավայր վերեսնականին յայցուածը, ուր թոճի (Ջօհնայ Եագուպեան) եւ կիտիի (Մեթակ Աստուրեան) միջեւ տեղի ունեցող սիրային զգացումներու թարգման արժը, աշխարհին մեղծ անբերի մը նման իջաւ բնին վրայ, յարգեցաւ բնին, լեցուց սրահն ու հանդիսատեսներուն հոգիները:

Նման հանելի պահեր հազուադէպ լինին: Եթէ Արա Մանուկեան բարեգործ տղամարդու դերը մարմնաւորեց զուտ ու հանելի իտղարկութեամբ, նախքան հանելի էր դիտել Եագուպեանը՝ զուարճաբառ ու սուստան ճերտանի տիպարին մէջ, Գէորգ Եայպանեանը՝ զաշխարհը վտակ վատարաբազայնի փոխելու:

ձգտող քառիկանին ժաղը թարգմանելու դժու՛ղ, Մեհակ Առասուրեանը՝ դռան անցնել ժը աղ-
րան եւ անպակով կերկայնն սարսափանաթ
պոսնիկի ժը հագւոյն վերիվայրումները գրտե-
ւորելու ատեն, կամ Կ. Տէֆտէրտէրեանը՝ բանի-
ժաց ու էլ ժարտախօս բնականիբի զերտի:

Անուշա, որ թերութիւններ գոյութիւն սւ-
նելին, բայց կը կարծենք, ինչպէս արուեստի սր-
եւէ չորո՛ր պարագային, կը մոտցուին այդ
թերութիւնները, երբ ընդհանուր մթնոլորտը
կը վարակէ սրա՛նը եւ թատերգութեան աւարտէն
ետք հոգեվիճակներն ու գու՛հերը կը շարունա-
կեն յամենալ:

Կը սիրենք յուսալ, որ Զօհրայ Եղաւպեան
եւ իր ընկերները իրենց յաջորդ ներկայացում-
ներուն կը մերթադատուին շափազանցեալ յուզա-
կանութիւնն, որ անչ-անչ մտտեցու ձրի մելո-
արմին եւ կ'աղաան զէպի բնմ կատարուած
միանձան ու սրա՛ց մուտքերէն:

Իր առաջին ներկայացումով «Փորձապիւմ
Թաւրանը» առաւ լու խոստում ժը, իմբային

ուսումնասիրուած խաղարկութեամբ թատեր-
գութիւն ժը ածուր շիմերու վրայ բարձրացը-
նելու փորձառութիւնը:

Ուրախաւիթ երեւոյթ էր երիտասարդ բն-
ժաղիչ Զօհրայ Եղաւպեանի երիտասարդաւ-
զայն լայնարտութիւնը, իրեն ասրենից երիտա-
սարդ սարբեր բնմ բարձրացնելու յանդգնու-
թիւնը, երիտասարդներ, որոնք անսարակոյս
խոսամեղից սարբեր են կերանուայ թատերգու-
թեան ապագայի հաշույն:

Արա Մանուկեան, Վահէ Պերպերեան, Փիկր
Թերզեան, Ռազմիկ Շիրինեան, Կարօ Տէֆտէր-
տէրեան, Փօլ Թաթեան, Մեհակ Առասուրեան եւ
բնժաղիչ-զերասան Զօհրայ Եղաւպեան «Ձեռք
կեանքի ժամանակը» թատերգութեամբ ասին
փաստը փորձառական թատրոնին, որ օրերու
փորձառութեամբ ու անսակարկ նուիրութեամբ
պիտի բիրտեղանայ ու պիտի բերէ իր ինքնուրոյն
նպատար կերանուայ թատերական կեանքին:

Մ. Կ.

ՄԻՆԱՍ ԱԼԵՏԻՍԵԱՆԻ ՄԱՅԸ

«ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐԿԱԾՈՎ»...



Ընթերցողը կը յիշէ հարկաւ, որ Պէյրուսի «Մոսիւ Ար» ցուցասրահին մէջ ցուցադրուած հայերնի շարք մը նրկարիչներուն գործերուն առիթով «Բագին»-ի նախորդ թիւին մէջ տուած էինք յօդուած մը, ուր առանձնացուած արւեստագէտներուն կարգին տեղ տրուած էր նաև Մինաս Ալետիսեանին: Երիտա-

սարդ նկարիչին լուսանկարին ջովն ի վեր ներկայացուած էին իր կենսագրութենէն սեղմ գիծեր, ստեղծագործութիւններէն մէկուն լուսանկարչական պատճէնը եւ արուեստին քանի մը բնորոշ յատկանիշները:

Այս ծանօթութիւնները բովանդակող «Բագին»-ի համարը հաղիւ բնթերցողին ձեռքը հասած, Հայաստանէն հոս հասաւ բոթը, թէ՛

— Մանօթ նկարիչ Մինաս Ալետիսեան զո՛հ դացած է ինքնաշարժի արկածի մը:

Նորէ՛ն ինքնաշարժի արկած...

Իր բնտիր գաւակներուն հաւաքական ոչնչացման սուգով խոցուած ժողովուրդի մը համար իրապէս քիչ մը շատ է ու ծանր այս անհնթեթ արկածներուն իլլած նորարողը՞ տաղանդներուն կակիծը:

Ինքնաշարժի այս արկածները յաճախակէպ են ու պարզ քաղաքացիներո՞ւն ալ կը պատահին արդեօք, թէ բանաստեղծներուն ու արուեստագէտներուն միայն սահմանուած բախտ մըն է արկածը հոն, մեր երկրին մէջ:

«Երիտասարդի մը մահը ճաւաքելութեան կը նմանի» — ըսած է մտածող մը: Համեմատութեան ի՞նչ եզրով պիտի խորաչափէր արդեօք ան արուեստագէտ երիտասարդի մը մահը, որ իր խորտակած հողեղէն անօթին հետ կը խամբեցնէ նաև աշխարհը առանձնայատուկ ստեղծագոր-



«Արուեստագէտի մը աշխատանքը»

digitised by

A.R.A.R.@

ծութիւններով նուաճելու ելած ժողովուրդի մը յոյսերէն մէկը:

Մինաս Աւետիսեանի հետ այս երկրորդ անգամն է, որ մեր ժողովուրդը կ'ապրի կորուստի անգարմանի կսկիծը: Առաջինը քանի մը տարի առաջ էր, երբ գոյներուն ու ձեւերուն կեանք տալու ճակատագրով աշխարհ եկած այս սժանային աշխատանոցին մէջ պայթեցաւ ճակատագրական հրդէհ մը, որ հրոյ ճարակ դարձուց իր գործերուն կարեւոր մէկ տոկոսը, ո՛վ դիտէ Երուսաղէմի ի՛նչ անհանդէպի կայծեր ձգելով իր հողին:

«Եւ ապրել ես դու տագնապների տուպ»:

Տողը կը պատկանի բանաստեղծ Ռազմիկ Դուռոյեանին եւ ըսուած է Սարեան նկարիչին համար, եւ սակայն որքա՛ն ճիշդ կը պատկերացնէ նաեւ Աւետիսեան նկարիչին հոգին, որ տաղուեցաւ իր աշխատանոցին մոխիրներուն տապով եւ անհեթեթ երկրորդ արկածի մը հետեւանքով երկրորդ տուպ մը ձգեց արուեստի մեր պատմութեան մէջ:

Մինաս Աւետիսեանի սուղը աւելի խորութեամբ ապրեցան մանաւանդ այն սփիւռքահայերը, որոնք հայրենիքի մէջ անձամբ ճանչցած էին տաղանդաւոր արուեստագէտը ու այցելած անոր երկիւղած յարգանք ներշնչող արուեստանոցը: Ըստ անոնց վկայութեան, խորապէս հայրենասէր, բազմեռանդ ու նոյն տուն հեղինակութեան տէր անձ մը եղած է Ա-

ւետիսեան, ինչպէս միշտ եղած են ու կ'ըլլան իրենց ստեղծագործ ուժերուն վստահ խառնուածքները:

Այս քանի մը տողերուն հետ, ի յարգանս իր յիշատակին, կու տանք «Արուեստագէտի մը աշխատանոցը» անուն իր մէկ իւզանկարին պատճէնը, ինչպէս նաեւ զինք իր աշխատանոցին մէջ պատկերացընող յուսանկարը, որ առնուած է Յարութիւն Չուլաքեանի «Արարատ» խորագրուած ալպոմէն:



Լուսանկար՝ Յ. Չուլաքեանի

ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ Բ.

Nous croyons à notre singularité absolue, et que chaque nation est irremplaçable.
François Mauriac

Մեր նստորգ թիւին մէջ պատիկ գրութեան մը նիւթ գործուած էինք այս բազմաշարաւոր բառք՝ — անփոխարինելի, որոշ օրինակներու լոյսին սակ փորձելով պարզել անոր իրական տարողութիւնը: Իրենց անշուք անձերուն ժողովուրդը հով մը առաւ ժողովով զանփոխարինելի մարդ չկա՞յ պնդողներուն հակադրաբար զիրար զօնելիւր ոք անփոխարինելի է՞ ճշմարտութեան յանգելէ ետք, պատահաբար մեր աչքին զպատարանաւ Մօրիաքի մէկ հին ջրնիքը, ուր աւելի ընդարձակելով խնդրոյ առարկայ բառին իմաստը, անուանի զբազմազան կը հաստատէր, որ՝ «Լ'Éthé կը հաւատամք մեր բացարձակ եզակիութեան, եւ քե՛ր՝ իրաւամշիւր ազգ անփոխարինելի է»:

Եթէ ազգ մը անփոխարինելի է, լին կրնար անփոխարինելի չլլալ հասէ զայն բազկացեօզ անհասնելը, որոնց ներքին ընդունակութիւնները կը ծին ու կը ծաղկին արեան ու մշակութային մասնաւորող ժառանգութեան մը եզատասով եւ կը կազմեն տարբերել յատկանշելը ազգին, որ անփոխարինելի է՞:

Եթէ մարդ մը կարենար փոխարինել ուրիշ մարդ մը եւ մարդերու այս խումբը ի վիճակի ըլլար փոխարինել ուրիշ խումբ մը, այդ պարագային ըստովին անիմաստ պետի զատնար օւժացումին, կամ ձուլման հեռանկարներով կազմուած քաղաքական վարքագծերուն զէժ մզուած պայքարը, ու անիմաստ՝ զոնցութիւնները յանուն ազատութեան, որուն առաջին ընծան իւրաքանչիւր անհատի անհասական կարծիքութիւնը ծաղկեցնելու եւ զայն անփոխարինելի դարձնելու բեզուս հնարաւորութիւնն է:

Որովհետեւ, եթէ զիրար փոխարինել մը կայ եւ կայ փոխարինելի մը, եթէ անփոխարինելիութիւնը զերազայն նպատակներէն մէկը լըյլար մարդուն ու կեանքը որք իրիկուն ընելու քաղաքացի ըլլար միայն, այն սահն մ'չ պայքարի անհրաժեշտութիւնը կը պայտուէր, ոչ ալ անհասական թէ հաւաքական երազի մը ընծայարեւուելու հրամայական:

Գնատկից կամ անգիտակից այս պայտուիմ է, որ ազգերը կը մզեն իրենց ազգային պայքարը, ներքեանգծեր պաշտպանելու ու ցայտեցնելու համար, իրենց անփոխարինելի զամբարելու համար արեւելեան զանձերուն անփոխարինելի իսկութեան վրայ:

Կեանքը զիրեն կարենէ առաւ հոգեկան թուեռարումներու միայն կը ծառայէ զանփոխարինելի մարդ չկա՞յ յանկերպը եւ զուր կը բանայ զառարկածիտ յունակութիւններու:

Միջնդեռ պատասխանատու մարդոց, ըսենք՝ ուսուցչներու, խմբագիրներու, զեկամար անձերու ձօն կարգախօսը պէտք է ըլլայ ճիշդ հակառակը, զիրենք մտիկ ընողներուն մէջ անփոխարինելիութեան մակարդակ մը նուաճել առաւ կերպը:

Ինչ կը վերաբերի գրականութեան, անփոխարինելիութիւնը արգէն առաջին պայմանն է հոն: Ո՞վ բան մը արժան է կամ կրնայ արժէլ, եթէ բնական բերումով կամ տառապանքով մտք չէ ձգած, հիշ լընէր մեզք մզելու անփոխարինելիութեան, անկրկնելիութեան ամուր յատկանշներ:

Ժողովուրդ մը արժան մէն է, որքան շատ են զինք բազկացեօզ անփոխարինելի անհասնելը:

Հ. Բ. Ը. Մ. Ի ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՄԱՐ

Ա.— ՍԵՌԵՐՆ ԵՆ.—

- 1.— Պատմաածժներու կամ նորավայերու հաւաքածոյ մը, կամ՝ վէպ մը՝ 200 էջ եւ աւելի:
- 2.— Բանաստեղծութեան հաւաքածոյ մը՝ 100 էջ եւ աւելի:
- 3.— Թատերախաղ մը, կամ՝ թատերախաղերու հաւաքածոյ մը՝ 75 էջ եւ աւելի:

Բ.— ՄՐՑԱՆԱԿԻՆ ՊԱՐԳԵՆԵՐԸ.—

ա.— Դրամական պարգեւներ

- 1.— Պատմաածժ կամ վէպ՝ 1.500 տոլար
- 2.— Բանաստեղծութիւն՝ 1.500 տոլար
- 3.— Թատերախաղ՝ 750 տոլար

բ.— Երկին հրատարակումը

Անկախ դրամական պարգեւներէն՝ մրցանակի արժանացած երկերը կը հրատարակուին ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ծախքերով եւ ամօր կողմէ: 150 օրինակ գիրք կը տրամադրուի հեղինակին, որուն կը պատկանի նաեւ վերահրատարակութեան ամէն իրաւունք:

Գ.— ՄՐՑԱՆԱԿԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.—

- 1.— Լեզուն է հայերէնը:
- 2.— Փափաճելի է, որ երկերուն նիւթը կապ ունենայ մեր մշակոյթին հետ:
- 3.— Ձեռագիրները պարտին ըլլալ մէկ օրինակ, մեքենագրուած եւ ընթեռնելի:
- 4.— Ձեռագիրները պէտք է մեր գրասենեակը հասած ըլլան, ամէնէն ուշը մինչեւ Դեկտեմբեր 31, 1975, ապահովագրեալ:
- 5.— Մրցանակ սխտի ստանան առաջնութեան արժանացողները միայն, եւ միայն անոնց անունները սխտի ծանուցուին:
- 6.— Ձեռագիրները չեն վերադարձուիր, եթէ մասնաւոր խնդրանք չներկայացուի հեղինակներուն կողմէ: Ետ դրկուելու պարագային իսկ վարչաբիւրօ ինքզինքն պատասխանատու կը նկատէ անոնց նամակատուն յանձնումին միայն եւ ո՛չ տեղ հասնելուն:
- 7.— Դատական կազմին անդամներն են՝
 ՊԱՏՄՈՒՆԱԾՔ — ՎԷՊ՝ Սիմոն Սիմոնեան, Պօզոս Սնապեան՝ Պէյրութէն, եւ Միշա Գիւտեան՝ Լոնտոնէն:
 ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ՝ Վահէ-Վահեան՝ Պէյրութէն, Տոբ. Գէորգ Կրկարեան՝ Երեւանէն, այժմ՝ Տիբրաշ, եւ Երուանդ Ազատեան՝ Տիբրաշէն:
 ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ՝ Պերն Ֆազեան՝ Պէյրութէն, Տոբ. Բարգէն Փափազեան՝ Պէյրութէն, եւ Յովհաննէս Փիլիկեան՝ Լոնտոնէն:
- 8.— Արդիւնքները սխտի ծանուցուին 1976ի Ապրիլին:
- 9.— Առաջումները կատարել այս հասցէին.— Հ.Բ.Ը.Մ.Ի Ա. Մանուկեան Գրքական Մրցանակ, 22001 Նորք-նուսրբըն Հայուէյ, Սաութ-Փիլս, Միչիգըն, 48075, ԱՄՆ.:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ
ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

«Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի նպատակը՝ ձեռագիր գործերու, կամ զէթ դիրքի ձեւով լրջս շտեմած երկերու դնահատումն է, զանոնք մրցանակի եւ հրատարակութեան արժանացնելով կամ միայն հրատարակելով:

Մրցանակին կրնան մասնակցել բոլոր հայ մտաւորականները, Հայաստանի թէ Սփիւռքի, առանց դաւանական կամ դադափարական խտրութեան, ներկայացնելով հայերէն կամ օտար լեզուով իրենց այն հեղինակութիւնները, որոնք կը վերաբերին հայկական մշակութիւն, — գրական, իմաստասիրական, պոետական, եկեղեցագիտական, բանասիրական եւ յարակից այլ կալուածներու մէջ:

Մրցանակին համար դրուած կամ պատրաստուած երկերը պէտք է յղուին Դատակազմին՝ մաքուր, դիւրընթեռնելի ձեւազրոյցով, նախընտրաբար մեքենագրուած, եւ ըստ կարելւոյն երեք օրինակով, մինչեւ Սեպտեմբեր ամսոյն վերջը:

Մրցանակը կը տրուի տարին մէկ անգամ եւ կը յայտարարուի Յունւար ամսոյն մէջ:

Մրցանակի տիրացած հեղինակը, անկախաբար իր գործին տպագրութենէն (նուազագոյն 1000 օրինակ), կը ստանայ 1.000 լ. ոսկիի պարգև մը: Դատակազմը կրնայ գործ մը համարել միայն հրատարակութեան արժանի, առանց նիւթական յուսկիտայ պարգևելի:

Մրցանակին արժանի համարուած կամ պարգապէս հրատարակուած գործերու հեղինակները կը ստանան 500 (հինգ հարիւր) օրինակ իրենց գործին հրատարակութենէն, զոր կրնան վաճառել, միշտ պահելով Դատակազմի կողմէ նշանակուած գինը:

1975ի գրական մրցանակին մասնակցութիւնը կ'ընդունուի այս յայտարարութեան հրատարակութեան թուականէն սկսեալ:



«Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի Դատակազմը, անցնող տարուան (1974) ընթացքին ստացած ձեռագիրներէն հրատարակութեան արժանի դատ. բանաստեղծ Արմանտի «ՇՔԵՂ ՄԵՐԿՈՒԹԻՒՆ» զերթուածներու հատորը, ինչպէս նաեւ որոշեց հրատարակել մեծանուն գրողէս Կոստան Զարեանի «ԱՆՑՈՐԴ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ», «ՔԱՂԱՔՆԵՐ» եւ «ԱՐԵՒՄՈՒՏՔ» գործերը, ստուար հատորի մը մէջ:

Վերոյիշեալ երկու դիրքերը լրջս պիտի տեսնեն, կարելի փութով, 1975 տարուան ընթացքին:

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ
ԴԱՏԱԿԱԶՄ

18 Փետրուար 1975
ԱԵՔ-Իլիսս

ADRESSE
PRIX LITTÉRAIRE KEVORK MELIDINETZI
Catholicosssat Arménien
Antélias -- Liban



digitised by

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

پاكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك فزانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԴԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵԱՍԻ

•

ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՍԵԼԻՄԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունի հասցե

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban